



Համայնքների ֆինանսիստների միավորում
Communities Finance Officers Association



«Հանրային մասնակցություն տեղական
ինքնակառավարմանը» ծրագիր
“Civic Engagement in Local Governance” Program

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

LOCAL SELF-GOVERNMENT IN ARMENIA

Գիրք 9
2016
Book 9





Համայնքների
ֆինանսիստների միավորում



ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(2016թ.)

Գիրք 9

Խմբագրությամբ՝ տեխն. գիտ. թեկնածու
Վահրամ Շահբաղյանի

ԵՐԵՎԱՆ



«Վան Արյան»

2017

*Սույն գիրքը հրատարակվել է Ամերիկայի
ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային
զարգացման գործակալության (ԱՄՆ ՄՁԳ) միջոցով:
Այսօրեղ արտահայտված տեսակետները միմիայն
հեղինակներին են և պարտադիր չէ, որ
արտահայտեն ԱՄՆ ՄՁԳ կամ ԱՄՆ կառավարության
տեսակետները:*

*Սույն գիրքը հեղինակները նվիրում են իրենց գործընկերոջ,
«Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (1996-2015թթ.)»
8 գրքերի համահեղինակ և խմբագիր,
լուսահոգի **Դավիթ Թումանյանի** հիշատակին:*

ՀՏԴ 342.25(479.25)
ԳՄԴ 67.401 (5Հ)
Տ 300

S 300 Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2016թ.),
Գիրք 9/խմբ. Վահրամ Շահրազյանի - Եր.: 2017, 232 էջ:

*Գիրքը պարունակում է Հայաստանի տեղական ինքնակառավարման վիճակի մշտա-
դիտարկման 2016 թվականի զեկույցը:*

*Գիրքը նախատեսված է ապակենտրոնացման և տեղական ինքնակառավարման բնա-
գավառներում քաղաքականություն մշակողների ու որոշումներ ընդունող պաշտոնյաների,
տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային ու քաղաքացիական հասա-
րակության կազմակերպությունների ներկայացուցիչների, այդ բնագավառներով հե-
տաքրքրվող հասարակության լայն խավերի համար:*

© Համայնքների ֆինանսիստների միավորում

ISBN 978-9939-70-217-9

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումների ցանկ	6
Առաջաբան	7
1. Տեղական ինքնակառավարման բարեփոխումների իրավական և ծրագրային գնահատումը	11
1.1. Տեղական ինքնակառավարման բարեփոխումների իրավական գնահատումը	11
1.2. Տեղական ինքնակառավարման բարեփոխումների ծրագրային գնահատումը	19
1.3. Արտաքին պարտավորությունների կատարումը	21
2. Վարչատարածքային բաժանումը և միջհամայնքային համագործակցությունը	23
2.1. Վարչատարածքային բաժանումը	25
2.2. Միջհամայնքային համագործակցություն	31
3. ՏԻՄ-երի ձևավորումը, լիազորությունները և գործունեությունը, քաղաքացիական հասարակության մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը	34
3.1. ՏԻՄ-երի ձևավորումը, լիազորությունները և գործունեությունը	34
3.2. Քաղաքացիական հասարակության մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը.....	40
4. Համայնքների սեփականությունը, զարգացման ծրագրերը և ֆինանսական անկախությունը.....	43
4.1. Համայնքների սեփականությունը	44
4.2. Համայնքների զարգացման ծրագրերը և բյուջետավարումը	47
4.3. Համայնքի բյուջեի եկամուտները.....	48
4.4. Պարտքի կառավարումը.....	53
4.5. Ֆինանսական հաշվետվողականությունը	53
5. ՏԻՄ-երի լիազորությունների և համայնքների ֆինանսական միջոցների համապատասխանությունը	56
6. Համայնքի խնդիրներին վարչական կառուցվածքների, մարդկային և տեղեկատվական ռեսուրսների համապատասխանությունը, միջազգային աջակցությունը.....	71
6.1. ՏԻՄ-երի և համայնքների աշխատակազմերի ընդհանուր կարողությունները.....	71
6.2. Համայնքային ծառայություն	76
6.3. Համայնքային ծառայողների վերապատրաստումը.....	80
6.4. Միջազգային աջակցությունը	82
7. Համայնքային ծառայությունների մատուցում.....	89
7.1. Համայնքի կողմից մատուցվող հանրային բնույթի ծառայություններ	89
7.2. Համայնքային (հանրային բնույթի) ծառայությունների կառավարում	101
8. Տեղական ինքնակառավարման տարեկան ինդեքսի գնահատման արդյունքները (2015թ. և 2016թ.).....	104
Եզրակացություններ և առաջարկություններ.....	109
Եզրակացություններ	109
Առաջարկություններ	116
Գրականություն	120
Հավելվածներ.....	122

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղյուսակ 1. Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանումը և բնակչությունը	24
Աղյուսակ 2. Գույքահարկի և հողի հարկի տվյալների բազաները համատեղ վարող կառույցները և առանձին համայնքները.....	33
Աղյուսակ 3. 2016-ին կայացած ՏԻՄ-երի ընտրությունների թիվն՝ ըստ մարզերի (առանց Գյումրի և Վանաձոր համայնքների)	35
Աղյուսակ 4. Գյումրի և Վանաձոր համայնքների ավագանիների ընտրությունների արդյունքները	36
Աղյուսակ 5. 2016թ. կայացած համայնքի ղեկավարի ուղղակի ընտրությունների արդյունքներով համայնքների ղեկավարների կուսակցական պատկանելությունը	38
Աղյուսակ 6. Համայնքի ղեկավարի լիազորությունների քանակական տվյալներն ըստ առանձին տեսակների և բնագավառների (2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ)	39
Աղյուսակ 7. ՀՀ համայնքների ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը, 2014-2016թթ.	45
Աղյուսակ 8. ՀՀ համայնքների ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը, 2014 – 2016թթ.	46
Աղյուսակ 9. ՀՀ համայնքների բյուջեների եկամուտների տեսակները և նրանց տեսակարար կշիռներն ընդհանուր եկամուտների մեջ, 2014-2016թթ.	50
Աղյուսակ 10. Երևանի բյուջեի եկամուտների տեսակարար կշիռները ՀՀ համայնքների բյուջեների ընդհանուր եկամուտների կազմում, 2016թ.	51
Աղյուսակ 11. Համայնքների բյուջեների եկամուտների պաշտոնական դրամաշնորհները, 2014-2016թթ.	52
Աղյուսակ 12. ՀՀ համայնքների ֆոնդային բյուջեների եկամուտները և Երևանի ֆոնդային բյուջեի եկամուտների տեսակարար կշիռը դրանց մեջ, 2016թ.	54
Աղյուսակ 13. Եվրամիության անդամ երկրների և Հայաստանի տեղական բյուջեների ծախսերի տեսակարար կշիռները հանրային ծախսերում և ՀՆԱ-ում.....	56
Աղյուսակ 14. ՀՀ համայնքների 2016թ. բյուջեների ընդհանուր եկամուտների, ծախսերի և հավելուրդի / պակասուրդի տարեկան հաստատված, ճշտված պլանները և փաստացի կատարումը	58
Աղյուսակ 15. ՀՀ համայնքների 2012-2016թթ. բյուջեների՝ բնակչության մեկ շնչին ընկնող եկամուտը և ծախսը (ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով)	60
Աղյուսակ 16. ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի և առանց Երևանի) և Երևանի 2016թ. բյուջեների փաստացի ծախսերն՝ ըստ գործառական դասակարգման	63
Աղյուսակ 17. ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի և առանց Երևանի) և Երևանի 2016թ. բյուջեների փաստացի ծախսերն՝ ըստ տնտեսագիտական դասակարգման ..	67
Աղյուսակ 18. Համայնքների ղեկավարների կրթության վերաբերյալ ցուցանիշները՝ ըստ մարզերի, 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	73

Աղյուսակ 19. Համայնքներում ՏԻՄ-երի և աշխատակազմերի գեներալային բաշխվածությունը՝ 2016թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ	74
Աղյուսակ 20. Երևանի քաղաքապետարանում և վարչական շրջաններում ՏԻՄ-երի և աշխատակազմերի գեներալային բաշխվածությունը՝ 2015 և 2016թթ.	75
Աղյուսակ 21. Համայնքային ծառայության պաշտոնների թիվը	78
Աղյուսակ 22. 2016թ-ի ընթացքում ատեստավորված համայնքային ծառայողների և թափուր պաշտոնների զբաղեցման համար հայտարարված ու կայացած մրցույթների թիվը	78
Աղյուսակ 23. ՀՀ համայնքների աշխատակազմերում համայնքային ծառայության պաշտոնների թվի տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվի կազմում՝ ըստ Երևան քաղաքի և ՀՀ մարզերի	79
Աղյուսակ 24. Վերապատրաստված համայնքային ծառայողների թիվը	81
Աղյուսակ 25. Համայնքների բյուջեներում ՏԻՄ-երի կողմից մատուցվող համայնքային ծառայությունների և ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերի հարաբերակցությունը	103
Աղյուսակ 26. ՏԻ տարեկան գնահատման արդյունքները՝ ըստ ՏԻ բնագավառների (ՏԻՏԻ, 2015թ. և 2016թ.)	106

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Գծապատկեր 1. Ուրբանիզացիայի մակարդակը և մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն Եվրոպայում, 2015	30
Գծապատկեր 2. ՀՀ համայնքների 2012-2016թթ. բյուջեների՝ բնակչության մեկ շնչին ընկնող փաստացի եկամուտը (ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով)	61
Գծապատկեր 3. ՀՀ համայնքների 2012-2016թթ. բյուջեների՝ բնակչության մեկ շնչին ընկնող փաստացի ծախսը (ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով)	62
Գծապատկեր 4. ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) 2016թ. բյուջեների փաստացի ծախսերի տեսակարար կշիռներն ընդհանուր ծախսերում (ըստ գործառական դասակարգման)	65
Գծապատկեր 5. ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) 2012-2016թթ. բյուջեների ընթացիկ և կապիտալ ծախսերի տեսակարար կշիռներն ընդհանուր ծախսերում	69
Գծապատկեր 6. Երևան համայնքի 2012-2016թթ. բյուջեների ընթացիկ և կապիտալ ծախսերի տեսակարար կշիռներն ընդհանուր ծախսերում	69

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն
ԱԺ	Ազգային Ժողով
ՏԿԶՆ	Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԵՄ	Եվրոպական միություն
ԵՀԲ	Եվրոպական հարևանության քաղաքականություն
ՀՖՄ ՀԿ	«Համայնքների ֆինանսիստների միավորում» հասարակական կազմակերպություն
ՀՈԿԿ	Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն
ՏՀԶԿԿ ՀԿ	«Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոն» հասարակական կազմակերպություն
ՀՀՄ	Հայաստանի համայնքների միություն
ԲՀԿ	«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն
ՀՀԿ	Հայաստանի հանրապետական կուսակցություն
ՀՅԴ	Հայ յեղափոխական դաշնակցություն
ՏԻ	Տեղական ինքնակառավարում
ՏԻՄ-եր	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՀՈԱԿ	Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկություններ
ՀԿՏՀ	Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգ
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՔՀՄՀ	Քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածներ
ՀՀԶԾ	Համայնքի հնգամյա զարգացման ծրագիր

ԱՌԱՋԱԲԱՆ

ՀՖՄ ՀԿ-ն, ՀՀ ՏԻ համակարգի ներդրումից ի վեր, իրականացնում է մոնիթորինգ ՀՀ ՏԻ բարեփոխումների ընթացքի նկատմամբ: Սկսած 2004 թվականից մինչև հիմա՝ ՀՖՄ-ն այդ ուղղությամբ հրատարակել է ութ գիրք, որոնցում ներառվել են մեկ կամ մի քանի տարիների զեկույցներ և տրվել են ՏԻ բարեփոխումների ընթացքի տարեկան վերլուծությունները և գնահատականները, ինչպես նաև արվել են համապատասխան եզրակացություններ ու հետագա տարիներին բարեփոխումների շարունակմանը վերաբերող մի շարք առաջարկություններ:

ՏԻ յուրաքանչյուր տարվա բարեփոխումների հետազոտումն ու գնահատումը կատարվել է ՀՖՄ փորձագիտական թիմի կողմից մշակված մեթոդաբանության հիման վրա: Բարեփոխումների վերլուծության և գնահատման համար հիմք են ընդունվել ՏԻ բնագավառի ՀՀ օրենսդրության, ՀՀ կառավարության ծրագրերի՝ ՏԻ-անը վերաբերող դրույթների կատարումը, ՏԻՄ-երի գործունեության արդյունքները, ՏԻ համակարգի վիճակը բնութագրող ֆինանսական ու ոչ ֆինանսական ցուցանիշները և միջազգային կազմակերպություններում Հայաստանի ստանձնած՝ ՏԻ-անը վերաբերող պարտավորությունների կատարումը:

Հրատարակված «Տեղական ինքնակառավարումը Հայաստանում» 8 գրքերի բովանդակությունը կազմվել է ՏԻ առանձին 7 ուղղությունների վերաբերյալ ՀՖՄ և անկախ փորձագետների կողմից կատարված ուսումնասիրությունների ու վերլուծությունների հիման վրա՝ տարեկան զեկույցի առանձին բաժին-հոդվածների տեսքով: Համաձայն մեթոդաբանության՝ դրանք բոլորն էլ կազմվել են նույն ձևաչափով և պարունակել են նաև ՀՀ ՏԻ բարեփոխումների գնահատականներն՝ ըստ ՏԻ առանձին բնագավառների. օրենսդրություն և ծրագրային գործունեություն, վարչատարածքային բաժանում և միջհամայնքային համագործակցություն, համայնքային սեփականություն, ֆինանսներ, ՏԻՄ-երի ընտրություններ, լիազորություններ և գործունեություն, տեղական ժողովրդավարություն, վարչական կառուցվածքներ, համայնքի կառավարում և համայնքային (հանրային բնույթի) ծառայությունների մատուցում:

Բոլոր 8 գրքերի բովանդակության ընդհանուր մասնագիտական խմբագրման աշխատանքներն իրականացվել է ՀՖՄ փոխնախագահ, վարչության անդամ, տնտ. գիտ. թեկնածու, երջանկահիշատակ Դավիթ Թումանյանի կողմից:

Դ. Թումանյանի մասնագիտական խորը գիտելիքների, հետևողականության ու սկզբունքայնության շնորհիվ էր, որ անցած տարիներին մշտապես հաջողվել է բարձր պահել ՏԻ տարեկան զեկույցների գիտական ու մատչելիության մակարդակը՝ ապահովելով դրանցից օգտվողների բավականին լայն շրջանակներ՝ ՏԻ ոլորտի պաշտոնյաներից ու աշխատակիցներից մինչև պետական հատվածի պատասխանատուներ ու աշխատակիցներ, բուհերի ուսանողներից ու ասպիրանտներից մինչև կրթության պատասխանատուներ ու դասախոսներ, ՏԻ ոլորտի տեղական կազմակերպություններից ու փորձագետներից մինչև միջազգային կազմակերպություններ ու փորձագետներ: Կարելի է վստահորեն պնդել, որ անցած տարիների ընթացքում ձևավորվել է այս գրքի ընթերցողների կայուն բանակ և այն յուրաքանչյուր տարի պահանջված ու սպասված է վերջիններիս կողմից:

ՀՀ ՏԻ բարեփոխումների վերաբերյալ հերթական տարեկան զեկույցը պատրաստելիս մեր խնդիրն ենք համարել՝ պահպանել Դ. Թումանյանի կողմից ձևավորված լավագույն ավանդույթները և հնարավորինս բարձրացնել զեկույցների որակը՝ հարստացնելով

դրանց բովանդակությունը և գետեղելով այնտեղ Հայաստանում ՏԻ բարեփոխումներին ու զարգացումներին համընթաց տեղեկատվություն:

Սույն գիրքը ՀՀ ՏԻ բարեփոխումների վերաբերյալ ՀՖՄ-ի արդեն իններորդ հրատարակությունն է: Այն նվիրված է ՀՀ ՏԻ համակարգում 2016 թվականի ընթացքում իրականացված բարեփոխումների հետազոտմանը և լուսաբանմանը՝ վեր հանելով ՏԻ ոլորտում առկա հիմնախնդիրները, հանգեցնելով որոշակի եզրակացությունների և ներկայացնելով այդ հիմնախնդիրների լուծմանն ու բարեփոխումների շարունակմանն ուղղված առաջարկություններ:

Այս հրատարակությունն իր նախորդներից տարբերվում է նրանով, որ առաջին անգամ Հայաստանում փորձ է արվել, տարեկան զեկույցի պատրաստման աշխատանքների շրջանակներում փորձագետների կողմից կատարված վերլուծությունների հիման վրա, ՏԻ բարեփոխումներին տարեկան կտրվածքով տալ նաև թվային գնահատական՝ հաշվարկելով Հայաստանի ՏԻ տարեկան ինդեքս (ՏԻՏԻ՝ համաթվի տեսքով) և դրանով հնարավորություն ստեղծելով հետազոտելու ՀՀ ՏԻ բարեփոխումների դինամիկան տարիների ընթացքում ու համեմատություններ կատարելու ՏԻ առանձին տարիների բարեփոխումների ընթացքի և գնահատականների միջև:

Այդ նպատակով ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ իրականացվող «ՀամաՏեղ» ծրագրի շրջանակներում, նախ, որպես ՏԻ բարեփոխումների վերաբերյալ տարեկան զեկույցների մշակման մեթոդաբանությանը լրացում, ՀՖՄ ՀԿ-ի և ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամի կողմից մշակվեց Հայաստանի ՏԻ բարեփոխումների տարեկան գնահատման և ՏԻՏԻ հաշվարկման մեթոդաբանություն՝ ուսումնասիրելով այդ բնագավառում միջազգային փորձը և այն հնարավորինս տեղայնացնելով ՀՀ ՏԻ համակարգում:

Համաձայն այդ մեթոդաբանության՝ Հայաստանի ՏԻՏԻ-ի հաշվարկումը հիմնվում է ՏԻ ընտրված 5 բնագավառների (ուղղությունների), 20 գործառույթների և 52 ցուցիչների վրա: Վերջիններիս ընտրությունը կատարվել է՝ հիմք ընդունելով դրանց համապատասխանությունը համայնքի պատշաճ կառավարման 12 սկզբունքներին և հաշվի առնելով ՀՀ ՏԻ համակարգի առանձնահատկությունները:

ՏԻ բարեփոխումների վերաբերյալ նախորդ՝ 2015թ. տարեկան զեկույցի հետ կապ ապահովելու նպատակով ՀՀ ՏԻՏԻ-ն հաշվարկվել է 2015 և 2016 թվականների համար՝ հնարավորություն տալով համեմատելու 2 տարիների ընթացքում ՏԻ համակարգում տեղի ունեցած փոփոխությունները՝ ըստ առանձին բնագավառների և գործառույթների: Սույն զեկույցում ներկայացվում է ՀՀ ՏԻ գնահատման և ՏԻՏԻ հաշվարկման արդյունքների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը:

Վահրամ Շահբազյան

ԶԵԿՈՒՅՑ

**Տեղական ինքնակառավարումը Հայաստանում
(2016թ.)**

Զեկույցը պատրաստել են ՀՖՄ-ի փորձագիտական խմբի անդամներ՝

**Վահրամ Շահբազյանը (խմբի ղեկավար), Վահագն Պետրոսյանը,
Դավիթ Մարգարյանը, Քնարիկ Այվազովան (Արաբյանը), Լևոն
Թումանյանը, Ռուբեն Հայրապետյանը և Վահե Սարգսյանը**

1. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

1.1. Տեղական ինքնակառավարման բարեփոխումների իրավական գնահատումը

Սահմանադրական դրույթների օրենսդրական արտացոլումը

2015 թվականի դեկտեմբերի 6-ին համաժողովրդական հանրաքվեի միջոցով ընդունված ՀՀ Սահմանադրությանը համահունչ՝ 2016թ. ապրիլ ամսից սկսվեց մշակվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ նոր խմբագրությամբ օրենքի նախագիծը, որի մշակման և նախագծման աշխատանքները ավարտվեցին 2016թ. նոյեմբեր ամսին: Նախագծի շուրջ կազմակերպված տարբեր հանրային քննարկումների, ինչպես նաև խորհրդարանական լսումների արդյունքում այն 2016թ. դեկտեմբերի 16-ին ընդունվեց ՀՀ Ազգային ժողովի կողմից և ուժի մեջ մտավ 2017թ. հունվարի 1-ից:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված էր ՀՀ փոփոխված Սահմանադրության 9-րդ գլխում տեղ գտած իրավակարգավորումների և, ընդհանուր առմամբ, այդ գլխով սահմանված հոդվածների տրամաբանության հետ համապատասխանեցմամբ:

ՀՀ Սահմանադրության 9-րդ գլխի իրավակարգավորող դրույթներով փոփոխվել են մի շարք հասկացություններ և իրավական մեխանիզմներ, մասնավորապես՝ ՏԻ-ան և համայնքի հասկացությունները, ՏԻՄ-երին տրված լիազորությունները, այդ լիազորությունների իրականացման նկատմամբ հսկողության ձևերն ու մեխանիզմները, միջհամայնքային միավորումների ստեղծման եղանակներն ու մեթոդները, դրանց իրավական կարգավիճակը և որպես նոր ինստիտուցիոնալ կարգավորումներ՝ համայնքի համար պարտադիր և կամավոր խնդիրների սահմանումը:

2016թ-ին էլ համայնքների ավագանիներին հնարավորություն չի տրվել՝ օրենքով սահմանված դրույթաչափերի շրջանակներում սահմանելու տեղական հարկեր:

Համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացման կարգերը (կամավոր խնդիրների լուծման նպատակով սահմանվող և պետության կողմից պատվիրակված լիազորությունների մասով) ավագանիների և համապատասխանաբար կառավարության որոշումներով սահմանելը 2016թ-ին զարգացումներ չի ունեցել:

2016թ-ին ՀՀ ՏԿԶԵ-ի կողմից կազմակերպվեց և իրականացվեց համայնքների խոշորացման լայնածավալ գործընթաց: Համայնքների խոշորացման իրականացման ընթացքում լիարժեքորեն չի կիրառվել ՀՀ Սահմանադրության 190-րդ հոդվածի դրույթները, որով հստակ սահմանվում է, որ Ազգային ժողովը համապատասխան օրենքն ընդունելիս պարտավոր է լսել համայնքների կարծիքը: Այս Սահմանադրական կարգավորման մասով, ոչ «Տեղական ինքնակառավարման մասին» և ոչ էլ «Տեղական

հանրաքվեի մասին» ՀՀ օրենքներում որևէ գործիքակազմ չի սահմանվել, և համայնքների խոշորացման գործընթացը իրականացվել է՝ ընդամենը հիմքում ունենալով ՀՀ արդարադատության նախարարության կողմից տրված պաշտոնական պարզաբանումն առ այն, որ համայնքների կարծիքը կարելի է լսել խորհրդարանական լսումներ անցկացնելու միջոցով:

ՀՀ Սահմանադրության 189-րդ հոդվածի կիրարկման հետ կապված՝ դեռևս չկա ընդունված համապատասխան նորմատիվ իրավական ակտ: Խոսքը վերաբերում է միջհամայնքային միավորումներին, որոնց հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվելու են «Միջհամայնքային միավորումների մասին» ՀՀ օրենքով: Սակայն նշված օրենքի նախագիծը դեռևս մշակման և նախագծման փուլում է, և հավանական է, որ այն ընդունվի 2017թ. ընթացքում:

2016թ-ին չի ընդունվել նաև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով (հոդված 30) նախատեսված համայնքային արժեթղթերի մասին օրենքը:

Տեղական ինքնակառավարմանը վերաբերող օրենքների փոփոխությունները և լրացումները

2016 թվականին ընդունվել են ՏԻ-անը վերաբերող հետևյալ օրենքները՝

1. «Հայաստանի Հանրապետության վարչապարածքային բաժանման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, ընդունված 2016թ. հունիսի 17-ին, կարգավորեց 2016թ-ին ՀՀ կառավարության կողմից նախաձեռնած համայնքների խոշորացման հերթական, սակայն արդեն իսկ խոշորածավալ գործընթացի իրականացումը: Օրենքի ընդունմամբ ՀՀ թվով 7 մարզեր ընդգրկող 118 համայնքներ (135 բնակավայրեր) միավորվեցին թվով 15 խոշորացված համայնքային փնջերում:

2. «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ նոր օրենքը, ինչպես նաև նույն օրենսդրական փաթեթում ներառված՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, ընդունված 2016թ. հոկտեմբերի 20-ին, սահմանեցին որոշակի իրավակիրառ փոփոխություններ: «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ նոր օրենքով ամրագրվեցին ֆինանսական համահարթեցման սկզբունքները և կարգավորվեց համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների հաշվարկման և հատկացման կարգերը: «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով կատարվեցին փոփոխություններ, ըստ որոնց՝ ՏԻՄ-երին տրամադրվում է վերջիններիս համար պարտադիր բնույթ կրող մեթոդական ցուցումներ առանձին համայնքների ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների հաշվարկման համար, ինչպես նաև ՏԻՄ-երի կողմից հաշվառվող ելակետային տվյալների կազմի, դրանց հաշվարկման և ներկայացման կար-

գի ու ժամկետների մասին: Ելնելով ՀՀ ՏԻ առանձնահատկություններից և հաշվի առնելով ֆինանսական համահարթեցման նախորդ տարիների փորձը՝ առաջարկվող ֆինանսական համահարթեցման նոր համակարգում դոտացիաների գումարները հաշվարկելու համար պետական լիազորված մարմին ճանաչվեց ՀՀ ՏԿՁՆ-ն: «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով դոտացիայի հաշվարկման բանաձևերի հիմքում դրվեցին հետևյալ լրացուցիչ պահանջները հաշվի առնելու վերաբերյալ կարգավորումներ՝

- ✓ Պետական տուրքերի հաշվարկային գումարի ցուցանիշ՝ հաշվարկվող տարվան նախորդող երկրորդ տարվա փաստացի ցուցանիշ:
- ✓ Համայնքի կենտրոնի հեռավորությունը մարզկենտրոնից, նախկին շրջկենտրոնից և մայրաքաղաքից:
- ✓ Համայնքի բարձրությունը ծովի մակերևույթից՝ համայնքի կենտրոնի բարձրությունն է ծովի մակերևույթից:
- ✓ Համայնքի 0-16 տարեկան և կենսաթոշակային տարիքի բնակչության թիվ՝ համայնքի 0-16 տարեկան և կենսաթոշակային տարիքի բնակչության թիվն է տվյալ համայնքի տարածքում, հաշվարկվող տարվան նախորդող տարվա տարեսկզբի դրությամբ՝ հաշվառված բնակչության ընդհանուր թվի մեջ:
- ✓ Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի թիվ՝ քանի որ ՀՀ-ում կան փոքրաթիվ բնակչությամբ շատ համայնքներ, որոնք, նույնիսկ մեկ շնչին ընկնող բյուջետային ապահովության բարձր մակարդակի պայմաններում, չունեն բավարար ֆինանսական միջոցներ՝ պարտադիր խնդիրների լուծման նպատակով սահմանված սեփական լիազորությունների իրականացման համար, անհրաժեշտ է այդ համայնքներին համահարթեցման դոտացիաների կազմում նախատեսել ֆինանսական ուղղակի համալրման գումարներ:

«Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի ամբողջ ծավալով ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանվեց 2019թ. հունվարի 1-ը, 2019թ. բյուջետային տարվա համար ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվարկների կատարման մասով, իսկ ֆինանսական համահարթեցման դոտացիաների հատկացման մասով՝ 2020թ. հունվարի 1-ից:

Օրենքի անցումային դրույթներով սահմանվեց, որ 2017, 2018 և 2019 թվականների համար՝

- յուրաքանչյուր համայնքի դոտացիայի հաշվարկի համար, որպես բազային անփոփոխելի գումար, համարվելու է 2016թ-ին հատկացված դոտացիան,
- վարչատարածքային բարեփոխումների արդյունքում ձևավորված յուրաքանչյուր նոր բազմաբնակավայր համայնքի դոտացիայի հաշվարկի համար, որպես բազային անփոփոխելի գումար, համարվելու է այդ համայնքի կազմի մեջ ընդգրկված նախկին համայնքների 2016թ-ին հատկացված դոտացիաների հանրագումարը:

3. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ նոր խմբագրությամբ օրենքը

նախատեսում է հետևյալ հիմնական փոփոխությունները՝

- ՏԻ-ան, համայնքի և նրա բնակիչների վերաբերյալ նոր հասկացությունների սահմանում՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխան.
- ՏԻ-ան հիմնարար սկզբունքների համապատասխանեցում Եվրոպական խարտիայի պահանջներին և միջազգային փորձին.
- Համայնքի խնդիրների և ՏԻՄ-երի լիազորությունների ընդհանուր բնութագրի սահմանում.
- Համայնքի պարտադիր խնդիրների օրենքով սահմանում՝ ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածին համահունչ.
- Բնակիչների մասնակցությունը ՏԻ-անը, մասնավորապես՝
 - 1) ՏԻ-անը քաղաքացիական նախաձեռնությունների միջոցով մասնակցելու հնարավորությունը,
 - 2) ՏԻՄ-երի գործունեության հրապարակայնության բարելավումը,
 - 3) հանրային քննարկումներ անցկացնելու որոշակի չափանիշներ ու պայմաններ, որոնց մանրամասն ընթացակարգերը սահմանելու է համայնքի ավագանին,
 - 4) 3000 և ավելի բնակիչ ունեցող համայնքների համար սահմանվել է պարտադիր ինտերնետային պաշտոնական կայք ունենալու պարտավորություն:
- Համայնքի ավագանու ինստիտուտի և նրա գործունեության հետ կապված լրացուցիչ հստակեցումներ և լրացումներ, մասնավորապես՝
 - 1) ավագանու 9 և ավելի անդամ ունեցող համայնքում ավագանին ստեղծում է մշտական կամ, ըստ անհրաժեշտության, ժամանակավոր հանձնաժողովներ, իսկ ավագանու մինչև 9 անդամ ունեցող համայնքում ավագանին կարող է ստեղծել այդ հանձնաժողովները.
 - 2) ավագանու հանձնաժողովների ձևավորման կարգը սահմանվում է ավագանու կողմից.
 - 3) եթե ավագանու նիստին հարցեր են ներկայացնում համայնքի ղեկավարը, ավագանու անդամը կամ բնակավայրի վարչական ղեկավարը, ապա, որոշման նախագծից բացի, պետք է կցվեն նաև նախագծի ընդունման հիմնավորումը, համայնքի բյուջեի վրա ազդեցության մասին տեղեկանքը և նախագծի վերաբերյալ հանրային քննարկումների հետևանքով ստացված առաջարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման պատճառների վերաբերյալ.
 - 4) ավագանու 9 և ավելի անդամ ունեցող համայնքի ավագանու նիստի օրակարգում ընդգրկվող հարցերը պետք է նախապես լսվեն ավագանու հանձնաժողովներից որևէ մեկում.
 - 5) ավագանու նիստերի արձանագրությունները մեկշաբաթյա ժամկետում տեղադրվում են համայնքի պաշտոնական ինտերնետային կայքում.
 - 6) 10000 և ավելի բնակիչ ունեցող համայնքներում ավագանու դռնբաց նիստերը առցանց հեռարձակվում են համայնքի պաշտոնական ինտերնետային կայքում.

7) ավագանու անդամը իրավունք ունի համայնքի ղեկավարից պահանջել և ստանալ նրա, աշխատակազմի, համայնքային ենթակայության կազմակերպությունների, ինչպես նաև բնակավայրի վարչական ղեկավարի գործունեության վերաբերյալ տեղեկատվություն:

- Բազմաբնակավայր համայնքի բնակավայրի վարչական ներկայացուցչի հաստիքը վերանվանվեց «վարչական ղեկավար», որի առկայությունը համայնքի բոլոր բնակավայրերի համար սահմանվեց պարտադիր:
- Վարչական ղեկավարին համայնքի ավագանու նիստի մասնակցության և օրակարգում հարց ներկայացնելու հնարավորության ընձեռում:
- Համայնքի ղեկավարի՝ պարտադիր խնդիրների լուծման նպատակով սեփական լիազորությունների հստակ սահմանում:
- Համայնքի ղեկավարի ոլորտային լիազորությունների բովանդակության հստակեցում և տարանջատում՝ սեփականի և պետության կողմից պատվիրակվածի միջև, նոր լիազորությունների սահմանում:
- Մինչ 2017թ. հունվարի 1-ը գործող օրենքի կամավոր բոլոր լիազորությունները ճանաչվեցին ուժը կորցրած, իսկ կամավոր խնդիրների և դրանց լուծման համար սահմանվող՝ համայնքի ղեկավարի սեփական լիազորությունների սահմանումը պատվիրակվեց համայնքի ավագանուն:
- Այլ իրավական ակտերով ՏԻՄ-երի համար սահմանված բոլոր լիազորությունները՝ բացառությամբ պետության կողմից պատվիրակված լիազորությունների, ՏԻՄ-երն իրականացնելու են որպես սեփական լիազորություններ:
- Երևանի օրինակով, սահմանվել է համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքների պարտադիր բարեկարգում իրականացնելու պարտավորություն համապատասխան սեփականատերերի կամ օգտագործողների համար:
- Բացի ավագանու որոշումները յոթնօրյա ժամկետում մարզպետարան առաքելու պարտավորությունից՝ համայնքի աշխատակազմի վրա դրվեց նաև նույն ժամկետում համայնքի ղեկավարի որոշումները ևս առաքելու պարտականությունը:
- Համայնքի բյուջեի վերաբերյալ գլխի համապատասխանեցում «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքին:
- Մարզպետի և կառավարության կողմից համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու իրավունքի դադարեցում:
- Վեց ամիս անընդմեջ ավագանու նիստ չիրավիրելու դեպքում, համայնքի ղեկավարի լիազորությունների վաղաժամկետ դադարեցում ՀՀ կառավարության կողմից՝ լիազոր պետական մարմնի ներկայացմամբ:
- ՏԻՄ-երի լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության մեխանիզմների փոփոխություններ:
- Միջհամայնքային միավորումների էության և միավորում կազմելու իրավունքի իրացման փոփոխություններ, միջհամայնքային միավորումների հիմնման՝ երկու եղանակների սահմանում:
- Նոր առանձին գլխով սահմանվեցին Գյումրի և Վանաձոր համայնքներում ՏԻՄ-ան առանձնահատկությունները:

- Ուժը կորցրած ճանաչվեց օրենքի «Մարզի խորհուրդը» գլուխը:

Այսպիսով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ խմբագրված օրենքով համայնքի (բացառությամբ՝ Գյումրու և Վանաձորի) ղեկավարի գործունեության թվով 8 բնագավառներում սեփական լիազորությունները լրացվել են թվով 27 նոր լիազորություններով, իսկ համայնքին պետության պատվիրակած լիազորությունները՝ գործունեության 4 բնագավառներում 13 նոր լիազորություններով:

Լիազորությունների ապակենտրոնացման առումով, օրենքում լրացված 40 լիազորություններից հատկապես հատկանշական են հետևյալները՝

- համայնքի ղեկավարի գործունեության նոր՝ արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման բնագավառում սահմանված սեփական և պետության պատվիրակած լիազորությունները.
- առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում լրացված՝ համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունն առ այն, որ նա կազմակերպում է համայնքի տարածքում արտահիվանդանոցային ձևով բժշկական օգնության և սպասարկման իրականացումը.
- սոցիալական պաշտպանության բնագավառում լրացված՝ համայնքի ղեկավարի սեփական լիազորությունները, որոնք անմիջականորեն առնչվում են «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի պահանջների ապահովման հետ: Ընդ որում, 5000-ից ավելի բնակիչ ունեցող համայնքի աշխատակազմում ստեղծվում է համայնքի սոցիալական աշխատողի հաստիք, որի հիմնական իրավունքներն ու պարտականությունները ևս սահմանված են «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով.
- գյուղատնտեսության բնագավառում լրացված՝ համայնքի ղեկավարի սեփական լիազորություններից առաջինն առ այն, որ համայնքի ղեկավարն իրականացնում է համայնքի գյուղատնտեսական ռեսուրսների հաշվառում, որի կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը.
- համայնքի ղեկավարի գործունեության նոր՝ զբոսաշրջության բնագավառում սահմանված սեփական լիազորությունները:

Օրենքի 5-րդ գլխում սահմանվել են ՏԻ-ան առանձնահատկությունները Գյումրի և Վանաձոր համայնքներում: Մասնավորապես, օրենքի 59-րդ հոդվածում տրվել է այդ համայնքների ղեկավարների լիազորությունների ընդհանուր բնութագիրը՝ սահմանելով թվով 8 սեփական լիազորություններ և թվով 4 պետության պատվիրակած լիազորություններ:

Լիազորությունների ապակենտրոնացման առումով, Գյումրի և Վանաձոր համայնքների համար հատկապես հատկանշական են պետության պատվիրակած հետևյալ լիազորությունները՝

- 1) համայնքի տարածքում ճանապարհային երթևեկության կարգավորումը՝ ճանապարհային գծանշումների, ինչպես նաև երթևեկության նշանների և լուսացույցների (բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում ժամանակավոր տեղադրվածների) տեղադրման միջոցով.

- 2) օրենքով սահմանված կարգով մասնակցում է պետական սեփականություն համարվող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատությունների և մարզական կազմակերպությունների կառավարմանը.
- 3) համայնքի տարածքում իրականացնում է պետական սոցիալական ապահովության ծրագրերը.
- 4) իրականացնում է բնապահպանական պետական ծրագրերով նախատեսված աշխատանքները համայնքի տարածքում:

Սակայն, համայնքի ղեկավարին վերը շարադրված լիազորություններով օժտելուն զուգընթաց, որևէ կերպ չեն ամրագրվել համայնքի ֆինանսական ռեսուրսների ավելացման հետ կապված իրավակարգավորումներ, որը լիազորությունների իրականացման և դրա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների համամասնությամբ առաջացնում է զգալի անհամապատասխանություններ: Դրանք կարող են իրենց մեջ պարունակել վերապահված լիազորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման ռիսկեր:

4. «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ նոր խմբագրությամբ օրենքի ընդունումը պայմանավորված էր ՀՀ փոփոխված Սահմանադրության 9-րդ գլխում տեղ գտած իրավակարգավորումների, մասնավորապես՝ 185-րդ հոդվածի հետ համապատասխանեցմամբ: Բացի այդ՝ օրենքում կատարվել են մի շարք փոփոխություններ ևս, քանի որ «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ նախկին օրենքում հստակեցված չէին «տեղական տուրք» և «տեղական վճար» հասկացությունները, որը հաճախ տարակարծությունների տեղիք էր տալիս: «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ նախկին օրենքում նշված չէին տեղական տուրքեր և վճարներ վճարողների գրանցման և հաշվառման մասին դրույթներ: Առկա էին հակասություններ և անհամապատասխանություններ ոլորտի իրավական ակտերում: Միևնույն ժամանակ, այս բնագավառում ընդունվել են այլ օրենքներ ևս (մասնավորապես՝ «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» և «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական տուրքի մասին» ՀՀ օրենքները): Տեղական տուրքերի և վճարների տեսակների և դրանց դրույքաչափերի սահմանման միասնական սկզբունքների և մոտեցումների բացակայությունը որոշակի անորոշություններ էր ստեղծել այդ օրենսդրական դաշտում, որոնց ճշգրտմանը, տեղական տուրքերի ու վճարների ցանկի հստակեցմանը, ինչպես նաև նոր տեսակների սահմանմանն է ուղղված ընդունված նոր օրենքը:

«Տեղական տուրքերի և վճարների» մասին ՀՀ նոր խմբագրությամբ օրենքով սահմանվել են տեղական տուրքի 18 տեսակ և տեղական վճարի 20 տեսակ: Մասնավորապես, սահմանվել են տեղական վճարի 11 նոր տեսակներ, դրանք են՝

- Կենտրոնացված ջեռուցման համար.
- Համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժների) մասնակցելու թույլտվության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

- Ջրնուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրնուղ-կոյուղու ծառայություններ մատուցող կազմակերպությունների սպասարկման տարածքներում.
- Ոռոգման ջրի մատակարարման համար այն համայնքներում, որոնք ներառված չեն «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքի համաձայն ստեղծված ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքներում.
- Համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար.
- Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար.
- Համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար.
- Համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանած և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար.
- Համայնքային սեփականություն հանդիսացող պատմության ու մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.
- Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ փոխհատուցման վճար.
- Համայնքի հանրային օգտագործման տարածքների բարեկարգման նպատակով համայնքային վճար:

Հստակեցվել և սահմանվել են նաև տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը, ինչպես նաև այդ դրույքաչափերի մասով գոտիավորման սկզբունքի վերաբերյալ կարգավորումը: Գոտիավորման սկզբունքով առաջնորդվելու վերաբերյալ, օրենքով առաջարկվում է այն կիրառել բոլոր համայնքների համար, ընդ որում՝ տարբեր տեղական տուրքերի և վճարների համար հնարավորություն տալով սահմանել տարբեր գոտիավորումներ՝ դրույքաչափերի տարբեր գործակիցների կիրառմամբ: Բացի վերը նշվածից՝ օրենքով փոփոխություններ են կատարվել նաև տեղական տուրքի և վճարի հաշվարկման և գանձման, արտոնությունների տրամադրման և ավել մուծված գումարների հետ վերադարձման հետ կապված իրավակարգավորող դրույքներում:

5. 2016թ. հոկտեմբերի 4-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրքը» արմատական փոփոխություններ մտցրեց համայնքների՝ տեղական հարկերի սահմանման, հավաքագրման և սեփական եկամուտների ձևավորման գործընթացներում:

Առանցքային փոփոխությունները վերաբերում են հետևյալներին.

- հողի հարկը և գույքահարկը միավորվեցին մեկ հարկատեսակի մեջ, որը կոչվեց անշարժ գույքի հարկ: Անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ են հանդիսանում հողամասերը և (կամ) դրանց բարելավումները (հողամասերում կառուցված ստորգետնյա և վերգետնյա շենքերը, շինությունները կամ կառույցներ, որոնց ցանկը սահմանվում է օրենսգրքով),
- սահմանվեց առանձին հարկատեսակ շարժական գույքի մասով՝ փոխադրամիջոցների հարկ, որով հարկման օբյեկտ են հանդիսանում ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը, ջրային փոխադրամիջոցը (շարժիչով աշխատող), մոտոցիկլետը, ձյունագնացը, մոտոամենագնացը (քվադրոցիկլը),
- տեղական հարկերի տեսակներից հանվեց «հյուրանոցային հարկը»,
- համայնքի ավագանին համայնքի ղեկավարի առաջարկությամբ կարող է մինչև 10%-ով բարձրացնել համայնքի բյուջե վճարվող անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների հարկի հաշվարկման՝ օրենսգրքով սահմանված դրույքաչափերը:

Այս դրույթներով ՏԻՄ-երին հնարավորություն տրվեց ընտրել անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների հարկի դրույքաչափերը՝ օրենքով սահմանված միջակայքերում, ինչը համապատասխանում է ՏԻ Եվրոպական Խարտիայի պահանջներին:

«Հ հարկային օրենսգիրքն ամբողջությամբ ուժի մեջ կմտնի 2018թ. հունվարի 1-ից:

1.2. Տեղական ինքնակառավարման բարեփոխումների ծրագրային գնահատումը

2016 թվականին ՀՀ նոր կառավարության ձևավորմամբ պայմանավորված՝ ընդունվեց և ՀՀ Ազգային Ժողովի հավանությանն արժանացավ ՀՀ կառավարության 2016թ-ի ծրագիրը: Այդ ծրագրով տեղական ինքնակառավարման բնագավառում նախատեսված էր թվով 6 հիմնական միջոցառումների կազմակերպում և իրականացում: Չնայած դրանցից մեծ մասը կրում է մինչև 2020թ. ընկած ժամանակահատվածում կատարվելիք աշխատանքների բնույթ, այնուամենայնիվ, այդ միջոցառումները 2016թ-ի ընթացքում թերի են կատարվել: Մասնավորապես, ծրագրում նշված առաջին միջոցառումը, որը վերաբերում է սահմանամերձ համայնքներին տրամադրվող արտոնությունների շարունակականության ապահովմանը, կատարվել է մասնակիրոեն, այսինքն՝ շարունակականությունը վերաբերել է միայն մինչ այժմ տրված արտոնություններին, նոր արտոնություններ չեն սահմանվել: Ինչ վերաբերում է ՀՀ կառավարության 2014թ. մարտի 27-ի N442-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի» ՏԻ-անը նվիրված միջոցառումներին, դրանցից նույնպես քչերն են 2016թ-ի ընթացքում իրականացվել կամ էլ իրականացվել են մասնակիրոեն:

ՏԻ ոլորտի զարգացման համար պատասխանատու պետական մարմինների գործունեության գնահատումը

ՏԻ ոլորտի բարեփոխումների և զարգացման համար պատասխանատու պետական մարմիններն են՝ ՀՀ Ազգային ժողովը և կառավարությունը: ՀՀ Ազգային ժողովի Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի մշտական հանձնաժողովը 2016թ-ին գումարել է շուրջ երկու տասնյակի հասնող նիստեր և հինգերորդ գումարման Ազգային ժողովի լիազումար նիստերի օրակարգերում ընդգրկելու համար հավանություն է տվել ՏԻ ոլորտը կարգավորող երեք խոշորամասշտաբ փոփոխություններ ենթադրող օրենսդրական նախագծերի, ինչպես նաև այլ օրինագծերի: ՀՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովը, նախորդ տարիների նման, բավարարվել է ՀՀ կառավարության ներկայացրած օրինագծերի քննարկումների կազմակերպմամբ ու դրանց ընթացք տալով և ՏԻ վերաբերյալ օրինագծերի մշակման նախաձեռնություն հանդես չի բերել: Հանձնաժողովի նախաձեռնությամբ, 2016թ. դեկտեմբերի 12-ին կազմակերպվեցին խորհրդարանական լսումներ «Տեղական ինքնակառավարման մասին» և «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ նոր խմբագրությամբ օրենքների նախագծերի շուրջ: Խորհրդարանական լսումների արդյունքում կատարված լրամշակումներով երկու նախագծերն էլ 2016թ. դեկտեմբերի 16-ին ընդունվեցին ՀՀ Ազգային ժողովի կողմից:

ՀՀ ՏԿՁԼ-ն՝ ՏԻ ոլորտի պետական լիազոր մարմինը, 2016թ-ին իր կանոնադրությամբ իրեն վերապահված ոլորտի քաղաքականության մշակմանը համահունչ աշխատանքներ է տարել՝ օրենքների նախագծեր մշակելու, մշակված օրենքների նախագծերի շուրջ քննարկումներ կազմակերպելու և սահմանված կարգով ՀՀ կառավարություն ներկայացնելու ուղղությամբ: Այս համատեքստում պետական լիազոր մարմնի կողմից 2016թ-ին մշակվել և ՀՀ կառավարության հաստատմանն են ներկայացվել «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի, «Ֆինանսական համահարթեցման մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» և «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ նոր խմբագրությամբ օրենքների նախագծերը: Նախագծերի շուրջ նախարարության կողմից կազմակերպվել և իրականացվել են բազմաթիվ հանրային քննարկումներ և լսումներ, որոնցում ներգրավված են եղել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ և շահագրգիռ այլ կողմեր: Նախագծերի մշակման գործընթացում պետական լիազոր մարմնի գործունեությունը հիմնականում եղել է բաց և թափանցիկ: Օրենքների նախագծերի շուրջ ձևավորված աշխատանքային խմբերում ներգրավված են եղել ոլորտի շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչները, որոնց անմիջական մասնակցության արդյունքում նրանց շատ առաջարկություններ տեղ են գտել իրավական ակտերի նախագծերում:

Կոշտ կենցաղային թափոնների կառավարման ոլորտում ՏԿՁԼ-ի կողմից մշակվել և կառավարության հաստատմանն է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության 2017-2036թթ. կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի զարգացման ռազմավարությունը», որը կառավարության կողմից հաստատվեց 08.12.2016թ. նիստի N 49 արձանագրային որոշմամբ:

ՀՖՄ-ի կողմից մշակված և ՀՀ համայնքներում շրջանառության մեջ դրված՝ «Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մշակման և կառավարման մեթոդաբանության (երկրորդ խմբագրությամբ)» հիման վրա 2016թ. վերջին ՀՀ ՏԿՁՆ-ի կողմից մշակվել և համայնքներին են տրամադրվել «Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մշակման և կառավարման մեթոդական ցուցումները»:

2016թ. նոյեմբերի 14-ին Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում ՀՀ ՏԿՁՆ-ն կազմակերպել է «Հայաստանում ՏԻ համակարգի ներդրման 20-ամյակին» նվիրված հանդիսավոր նիստը, որին մասնակցում էին ՀՀ նախագահը, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, համայնքների հետ աշխատող տարբեր միջազգային և տեղական կազմակերպությունների ներկայացուցիչներ, փորձագետներ: Նիստի ընթացքում ներկայացվել են զեկուցումներ և ելույթներ ՏԻ-անը վերաբերող հարցերի, համակարգի ձեռքբերումների և ապագա տեսլականների վերաբերյալ:

2016թ-ի ընթացքում ՀՀ ՏԿՁՆ-ն շարունակել է արդյունավետ համագործակցությունը միջազգային և տեղական կազմակերպությունների հետ:

Շարունակվել են ՏԿՁՆ-ի հրապարակային և թափանցիկ գործունեության բարելավման աշխատանքները: Տարվա ընթացքում առավել ակտիվացել և ամրապնդվել են ՏԿՁՆ-համայնքներ գործնական կապերը:

1.3. Արտաքին պարտավորությունների կատարումը

ՀՀ-ն Եվրոպայի խորհրդի անդամ երկիր է, ուստի և ունի որոշակի պարտավորություններ այդ կազմակերպության նկատմամբ, այդ թվում՝ ՏԻ բնագավառում: Ստանձնած պարտավորությունները վերաբերում են ՏԻ եվրոպական խարտիայի սկզբունքների, ինչպես նաև ԵԽ Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի հանձնարարականների՝ ՀՀ օրենսդրությունում ներառմանը և դրանց համապատասխան մեխանիզմների փաստացի կիրարկմանը: ՏԻ եվրոպական խարտիայի սկզբունքների կիրարկման մասով Հայաստանում 2016 թվականին արձանագրվեց որոշակի առաջընթաց: Մասնավորապես, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ նոր խմբագրությամբ օրենքի մշակման գործընթացում հաշվի առնվեցին խարտիայի սկզբունքները, մասնավորապես՝ այսօր արդեն իսկ գործող «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով սահմանված ՏԻ սկզբունքներն արդեն ամրագրվել են՝ ի համապատասխանումն խարտիայի համապատասխան սկզբունքների:

2013թ-ին ՀՀ-ն միացել է նաև «Տեղական իշխանությանը մասնակցելու իրավունքի մասին» ՏԻ եվրոպական խարտիայի լրացուցիչ արձանագրությանը: Հիմք ընդունելով այդ հանգամանքը՝ 2016թ-ին ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ նոր խմբագրությամբ օրենքում կատարվել են որոշակի համապատասխանեցումներ լրացուցիչ արձանագրությանը: Հիմք ընդունելով օրենքում «ՏԻ-անը համայնքի բնակիչների մասնակցությունը» կարևոր սկզբունքի ամրագրումը՝ օրենսդիրը մի ամբողջական հոդված է սահմանել նոր խմբագրված օրենքում (հոդված 11) «Համայնքի

բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը» վերնագրով, որում սահմանված գործիքակազմերը մեկ քայլ առաջ են տանում բնակիչների մասնակցության ապահովման մասով ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարումը:

2016թ-ին շարունակել է գործել ԵԽ-ի՝ Հայաստանի համար իրականացվող գործողությունների 2015-2018թթ. ծրագիրը, որի նպատակներից մեկը ՏԻ բարեփոխումների աջակցությունն է:

Հայաստանը 2016թ-ին սկսել է կատարել ԵԽ-ի Տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի 11.12.2015թ. ընդունված «Հետմոնիթորինգային Հայաստանի ճանապարհային քարտեզով» սահմանված պարտավորությունները, մասնավորապես՝ իրականացնելով քարտեզում նշված ՏԻ ոլորտին առնչվող գործողությունների կատարումը: Այդ գործողություններից հատկանշական են ֆինանսական համահարթեցմանը և ՏԻ-անը վերաբերող գործիքակազմերի փոփոխությունները, որոնք ՀՀ-ն իրականացրեց 2016թ-ի ընթացքում երկու ոլորտային օրենքներում խոշորածավալ փոփոխություններ կատարելու միջոցով:

Հայաստանն, ընդգրկված լինելով Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) և Արևելյան գործընկերության մեջ, որոշակի պարտավորություններ ունի նաև Եվրամիության նկատմամբ: 2016թ. ընթացքում Արևելյան գործընկերության երկրների կենտրոնական, ռեգիոնալ և տեղական պաշտոնյաները առաջին անգամ հավաքվեցին Հայաստանի մայրաքաղաք Երևանում՝ քննարկելու տարածքային ղեկավար մարմինների և քաղաքացիների կարողությունների զարգացմանը վերաբերող առավել հրատապ հարցերը, վարչական բարեփոխումները և ապակենտրոնացումը՝ որպես տեղական կայուն զարգացման արդյունավետ գործիք, ինչպես նաև Արևելյան գործընկերության տարածաշրջանում տեղական տնտեսական զարգացմանը մասնակցային մոտեցման քաջալերումը: «Արևելյան գործընկերության երկրներում կայուն զարգացման խթանումը» երկօրյա բարձրաստիճան միջազգային համաժողովը տեղի ունեցավ 2016թ. հոկտեմբերի 26-27-ը: Համաժողովը կազմակերպվել է Եվրոպական Հանձնաժողովի, ՀՀ ՏԿՁՆ-ի, Արևելյան Գործընկերության Տարածաշրջանային և Տեղական Մարմինների կոնֆերանսի (CORLEAP) և «Քաղաքապետերի Արևելյան Դաշնագիր» (CoM East) նախաձեռնության համատեղ ուժերով: Համաժողովի ընթացքում մեկնարկեց Արևելյան գործընկերության երկրների «Քաղաքապետերի Դաշնագիր» ծրագրի երկրորդ փուլը և «Քաղաքապետերը Հանուն Տնտեսական Զարգացման» նոր նախաձեռնությունը (M4EG)՝ ուղղված համապատասխանաբար էներգետիկ արդյունավետությանը և գործարար ոլորտին:

2. ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԵՎ ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ տարածքը 29 743 կմ² է, որի 68.78%-ը կազմում են գյուղատնտեսական նշանակության հողերը, 11.23%-ը՝ անտառային հողերը և 11.28%-ը՝ հատուկ պահպանվող տարածքները: Գյուղատնտեսական նշանակության հողերի միայն 7.57%-ն է ոռոգվում:

ՀՀ տարածքի 34.7%-ը համայնքային ենթակառուցվածքային հողեր են, իսկ 36.6%-ը՝ լեռներ, բարձրավանդակներ և այլ հողեր:¹ Սևանա լճի հայելու մակերեսը 1 276.5 կմ² է²:

Հանրապետության մշտական բնակչությունը 2017թ-ի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 2 986.1 հազ. մարդ, որը 12.5 հազ. մարդով (0.42%) պակաս է նախորդ տարվա համեմատությամբ³: Ընդ որում, 2016-ին ավելացել է մայրաքաղաք Երևանի բնակչությունը 2.1 հազ. մարդով: ՀՀ-ում 2000-2017թթ. մշտական բնակչության վերաբերյալ ամփոփ տվյալներ, ըստ քաղաքային և գյուղական բնակչության և դրանց շարժի, ներկայացված են Հավելված 1-ում:

Բնակչության 67.3%-ը կազմում են հանրապետության աշխատանքային ռեսուրսները:

Համաձայն «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի՝ վարչատարածքային միավորներ են հանդիսանում մարզերն ու համայնքները: ՀՀ տարածքը բաժանվում է 10 մարզի և Երևան համայնքի:⁴ Վերջինիս սահմանները որոշվում են «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով:

Բացի Կոտայքի մարզից՝ մնացած բոլոր մարզերն ունեն արտաքին սահման հարևան պետությունների հետ: Համայնքներն ինքնակառավարվող վարչատարածքային միավորներ են: Համայնքը կարող է ընդգրկել մեկ կամ ավելի թվով բնակավայրեր: Մեկից ավելի բնակավայրերից բաղկացած համայնքը կոչվում է բազմաբնակավայր համայնք, որի կենտրոնը և անվանումը սահմանվում են օրենքով:⁵

2017թ-ի հունվարի 1-ի դրությամբ, հաշվի առնելով 2015-16թթ. տեղի ունեցած վարչատարածքային փոփոխությունները, ՀՀ-ում կա 793 համայնք (ներառյալ Երևանը), որոնք ներառում են 1001 բնակավայր: Համայնքներից 65-ը բազմաբնակավայր են, որոնցից 24-ը ունեն 3 և ավելի բնակավայրեր:⁶

ՀՀ վարչատարածքային բաժանման և բնակչության վերաբերյալ ամփոփ տեղեկություններ (2017թ-ի հունվարի 1-ի դրությամբ) բերված են Աղյուսակ 1-ում:

¹ ՀՀ կառավարության որոշում N° 1059-Ն, 13.10.2016թ., «Հայաստանի Հանրապետության հողային ֆոնդի առկայության և բաշխման վերաբերյալ 2016 թվականի հաշվետվության (հողային հաշվեկշռի) մասին» (2016 թվականի հուլիսի 1-ի դրությամբ):

² ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայք, Տարեգրքեր, 2016: <http://armstat.am/am/?nid=586&year=2016>

³ ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայք, ՀՀ մշտական բնակչության թվաքանակը 01.01.2017 դրությամբ, հասանելի է՝ <http://armstat.am/am/?nid=80&id=1916>

⁴ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենք, 07.11.1995թ., ՀՕ-18 (17.06.2016թ., ՀՕ-100-Ն փոփոխություններով և լրացումներով):

⁵ Նույնը:

⁶ Նույնը:

2.1. Վարչատարածքային բաժանումը

2016 թվականին ՀՀ վարչատարածքային բաժանման համակարգում շարունակվել է 2015 թվականին սկիզբ առած համայնքների խոշորացման գործընթացը: Ի տարբերություն նախորդ տարվա՝ 2016 թվականին խոշորացման փնջերի թիվը ավելի մեծ է՝ 15 փունջ, որոնք ընդգրկված են Շիրակի, Տավուշի, Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերում:

Հատկանշական է, որ «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը⁷, որով սահմանվեցին խոշորացման ենթակա համայնքների առաջին 3 փնջերը (Դիլիջան, Թումանյան, Տաթև), փաստացի ուժի մեջ է մտել 2016թ-ի հունվարի 9-ին:

2016թ-ի հունիսի 17-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքի համաձայն⁸ փոփոխություններ կատարվեցին «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում, համաձայն որի՝ նախկին 118 համայնքներ, որոնք ընդգրկում էին 135 բնակավայրեր, խոշորացվեցին և ձևավորվեցին 15 նոր համայնքներ՝ իրենց կենտրոններով: Դրանք են՝

- Արարատի մարզում՝ Ուրցածոր համայնք (3 բնակավայր),
- Շիրակի մարզում՝ Ամասիա համայնք (10 բնակավայր), Աշոցք (11 բնակավայր), Արփի (15 բնակավայր), Սարապատ (15 բնակավայր),
- Սյունիքի մարզում՝ Գորիս համայնք (13 բնակավայր), Մեղրի համայնք (15 բնակավայր), Գորայք համայնք (4 բնակավայր), Տեղ համայնք (7 բնակավայր),
- Վայոց ձորի մարզում՝ Վայք համայնք (6 բնակավայր), Ջերմուկ համայնք (5 բնակավայր), Զառիթափ համայնք (12 բնակավայր),
- Տավուշի մարզում՝ Նոյեմբերյան համայնք (9 բնակավայր), Այրում համայնք (8 բնակավայր), Կողբ համայնք (2 բնակավայր):

Նոր ձևավորված համայնքների կազմում ընդգրկված նախկին համայնքների, բնակավայրերի և դրանց բնակչության թվի վերաբերյալ տեղեկությունները բերված են Հավելված 2-ում:

Համայնքների խոշորացման իրավական կարգավորումների մասով անհրաժեշտ է հիշատակել, որ մինչև ՀՀ Սահմանադրության փոփոխությունների իրականացումը՝ համայնքների վարչատարածքային բարեփոխումների իրականացման դեպքում, համապատասխան օրենքի փոփոխությունից առաջ, պետք է տվյալ համայնքներում անցկացվեին տեղական հանրաքվեներ⁹, որոնց արդյունքները չունեին պարտադրող բնույթ: Սակայն, 2015 թվականի դեկտեմբերի 6-ին իրականացված ՀՀ Սահմանադրության փոփոխություններից հետո, ՀՀ Սահմանադրությունից հանվեց վարչատար-

⁷ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, 24.11.2015թ., ՀՕ-148-Ն:

⁸ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, 17.06.2016թ., ՀՕ-100-Ն:

⁹ ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), 27.11.2005թ., Հոդված 110

րածքային փոփոխությունների դեպքում համապատասխան համայնքներում տեղական հանրաքվեներ անցկացնելու դրույթը¹⁰: Ելնելով այս հիմնավորումից՝ համայնքների խոշորացման վերոնշյալ 15 փնջերում տեղական հանրաքվեներ չեն անցկացվել:

2016թ-ի հունիսի 17-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված մեկ այլ օրենքի¹¹ համաձայն՝ Արարատի, Տավուշի և Սյունիքի մարզերի խոշորացված համայնքներում 2016 թվականի սեպտեմբերի 18-ին, իսկ Շիրակի և Վայոց ձորի մարզերի խոշորացված համայնքներում՝ հոկտեմբերի 2-ին, նշանակվեցին համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու ընտրություններ՝ ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված ՏԻՄ-երի հերթական ընտրությունների անցկացման կարգով:

Ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը նախկին (խոշորացված) համայնքների ղեկավարների և ավագանիների լիազորությունները, համաձայն վերոնշյալ օրենքի, համարվեցին դադարած:

Վերը նշված ընտրություններում արձանագրվել են հետաքրքիր արդյունքներ: Ի հակադրություն շահարկվող թյուր կարծիքի, թե խոշորացված համայնքում անպայմանորեն համայնքի ղեկավար կընտրվի այն թեկնածուն, որը ներկայացված կլինի խոշորացված համայնքի կենտրոն հանդիսացող բնակավայրից, կատարված ուսումնասիրությունները միանգամայն այլ բան են ցույց տալիս:

2016 թվականի ընթացքում նոր ձևավորված 15 համայնքներից ընդամենը 5-ում է արձանագրվել վերոնշյալ դեպքը, այսինքն՝ համայնքների ընդամենը 33.3%-ում (Ուրցաձոր, Աշոցք, Գորիս, Գորայք և Ջերմուկ համայնքներ): Առավել հետաքրքիր է այն, որ նոր ձևավորված 15 համայնքներից 5-ում համայնքի ղեկավար է ընտրվել այն թեկնածուն, որը ներկայացված է եղել համայնքի կենտրոն չհանդիսացող բնակավայրից (նախկին համայնքից), ինչը կազմում է այդ 15 համայնքների նույն 33.3%-ը (Արփի, Սարապատ, Մեղրի, Ջառիթափ և Այրում համայնքներ): Իսկ մնացած 5 համայնքներում (ընդհանուրի 33.3%-ը) համայնքի ղեկավար է ընտրվել միանգամայն նոր թեկնածու, որը ընտրվելու պահին նախկին համայնքի ղեկավարի պաշտոն չի զբաղեցրել (Ամասիա, Տեղ, Վայք, Նոյեմբերյան և Կողբ համայնքներ):

Վերոնշյալ ընտրական գործընթացների, ինչպես նաև նորընտիր համայնքի ղեկավարների կուսակցական պատկանելիության վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են Հավելված 3-ում:¹²

Օրենսդրության փոփոխությամբ¹³ վերացվեց բազմաբնակավայր համայնքի կազմում նվազագույնը 100 բնակիչ ունեցող բնակավայրի համար վարչական ղեկավար ունենալու սահմանափակումը, և ներկայումս բոլոր բնակավայրերը (բացառությամբ համայնքի կենտրոն բնակավայրի) պետք է ունենան մեկ վարչական ղեկավար՝ ան-

¹⁰ ՀՀ Սահմանադրության փոփոխություններ, 06.12.2015թ.

¹¹ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք, 17.06.2016թ., ՀՕ-101-Ն:

¹² Ուսումնասիրության աղբյուրը և նյութերը՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայք, www.elections.am

¹³ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, 07.05.2002թ., ՀՕ-337, Հոդված 31 (16.12.2016թ., ՀՕ-237-Ն փոփոխություններով)

կախ բնակչության թվից: Վարչական ղեկավարը հայեցողական պաշտոն է և նշանակվում է համայնքի ղեկավարի կողմից՝ առանց ավագանու հետ համաձայնեցման:

Պայմանավորված 2016 թվականի վարչատարածքային բարեփոխումներով՝ ՀՀ-ում մեկ համայնքին ընկնող միջին վարչական տարածքի մեծությունը փոխվել է: 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ մեկ համայնքի միջին վարչական տարածքը կազմել է 35.9 կմ², գյուղատնտեսական նշանակության հողերի մասով՝ 25.8 կմ²: Մեկ համայնքին ընկնող բնակչության միջին թիվը նույնպես փոփոխվել է և կազմել 3766 մարդ (ներառյալ Երևանը) և 2412 մարդ (առանց Երևանի):

Մեկ համայնքին ընկնող միջին վարչական տարածքի և մեկ համայնքում բնակվող մարդկանց միջին թվով Հայաստանը 43 եվրոպական երկրների¹⁴ շարքում զբաղեցնում է համապատասխանաբար 30-րդ և 33-րդ տեղերը: Առավել մանրամասն տեղեկություններ նշված ցուցանիշների վերաբերյալ բերված են Հավելված 4-ում:

Մեկ համայնքին ընկնող միջին վարչական տարածքի չափով Հայաստանի ցուցանիշը մոտ է Իտալիային, Թուրքիային, Ավստրիային, իսկ մեկ համայնքին ընկնող բնակչության միջին թվով Շվեյցարիային, Թուրքիային, Ավստրիային և Ուկրաինային:¹⁵

Եվրոպական երկրների մեկ համայնքին ընկնող վարչական տարածքի և մեկ համայնքում բնակվող մարդկանց թվի միջին ցուցանիշները հավասար են համապատասխանաբար 287.8 կմ² և 17 618 մարդ, իսկ ԵՄ անդամ 27 երկրների¹⁶ դեպքում՝ 264.4 կմ² և 15 885 մարդ:

Ակնհայտ է, որ ՀՀ ցուցանիշները առավել համադրելի դարձնելու համար անհրաժեշտ է սահմանել ընտրանք, որը հնարավորություն կստեղծի Հայաստանի նշյալ ցուցանիշները համեմատել համանման ելքային ցուցանիշներ ունեցող եվրոպական կամ ԵՄ անդամ երկրների ցուցանիշների հետ:

Այդ իսկ առումով հետաքրքրական է դիտարկել մինչև 50 000 կմ² և մինչև 100 000 կմ² վարչական տարածք ունեցող ԵՄ անդամ երկրների ցուցանիշները: Համաձայն ընտրանքի՝ մինչև 100 000 կմ² տարածք ունեցող ԵՄ անդամ երկրներում մեկ համայնքին ընկնող վարչական տարածքի միջին չափը կազմում է 210.5 կմ², իսկ մեկ համայնքին ընկնող բնակչության միջին թիվը՝ 16 688 մարդ: Իսկ մինչև 50 000 կմ² տարածք ունեցող ԵՄ անդամ երկրներում՝ համապատասխանաբար 108.3 կմ² և 16 788 մարդ:

Ուսումնասիրության տեսակետից հետաքրքիր կլինի հաշվարկել նաև, թե ինչպիսի վարչատարածքային բաժանում կլինի Հայաստանում, եթե կիրառենք եվրոպական երկրների միջինացված նշված ցուցանիշները մեր ՀՀ-ի համար: Ըստ այդմ էլ, վերցնելով մեկ համայնքին միջինում ընկնող բնակչության թիվը որպես 17 000 մարդ, կատանաք, որ ըստ այս ցուցանիշի ՀՀ-ում կարող է լինել մոտ 175 համայնք: Իսկ տարածքային առումով, վերցնելով մեկ համայնքին ընկնող վարչական տարածքի միջին չափը

¹⁴ Ծան.՝ ընդհանուր ցանկում չի դիտարկվում Միացյալ Թագավորության ցուցանիշները՝ վերջիններիս ակնհայտ մեծ արժեքների և ընդհանուր թվերի վրա էապես մեծ ազդեցության պատճառով:

¹⁵ Տվյալները՝ տես Հավելված 4-ում

¹⁶ Նույնը:

որպես 250-300 կմ², կստանանք, որ ըստ այս ցուցանիշի ՀՀ-ում կարող է լինել մոտ 90-105 համայնք:

Ներդիր. Մեկնաբանություններ ՀՀ-ում ընթացող համայնքների խոշորացման բարեփոխումների վերաբերյալ

Համայնքների խոշորացման գործընթացն առավել համակարգային պատկերացնելու համար պետք է դիտարկել այն երկու տեսանկյունից՝ խոշորացման վարչատնտեսական արդյունքների և ՏԻՄ-երի՝ բնակիչներին առավել հասանելի լինելու: Սակայն շատ կարևոր է դիտարկել նաև, թե ինչ սկզբունքային գաղափարներ են դրված համայնքների խոշորացման գործընթացի հիմքում և թե ինչպես է փաստացի այդ գործընթացը իրականացվում: Ահա այս հենասյուների վրա էլ կառուցենք մեր եզրահանգումները:

Առաջին հայացքից էլ պարզ է, որ ինչքան մոտ են համայնքային իշխանությունները բնակիչներին, այնքան վառ են արտահայտվում տեղերում ինքնակառավարման ընդհանուր գաղափարն ու սկզբունքները. իշխանություն, որն առավել մոտ է կանգնած բնակիչներին՝ դրանից բխող ժողովրդավարության բոլոր դրսևորումներով: Սա առավել քան ընդունելի է, ուստի վերջինիս կարևորության ընդգծման համար ավելորդ ենք համարում լրացուցիչ մեկնաբանություններ և հիմնավորումներ տալը:

Սակայն կա մի կարևոր հանգամանք, որի անտեսումը կամ որին կարևորություն չտալը առնվազն աններելի է հանրային կառավարման համակարգը դիտարկելիս:

Խոսքը տվյալ իշխանությունների կարողությունների, մասնավորապես՝ ֆինանսական միջոցներով ապահովված լինելու մասին է:

Առավել խորը վերլուծություն իրականացնելու արդյունքում պարզ է դառնում, որ ֆինանսապես թույլ ապահովված իշխանությունը պարզապես ի գործու չէ հաղթահարել իր առջև դրված խնդիրները և իրականացնել օրենքով սահմանված լիազորությունները: Այդ դեպքում հարց է առաջանում, թե այդ իշխանության նման կարգավիճակով հետագա գոյությունը ինչ իմաստ ունի: Եվ ահա այստեղ է, որ պետք է հստակ պատկերացում կազմել և ձևավորել՝ թույլ, անկարող իշխանություն, սակայն «մոտ» ժողովրդավարություն, թե ֆինանսապես առավել հզոր և ունակ, սակայն բնակիչներից փոքր ինչ հեռացած կառավարման համակարգ:

Ակնհայտորեն, ՀՀ-ում տեղի ունեցող վարչատարածքային բարեփոխումները միտված են դեպի երկրորդ տարբերակը:

ՀՀ-ում մեկնարկած այս բարեփոխումները առավել քան սպասված էին և որոշ առումներով նաև ուշացած: Տեղական ինքնակառավարման ավելի քան 20-ամյա փորձը ցույց տվեց, որ ՀՀ-ում նման վարչատարածքային բաժանում ունեցող համակարգը կենսունակ չէ: Համայնքների խիստ մասնատվածությունը անցած տարիների ընթացքում թողեց իր բացասական հետքը տեղական ինքնակառավարման ողջ համակարգի վրա: Իհարկե, տեղական ինքնակառավարման համակարգում առկա խնդիրները միայն վարչատարածքային բաժանման մեջ չեն, սակայն փորձել լուծել այդ խնդիրները՝ անտեսելով վարչատարածքային անարդյունավետ բաժանման խոչընդոտը, ժամանակի ու ջանքերի անիմաստ կորուստ և ֆինանսական միջոցների անտեղի փոշիացում կարելի է համարել:

Պետք է նշել, որ կարևոր է տեղական ինքնակառավարման համակարգում իրականացվող ծախսերի ավելացումը համախմբված ծախսերում, որը պետական քաղաքականության արդյունք պետք է լինի: Սակայն այդ ծախսերի որոշ չափով ավելացումը համակարգային լուրջ արդյունք ապահովել չի կարող. համայնքները շատ են, իսկ ավելացված գումարից ստացված արդյունքը՝ աննշան: Ահա հենց այստեղ է, որ վառ արտահայտվում է համայնքների խոշորացման դրական կողմերից ամենակարևորը՝ ֆինանսական ռեսուրսների կենտրոնացում՝ խոշոր ծավալի խնդիրներ լուծելու համար:

Խոշորացված համայնքների համախմբված բյուջեն հնարավորություն կստեղծի տվյալ համայնքում իրականացնել որևէ խոշոր խնդիր լուծում, ինչը նախկին համայնքները առանձին-առանձին իրականացնել պարզապես չէին կարող:

Համայնքների խոշորացման վարչատնտեսական արդյունավետության մասին բազմիցս խոսվել է թե՛ տարատեսակ քննարկումների ժամանակ և թե՛ առանձին հրապարակումների միջոցով: Սակայն, պետք է նաև ի նկատի ունենալ, որ խոշորացման գործընթացի իրական արդյունքները տեսանելի կլինեն դրա մեկնարկից առնվազն 4-5 տարի անց:

Այս իսկ առումով բացարձակ անընդունելի է խոշորացման վերաբերյալ վաղաժամկետ գնահատականներ հնչեցնելը և խոշորացումից ընդամենը 6 ամիս անց «փորձագիտական վերլուծություններ» իրականացնելը, ինչին բազմաթիվ անգամներ ականատես ենք եղել մամուլում: Սոցիալական ծանր վիճակ, արտագաղթ, աշխատատեղերի պակաս և այլն. ահա այն խնդիրները, որոնք հաճախ ակամա կամ միտումնավոր կապում են համայնքների խոշորացման գործընթացի հետ: Սակայն այդ խնդիրներից և ոչ մեկը անմիջական առնչություն չունի տեղական ինքնակառավարման բարեփոխումների հետ: Տեղական ինքնակառավարումը արտագաղթը կանխելու, բնակիչների սոցիալական վիճակը բարելավելու և աշխատատեղերով ապահովելու ուղղակի խնդիր չի լուծում, այլ բնակիչների համար ապահովում է բարենպաստ միջավայր այդ խնդիրներն աստիճանաբար լուծելու համար:

Առաջիկա 4-5 տարիների ընթացքում անպայմանորեն ի հայտ կգան այն թերացումները և բացթողումները, որոնք տեղ են գտել ՀՀ-ում համայնքների խոշորացման բարեփոխումների ընթացքում:

Չնայած այս հանգամանքին՝ համակարգում բարեփոխումների իրականացումը ավելին քան սպասված էր, և լիահույս ենք, որ, անցնելով այս բարեփոխումների միջով, ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգը կթևակոխի զարգացման նոր փուլ:

Վարչատարածքային բարեփոխումների և երկրում բնակչության տեղաբաշխվածության տեսանկյունից մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև քաղաքային բնակավայրերի և գյուղական բնակավայրերի բնակչության թվի տեսակարար կշիռները բնակչության ընդհանուր թվի մեջ: Ունենալով այս թվերը՝ կարող ենք պատկերացում կազմել նաև Հայաստանի ուրբանիզացիայի մակարդակի վերաբերյալ, այսինքն՝ թե ինչ տեսակարար կշիռ ունի քաղաքային բնակչությունը երկրի բնակչության ընդհանուր թվի մեջ:


2017թ-ի հունվարի 1-ի դրությամբ՝ ՀՀ-ում քաղաքային բնակչության թիվը կազմել է 1910.3 հազ. մարդ, ըստ այդմ էլ՝ ուրբանիզացիայի մակարդակը ՀՀ-ում 63.7% է:

Համաձայն BBVB Research հետազոտական թիմի հրապարակած զեկույցի¹⁷ տարբեր աշխարհամասերում ուրբանիզացիայի մակարդակը էապես տարբերվում է: Մասնավորապես՝ եթե Ասիայում և Աֆրիկայում այդ ցուցանիշները կազմում են 48.9% և 40.8% համապատասխանաբար, ապա Լատինական և Հյուսիսային Ամերիկաներում՝ 79.5% և 81.6%, Արևելյան և Արևմտյան Եվրոպայում՝ 69.5% և 79.6%, իսկ միջին եվրոպական ցուցանիշը 74.5% է:

Գծապատկեր 1-ում ներկայացված է 2015 թվականի տվյալներով եվրոպական երկրների ուրբանիզացիայի մակարդակը և դրա համեմատությունը մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ծավալի հետ (ԱՄՆ դոլարով): Գծապատկերից հստակ երևում է, որ համեմատաբար բարձր ուրբանիզացված երկրներում մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ծավալը անհամեմատ մեծ է՝ ցածր ուրբանիզացիայի մակարդակ ունեցող երկրների նույն ցուցանիշի համեմատությամբ: ՀՀ-ը նույնպես իր տեղն է գտել այս գծապատկերում, սակայն, չնայած Հայաստանում ուրբանիզացիայի ոչ ցածր մակարդակի (63.7%), նույն 2015 թվականի տվյալներով, ՀՀ-ում մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ծավալն անհամեմատ ցածր է՝ կազմելով ընդամենը 3 504 ԱՄՆ դոլար:¹⁸

Գծապատկեր 1

Ուրբանիզացիայի մակարդակը և մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն Եվրոպայում, 2015



¹⁷ Հասանելի է՝ <https://www.bbvbresearch.com/en/publicaciones/european-urbanization-trends/>
¹⁸ ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայք, Տարեգրքեր, 2016: <http://armstat.am/am/?nid=586&year=2016>

2.2. Միջհամայնքային համագործակցություն

2016թ-ին միջհամայնքային համագործակցության կայացմանն ուղղված դրական միտում է նկատվել:

Ի տարբերություն 2005թ-ին ընդունված ՀՀ Սահմանադրության (փոփոխություններով), որտեղ ընդամենը մեկ նախադասությամբ սահմանվում էր, որ օրենքով սահմանված կարգով կարող են ստեղծվել միջհամայնքային միավորումներ¹⁹, 2015թ-ի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված ՀՀ Սահմանադրության փոփոխությունների արդյունքում առանձին հոդվածով հստակորեն սահմանվեց միջհամայնքային միավորումների հասկացությունը և վերջինիս վերաբերյալ մի շարք հիմնարար դրույթներ:²⁰

Մասնավորապես, սահմանվեց միջհամայնքային միավորումների ձևավորման 2 ճանապարհ՝ մի դեպքում համայնքի ավագանիների նախաձեռնությամբ՝ համայնքի ղեկավարի առաջարկությամբ, մյուս դեպքում՝ օրենքով՝ Կառավարության առաջարկությամբ՝ ելնելով հանրային շահերից: Միջհամայնքային միավորումները կարող են իրականացնել միայն այնպիսի լիազորություններ, որոնք նրանց վերապահված են օրենքով կամ համայնքների ավագանիների որոշումներով: ՀՀ Սահմանադրությամբ ամրագրվում է նաև, որ միջհամայնքային միավորումը հանրային իրավունքի իրավաբանական անձ է:

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության մեջ տեղ գտած հիմնադրույթները՝ ՀՀ ՏԿԶՆ-ն 2016թ-ի վերջին շրջանառության մեջ դրեց «Միջհամայնքային միավորումների մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Նախագծում որջ ծավալով ներառված էին այն դրույթները, որոնք պետք է կարգավորեին միջհամայնքային միավորումների ձևավորման, դրանց գործունեության և լուծարման հետ կապված իրավահարաբերությունները:

Պետք է նշել, որ ներկայացված նախագծի վերաբերյալ եղան բազմաթիվ առաջարկություններ, որոնք ձևավորվեցին ՀաՄաՏեղ ծրագրի շրջանակներում անցկացված 3 հանրային քննարկումների (Սիսիան, Վանաձոր, Երևան), համայնքային իշխանությունների հետ կազմակերպված հանդիպումների ընթացքում: Նշված առաջարկությունները ՀՖՄ կողմից ամփոփ փաստաթղթով ներկայացվեցին ՀՀ ՏԿԶՆ-ին:

«Միջհամայնքային միավորումների մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ կստեղծվեն համապատասխան նպաստավոր պայմաններ, որպեսզի կենտրոնական իշխանությունը, իր իսկ նախաձեռնությամբ, պետական կառավարման մարմիններին վերապահված որոշ լիազորություններ արդյունավետ իրականացնելու նպատակով, համայնքների որոշակի տիրույթում օրենքով ստեղծի միջհամայնքային միավորում և այդ լիազորությունները պատվիրակի նրան՝ այդպիսով էլ ավելի մոտեցնելով հանրային ծառայությունների հասանելիությունը բնակիչներին:

Անդրադառնալով միջհամայնքային համագործակցությանը՝ նշենք, որ շարունակում են գործել իրենց անվանման մեջ «համայնքների միություն», «միջհամայնքային

¹⁹ «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով)», 27.11.2005թ., Հոդված 110

²⁰ «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխություններ», 06.12.2015թ., Հոդված 189

միավորում» բառակապակցությունը պարունակող իրավաբանական անձանց միությունները (ԻԱՄ), որոնք հիմնականում զբաղվում են տվյալ միությունների անդամ համայնքներում գույքահարկի և հողի հարկի տվյալների բազաների վարման և այդ հարկատեսակների հավաքագրման գործընթացներով:

Համաձայն ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից հարցված տվյալների՝ 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ շարունակել են գործել 24 նմանատիպ ԻԱՄ-ներ: Մանրամասն տեղեկություններ նշված միությունների, դրանց գրանցման ամսաթվերի, հիմնադիր համայնքների վերաբերյալ բերված են Հավելված 5-ում: Նշենք նաև, որ համաձայն նույն տեղեկատվության՝ 2012թ-ի օգոստոսի 20-ին լուծարվել են «Տաշիր միջհամայնքային միավորում» և «Վայոց Ձորի միջհամայնքային միավորում» համայնքների միություն ԻԱՄ-ները:

2016թ-ի դեկտեմբերի 16-ին ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում իրականացվեցին փոփոխություններ²¹, որոնց արդյունքում օրենսգրքից հանվեց «իրավաբանական անձանց միություն» կազմակերպահրավական ձևը: Հետևաբար, այդ պահի դրությամբ գործող բոլոր ԻԱՄ-ներն իրենց կազմակերպահրավական ձևը փոխելու և վերագրանցվելու գործընթաց պետք է անցնեն:

Աղյուսակ 2-ում ներկայացված է հողի հարկի ու գույքահարկի տվյալների բազաները վարող, այդ մասով միջհամայնքային համագործակցության մեջ գտնվող համայնքների վերաբերյալ տեղեկություններ՝ 2017թ-ի հունվարի 1-ի դրությամբ:²²

Ինչպես կարելի է նկատել աղյուսակից՝ ՀՀ համայնքների շուրջ 40.1%-ը այս կամ այն կերպով ընդգրկված է միջհամայնքային համագործակցության որևէ կառույցում:

Ճիշտ է, այդ միջհամայնքային համագործակցության կառույցների գործառույթները խիստ սահմանափակ են, այնուամենայնիվ, այդ համագործակցությունը փաստացի գործում է և կարող է հիմք հանդիսանալ հետագայում առավել սերտ կապերի հաստատման և համայնքային այս կամ այն ծառայությունը համատեղ ուժերով մատուցելու համար:

Միջսահմանային համագործակցության մասով 2016թ-ին շարունակվել է Եվրամիության Արևելյան գործընկերության տարածքային համագործակցության ծրագրի բաղադրիչ հանդիսացող «Հայաստան-Վրաստան համատեղ գործառնական ծրագրի» իրականացումը, որի շրջանակներում տրամադրվել են 9 դրամաշնորհներ: Վերջիններիս շրջանակներում իրականացվում են միջսահմանային համագործակցություն երիտասարդության հարցերի, համատեղ տնտեսական զարգացման, զբոսաշրջության, կոշտ կենցաղային աղբի կառավարման, շրջակա միջավայրի պահպանության և այլ ոլորտներում:²³

²¹ «ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, 16.12.2016թ., ՀՕ-32-Ն:

²² Աղբյուրը՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, www.mtad.am

²³ Աղբյուրը՝ <http://eaptc.eu/en/program/view-armenia-georgia.html>

Աղյուսակ 2

Պույքահարկի և հողի հարկի տվյալների բազաները համատեղ վարող կառույցները և առանձին համայնքները (2017թ.-ի հունվարի 1-ի դրությամբ)

№	ՄԱՐԶ	Համայնքների միություն (ՀՄ)		Միջհամայնքային կառույց (ՄՀԿ)		ՀՄ-ների կամ ՄՀԿ-ների կազմում ընդգրկված համայնքներ	Իրենց բազան ինքնուրույն վարող համայնքներ	Սեփական տվյալների բազա չունեցող համայնքներ	Տվյալների բազա ունեցող համայնքների թիվը	Մարզում համայնքների թիվը
		Քանակը	ՀՄ-ում ներառված համայնքների թիվը	Քանակը	ՄՀԿ-ում ներառված համայնքների թիվը					
1	Արագածոտն	1	9	17	48	57	57	39	75	114
2	Արարատ	2	27	2	12	39	56	35	60	95
3	Արմավիր	0	0	1	2	2	95	1	96	97
4	Գեղարքունիք	0	0	7	30	30	62	23	69	92
5	Լոռի	3	42	3	11	53	54	50	60	107
6	Կոտայք	0	0	1	2	2	65	1	66	67
7	Շիրակ	0	0	9	26	26	53	17	62	79
8	Սյունիք	2	63	0	0	63	9	26	10	72
9	Վայոց Ձոր	2	12	1	2	14	15	11	18	29
10	Տավուշ	2	32	0	0	32	8	32	10	40
ԸՆԴԱՄԵՆԸ		12	185	41	133	318	474	235	526	792

Հայ-իրանական միջսահմանային համագործակցության գծով 2016թ-ին որևէ նկատելի առաջընթաց չի արձանագրվել:

Թուրքիայի և Ադրբեջանի հետ Հայաստանի սահմանները շարունակում են մնալ փակ:

3. ՏԻՄ-ԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ, ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

3.1. ՏԻՄ-ԵՐԻ ձևավորումը, լիազորությունները և գործունեությունը

2015թ. դեկտեմբերի 6-ի սահմանադրական փոփոխություններով թույլատրվող՝ համայնքի ղեկավարի անուղղակի ընտրությունները 2016թ. մայիսի 25-ին ընդունված «Ընտրական օրենսգրքով» նախատեսվել են միայն երեք համայնքներում՝ Երևան, Գյումրի և Վանաձոր: Մնացյալ համայնքներում շարունակում են կիրառվել համայնքի ղեկավարի ուղղակի ընտրություններ: 2016թ-ի համայնքի ղեկավարի և ավագանու պաշտոնավարման ժամկետը, համաձայն ՀՀ փոփոխված Սահմանադրության, դարձել է հինգ տարի:

Անփոփոխ է մնացել համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուների առաջադրման կարգը, համաձայն որի թեկնածուներ կարող են առաջադրել ինչպես կուսակցությունները, այնպես էլ ընտրվելու իրավունք ունեցող անհատ անձինք՝ ինքնաառաջադրման կարգով: Բացառություն են կազմում միայն Երևան, Գյումրի և Վանաձոր համայնքները, որտեղ ավագանու անդամի թեկնածուներ առաջադրելու իրավունք ունեն միայն կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները:

Նոր «Ընտրական օրենսգրքով» փոփոխվել է ավագանու անդամների թիվը 70000-ից ավելի ընտրող ունեցող համայնքներում՝ 21-ի փոխարեն սահմանելով 33: 33 է սահմանվել նաև Վանաձոր և Գյումրի համայնքների ավագանու անդամների թիվը:

2016թ-ին ՀՀ համայնքներում անց են կացվել ուղղակի ընտրակարգով համայնքի ղեկավարի 572 ընտրություններ և մեծամասնական ընտրակարգով համայնքի ավագանու 644 ընտրություններ (Աղյուսակ 3):

Ցածր է բնակիչների մասնակցությունն ինչպես համայնքի ղեկավարի (59.29%), այնպես էլ ավագանու անդամների (55.75%) ընտրությունների ժամանակ: Մասնակցության ամենաբարձր ցուցանիշը երկու ընտրությունների դեպքում էլ գրանցվել է Սյունիքի մարզում (Աղյուսակ 3):

Աղյուսակ 3. 2016-ին կայացած ՏԻՄ-երի ընտրությունների թիվն՝ ըստ մարզերի (առանց Գյումրի և Վանաձոր համայնքների)²⁴

Հ/ h	Մարզ	Համայնքի ղեկավարի ուղղակի ընտրություններ		Համայնքի ավագանու ընտրություններ մեծամասնական ընտրակարգով	
		Ընտրությունների թիվը	Ընտրությունների մասնակցության միջին մակարդակը	Ընտրությունների թիվը	Ընտրությունների մասնակցության միջին մակարդակը
1	Արագածոտն	84	57.69%	91	53.79%
2	Արարատ	69	53.50%	82	50.53%
3	Արմավիր	68	53.87%	92	48.12%
4	Գեղարքունիք	55	62.64%	49	57.12%
5	Լոռի	84	56.75%	88	54.57%
6	Կոտայք	48	56.59%	60	53.03%
7	Շիրակ	53	55.74%	66	52.47%
8	Սյունիք	58	67.99%	63	64.53%
9	Վայոց Ձոր	21	66.36%	23	62.53%
10	Տավուշ	32	61.76%	30	60.77%
	Ընդամենը	572	59.29%	644	55.75%

2016թ-ին առաջին անգամ Վանաձոր և Գյումրի քաղաքներում անց են կացվել համայնքի ավագանու ընտրություններ համամասնական ընտրակարգով: Համաձայն «Ընտրական օրենսգրքի»՝ ավագանու անդամների մանդատները բաշխվում են այն կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների միջև, որոնք ստացել են «կողմ» քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի՝ կուսակցության դեպքում՝ 6, իսկ կուսակցությունների դաշինքի դեպքում՝ 8 տոկոս «կողմ» քվեարկված քվեաթերթիկներ: Եթե «կողմ» քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի առնվազն 6 (8) տոկոս «կողմ» քվեարկված քվեաթերթիկներ ստացել են 3-ից պակաս կուսակցություն (կուսակցությունների դաշինք), ապա մանդատների բաշխմանը մասնակցում են առավելագույն «կողմ» քվեարկված քվեաթերթիկներ ստացած 3 կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները: Գյումրի և Վանաձոր համայնքներում ավագանու անդամների մանդատների բաշխվածությունը ներկայացված է Աղյուսակ 4-ում:

²⁴ Աղբյուրը՝ www.elections.am:

Աղյուսակ 4. Գյումրի և Վանաձոր համայնքների ավագանիների ընտրությունների արդյունքները²⁵

Հ/հ	Վանաձոր համայնք			Գյումրի համայնք		
	Կուսակցություն կամ կուսակցությունների դաշինք	Հավաքած ձայների տեսակարար կշիռը	Մանդատների թիվը	Կուսակցություն կամ կուսակցությունների դաշինք	Հավաքած ձայների տեսակարար կշիռը	Մանդատների թիվը
1	Բարգավաճ Հայաստան Կուսակցություն	7.25 %	3	Այլանս Առաջադիմական Յենտրիստական Կուսակցություն	1.79 %	0
2	Լուսավոր Հայաստան Կուսակցություն	27.51 %	10	Բալասանյան Դաշինք	34.74 %	17
3	Հայ Ազգային Կոնգրես Կուսակցություն	1.39 %	0	Բարգավաճ Հայաստան Կուսակցություն	21.66 %	8
4	Համախմբում Կուսակցություն	2.48 %	0	Գաղափարակից Լիբերալների Այլանս (ԳԱԼԱ)	10.47 %	4
5	Հայաստանի Հանրապետական Կուսակցություն	37.58 %	13	Գործարար Կուսակցություն	1.29 %	0
6	Հայ Յեղափոխական Դաշնակցություն Կուսակցություն	6.37 %	2	Գյումրեցու Ոգի Կուսակցություն	5.74 %	0
7	Հայկական Վերածնունդ Կուսակցություն	13.34 %	5	Հայ Ազգային Կոնգրես Կուսակցություն	1.09 %	0
8	Քաղաքացիական Պայմանագիր Կուսակցություն	4.08 %	0	Համախմբում Կուսակցություն	5.77 %	0
9				Հայ Յեղափոխական Դաշնակցություն Կուսակցություն	5.36 %	0
10				Հայկական Վերածնունդ Կուսակցություն	10.61 %	4
11				Քաղաքացիական Պայմանագիր Կուսակցություն	1.48 %	0

²⁵ Աղբյուրը՝ www.elections.am:

Վանաձոր համայնքի ավագանու կողմից կատարված ընտրության արդյունքում 19 ձայնով համայնքի ղեկավար է ընտրվել ՀՀԿ ներկայացուցիչը: Գյումրիում, քանի որ Բալասանյան Դաշինքն ընտրությունների արդյունքներով ստացել էր 17 մանդատ՝ մանդատների 50%-ից ավելին, ապա նրա ցուցակի առաջին հորիզոնականում գտնվող անձն օրենքի ուժով համարվել է քաղաքապետ:

2016թ-ի փետրվարին տեղի են ունեցել 2015 թվականի ընթացքում համայնքների խոշորացման արդյունքում նոր ձևավորված Դիլիջան, Թումանյան և Տաթև համայնքների ՏԻՄ-երի ընտրությունները: Ընտրությունների արդյունքներով որպես Դիլիջան և Թումանյան համայնքների ղեկավարներ են ընտրվել համայնքի կենտրոն հանդիսացող բնակավայրի՝ նախկին համայնքի ղեկավարները, իսկ Տաթևում՝ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերից մեկի՝ Տաթևի նախկին համայնքի ղեկավարը:

2016թ-ին տեղի են ունեցել նաև 2016 թվականի ընթացքում համայնքների խոշորացման արդյունքում նոր ձևավորված 15 համայնքների ՏԻՄ-երի ընտրությունները: Այդ ընտրությունների արդյունքում 15 համայնքներից 5-ում որպես համայնքի ղեկավար են ընտրվել համայնքի կենտրոն հանդիսացող բնակավայրի՝ նախկին համայնքի ղեկավարները, 5-ում համայնքի ղեկավար են ընտրվել համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերից մեկի՝ նախկին համայնքի ղեկավարները և 5-ում համայնքի ղեկավարներ են ընտրվել նոր թեկնածուներ կամ նախկինում այլ պաշտոններ զբաղեցրած անձինք:

2016թ-ին համայնքի ղեկավարի ուղղակի ընտրությունները, ինչպես և նախորդ տարիներին, անց են կացվել հիմնականում ցածր մրցակցության պայմաններում: Առաջադրված թեկնածուների առավելագույն թիվը եղել է 7՝ ընդամենը 1 համայնքում: 1 համայնքում մրցակցել են 6 թեկնածուներ, 8 համայնքում՝ 5 թեկնածուներ, 26 համայնքում՝ 4 թեկնածուներ, 66 համայնքում՝ 3 թեկնածուներ և 189 համայնքում՝ 2 թեկնածուներ: 2016թ-ին համայնքի ղեկավարի ուղղակի ընտրություններ անցկացրած 572 համայնքներից 281-ում (այդ համայնքների 49.1%-ում), կարելի է ասել, բացակայել է մրցակցային միջավայրը, քանի որ այս համայնքներում առաջարկվել է ընդամենը 1 թեկնածու²⁶: Դիտարկվող տարում կայացած համայնքի ղեկավարի ուղղակի ընտրությունների ժամանակ թեկնածուների միջին թիվը կազմել է 1.8:

2016թ-ին կայացած համայնքի ղեկավարի ուղղակի ընտրությունների արդյունքներով (առանց Գյումրի և Վանաձոր համայնքների) ընտրված համայնքների ղեկավարների մեծ մասը հանդիսանում են ՀՀԿ ներկայացուցիչներ և անկուսակցական անձինք: Այսպես, ընտրված 572 համայնքի ղեկավարների 63.8%-ը հանդիսանում են ՀՀԿ ներկայացուցիչներ, 29.2%-ը անկուսակցական են, իսկ մնացյալ 7%-ը ԲՀԿ, ՀՅԴ, ՀՎԿ, ՔԴԿ և ԱԻՄ ներկայացուցիչներ են (Աղյուսակ 5):

²⁶ Աղբյուրը՝ www.elections.am:

Աղյուսակ 5. 2016թ. կայացած համայնքի ղեկավարի ուղղակի ընտրությունների արդյունքներով համայնքների ղեկավարների կուսակցական պատկանելությունը²⁷

Հ/հ	Մարզ	Կուսակցություն						Անկուսակցական
		Հայաստանի Հանրապետական կուսակցություն (ՀՀԿ)	Բարգավաճ Հայաստան կուսակցություն (ԲՀԿ)	Հայ Յերափոխական Դաշնակցություն (ՀՅԴ)	Հայկական Վերածնունդ կուսակցություն	Քարդաթսգիական Պայմանագիր կուսակցություն	Ազգային Ինքնորոշում Միավորում (ԱԻՄ)	
1	Արագածոտն	55	-	5	1	-	-	23
2	Արարատ	46	4	1	-	1	-	17
3	Արմավիր	51	-	4	-	-	-	13
4	Գեղարքունիք	33	2	-	-	-	-	20
5	Լոռի	58	1	1	1	-	-	23
6	Կոտայք	20	1	1	-	-	-	26
7	Շիրակ	26	2	3	5	-	-	17
8	Սյունիք	41	1	2	-	-	-	14
9	Վայոց Ձոր	12	-	-	-	-	-	9
10	Տավուշ	23	-	2	1	-	1	5
	Ընդամենը	365	11	19	8	1	1	167

2016թ-ի ընթացքում ՀՀ կառավարության որոշումներով վաղաժամկետ դադարեցվել են 8 համայնքների ղեկավարների լիազորությունները, այդ թվում՝ 5 համայնքների (Նորապատ, Թթուջուր, Օթևան, Կիրանց, Մղարթ) ղեկավարներին՝ նրանց հրաժարական տալու և 3-ինը (Նոր Արտագերս, Արևիկ և Վարդավանք)՝ նրանց մահվան պատճառներով: 2016թ-ին եղել է համայնքի ավագանու լիազորությունների դադարեցման 1 դեպք՝ Շիրակավանում, ավագանու անդամի մահվան պատճառով:

2016թ-ին համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու դեպք չի գրանցվել:

²⁷ Աղբյուրը՝ www.elections.am:

ՏԻՄ-երի լիազորությունները

2016թ. դեկտեմբերի 16-ին ընդունվել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով, ըստ էության, ամբողջությամբ վերաշարադրվել է գործող օրենքը: Արդյունքում, կատարվել են մի շարք փոփոխություններ ՏԻՄ-երի իրավասությունների և լիազորությունների կազմում (այդ փոփոխություններն ուժի մեջ են մտել 2017թ. հունվարի 1-ից): Մասնավորապես, համայնքի ավագանու իրավասությունները վերաձևակերպվել են որպես լիազորություններ, որոնք թվով 42-ն են: Իսկ համայնքի ղեկավարի իրավասություններն ընդհանրապես հանվել են:

Փոփոխվել է նաև ՏԻՄ-երի լիազորությունների նկարագիրը: Համաձայն կատարված փոփոխությունների՝ ՏԻՄ-երի լիազորությունները լինում են սեփական՝ համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծման նպատակով, և պետության կողմից պատվիրակված: Օրենքում թվարկված՝ ՏԻՄ-երի սեփական լիազորություններն ուղղված են բացառապես համայնքի պարտադիր խնդիրների լուծմանը, որոնք նույնպես թվարկված են օրենքում՝ թվով 20 խնդիրներ:

Աղյուսակ 6. Համայնքի ղեկավարի լիազորությունների քանակական տվյալներն ըստ առանձին տեսակների և բնագավառների (2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ)

Հ/հ	Բնագավառ	Սեփական լիազորություններ	Պատվիրակված լիազորություններ
1	Ընդհանուր լիազորություններ	26	3
2	Քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքներ	5	6
3	Տեղական ինքնակառավարման բնակիչների մասնակցություն	4	0
4	Ֆինանսներ	8	0
5	Պաշտպանության կազմակերպում	4	2
6	Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում	2	7
7	Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն	22	0
8	Հողօգտագործում	6	3
9	Տրանսպորտ	4	1
10	Առևտուր և ծառայություններ	9	0
11	Կրթություն, մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ	5	1
12	Առողջապահություն, ֆիզիկական կուլտուրա և սպորտ	4	2
13	Սոցիալական պաշտպանություն	5	1
14	Գյուղատնտեսություն	4	0
15	Անասնաբուծություն և բուսասնիտարիա	1	6
16	Շրջակա միջավայրի պահպանություն	1	2
17	Զբոսաշրջություն	6	0
	Ընդամենը	116	34

Ամփոփ կերպով կարելի է նշել, որ 2016թ-ի տարեվերջի դրությամբ համայնքի ղեկավարներին «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով վերապահված սեփական լիազորությունների թիվը կազմել է 116, իսկ պատվիրակված լիազորություններին՝ 34 (Աղյուսակ 6):

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում 2016թ-ի ընթացքում համապատասխան փոփոխությունները չեն կատարվել: Դիտարկվող տարվա ընթացքում Երևանի ՏԻՄ-երի լիազորությունները չեն փոփոխվել:

Որոշումների կայացումը համայնքներում

2016թ. 1-ին և 2-րդ եռամսյակների տվյալներով ՀՀ մարզերի համայնքների ղեկավարների մոտ ընդունելության են մասնակցել 55846 քաղաքացիներ, իսկ ավագանու անդամների մոտ՝ 11555 քաղաքացիներ: Համայնքի ղեկավարների մոտ 2016թ. 1-ին և 2-րդ եռամսյակներում ընդունելության են մասնակցել ընդունելության դիմած քաղաքացիների 98.7%-ը, իսկ ավագանու անդամների մոտ՝ 94.6%-ը: 2016թ. 1-ին եռամսյակում ընդունելություն կազմակերպած համայնքների թիվը եղել է 862, իսկ 2-րդ եռամսյակում՝ 786²⁸:

2016թ-ի ընթացքում տեղական հանրաքվե չի անցկացվել:

2016թ-ի իրականացվել է իրավական և մասնագիտական հսկողություն 303 համայնքներում: Արձանագրված խախտումները հիմնականում վերաբերել են «Տեղական ինքնակառավարման մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Քաղաքաշինության մասին» և ՀՀ այլ օրենքների ու ենթաօրենսդրական ակտերի պահանջների չկատարմանը²⁹:

2016թ-ի առաջին անգամ, ՀաՄաՏեղ ծրագրի շրջանակներում, կիրառվել է համայնքի ավագանու նիստի օրակարգում հարց ընդգրկելու վերաբերյալ բնակիչների կողմից նախաձեռնության ներկայացման պրակտիկան 3 համայնքներում՝ Նոյեմբերյան, Սպիտակ և Ալավերդի: Վերջինս ներկայացվել է օրենքին և համապատասխան համայնքների ավագանիների կողմից ընդունված՝ ՏԻ-անը բնակիչների մասնակցությամբ վերաբերյալ կարգերին համապատասխան:

²⁸ Աղբյուրը՝ www.mtad.am 2016 թ. 1-ին եռամսյակում ՀՀ համայնքներում համայնքի ղեկավարի և ավագանու կողմից կազմակերպված ընդունելություններին մասնակցած քաղաքացիների թիվը, 2016 թ. 2-րդ եռամսյակում ՀՀ համայնքներում համայնքի ղեկավարի և ավագանու կողմից կազմակերպված ընդունելություններին մասնակցած քաղաքացիների թիվը:

²⁹ Աղբյուրը՝ ՀՀ ՏԿՁԵ-ի 2016 թվականի ընթացքում կատարած հիմնական աշխատանքների և արդյունքների վերաբերյալ հաշվետվություն:

3.2. Քաղաքացիական հասարակության մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը

«Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում, 2017թ. հունվարի 1-ի դրությամբ, գրանցված են եղել քաղաքացիական հասարակության սուբյեկտներ հանդիսացող 4644 հասարակական կազմակերպություն, 1073 հիմնադրամ, 771 արհեստակցական կազմակերպություն և 80 կուսակցություն»³⁰:

Տեղական ինքնակառավարման ոլորտում գործող հասարակական կազմակերպությունների թվի և տարածքային տեղաբաշխվածության վերաբերյալ պաշտոնական տեղեկատվություն չկա: Պաշտոնական տեղեկատվություն չկա նաև ՋԼՄ-ների տարածքային տեղաբաշխվածության վերաբերյալ: 2016թ-ին ՏԻ ոլորտում շարունակել են գործել նախորդ տարիների զեկույցներում նշված կազմակերպությունները:

2016թ. դեկտեմբերի 16-ին ընդունվել է նոր օրենք «Հասարակական կազմակերպությունների մասին»: Այն նոր հնարավորություններ է ստեղծել ՀԿ-ների գործունեության համար: Մասնավորապես, ՀԿ-ներն իրավունք են ստացել իրենց կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Այդ գործունեության արդյունքում ստացված շահույթն օգտագործվում է միայն կազմակերպության կանոնադրական նպատակների համար:

«Ֆրիդոմ Հաուս» իրավապաշտպան կազմակերպության զեկույցի համաձայն՝ 2016թ-ին անփոփոխ է մնացել Հայաստանի ժողովրդավարության առաջընթացի գնահատականը՝ 2013թ-ից ի վեր կազմելով 5.36 միավոր (գնահատականները տրված են 7 բալանոց սանդղակով, որտեղ ամենալավ ցուցանիշը 1-ն է, իսկ ամենավատը՝ 7-ը): Նույնն են մնացել նաև «Տեղական ժողովրդավարական կառավարում» և «Քաղաքացիական հասարակություն» բաժինների գնահատականները՝ կազմելով համապատասխանաբար 5.75 և 3.75 միավոր³¹:

«ՀԿԶՆ-ի և Եվրոպայի Խորհրդի Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի միջև 2016թ. հունիսին ստորագրվել է Հայաստանում տեղական ժողովրդավարության ճանապարհային քարտեզը: Ճանապարհային քարտեզի ստորագրմամբ կողմերը ստանձնել են Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի դրույթների իրականացման մոնիթորինգի շրջանակներում փոխգործակցությունը և քաղաքական երկխոսությունը շարունակելու հանձնառությունը: Կողմերը պարտավորվել են նաև համատեղ աշխատանքով կյանքի կոչել ճանապարհային քարտեզը»³²:

³⁰ Աղբյուրը՝ «ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն»:

³¹ Աղբյուրը՝ www.freedomhouse.org Nations in Transit 2016:

³² Աղբյուրը՝ «ՀԿԶՆ-ի 2016 թվականի ընթացքում կատարած հիմնական աշխատանքների և արդյունքների վերաբերյալ հաշվետվություն»:

ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի կողմից մշակված «Հրապարակայնության և տեղեկատվության ազատության ինդեքսի»³³ միջոցով, ի թիվս հանրային հատվածի այլ մարմինների, գնահատվել է նաև Երևանի քաղաքապետարանի 2016թ-ի գործունեության թափանցիկության մակարդակը: Երևանի քաղաքապետարանի գնահատականը եղել է 73 (գնահատականը տրվում է 100 բալանոց սանդղակով)³⁴: Նույն ՀԿ-ի կողմից հրապարակված «սև ցուցակում» 2016թ-ին չեն եղել ՏԻՄ-երի ներկայացուցիչներ³⁵:

Ավագանու նիստերի և համայնքային նշանակության այլ միջոցառումների առցանց հեռարձակման հնարավորությամբ ապահովված համայնքների թիվը 2016թ. տարեվերջի դրությամբ եղել է 28³⁶:

ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ դիմում-բողոքները

2016թ-ին մարդու իրավունքների պաշտպանին ուղղված գրավոր և բանավոր դիմում-բողոքների քանակական պատկերի ուսումնասիրությունն, ըստ պատկան մարմինների, ցույց է տալիս, որ դրանցից 119-ը ուղղված է եղել Երևանի քաղաքապետարանի, 30-ը՝ քաղաքային բնակավայրեր ընդգրկող համայնքների և 26-ը՝ գյուղական բնակավայրեր ընդգրկող համայնքների դեմ³⁷:

Մարդու իրավունքների պաշտպանին ուղղված դիմում-բողոքները, ինչպես և նախորդ տարիներին, հիմնականում վերաբերել են համայնքների ղեկավարների կողմից իրենց լիազորությունների չարաշահմանը կամ ոչ պատշաճ կատարմանը:

³³ Ինդեքսի գնահատման չափանիշները բաժանվում են երեք հիմնական խմբի՝ տեղեկատվության ազատության իրավունք, հրապարակայնության/մատչելիության ապահովում՝ տեղեկատվություն տնօրինողի սեփական նախաձեռնությամբ, աշխատակազմ և աշխատատեղ:

³⁴ Աղբյուրը՝ www.foi.am:

³⁵ Աղբյուրը՝ www.foi.am:

³⁶ Աղբյուրը՝ www.mtad.am, Ավագանու նիստերի և համայնքային նշանակության այլ միջոցառումների առցանց հեռարձակման հնարավորությամբ ապահովված համայնքների ցանկ, դրանք են՝ Աշտարակ, Արարատ, Արտաշատ, Մասիս, Արմավիր, Էջմիածին, Գավառ, Սևան, Վանաձոր, Ալավերդի, Թումանյան, Սպիտակ, Ստեփանավան, Աբովյան, Եղվարդ, Հրազդան, Չարենցավան, Գյումրի, Արթիկ, Գորիս, Մեղրի, Սիսիան, Տաթև, Կապան, Ջերմուկ, Վայք, Դիլիջան և Իջևան համայնքները:

³⁷ Աղբյուրը՝ «Տարեկան հաղորդում 2016թ.», ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին, Երևան 2017:

4. ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՆԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2016թ-ի ընթացքում համայնքների ֆինանսներին, զարգացման ծրագրերին և սեփականությանը վերաբերող օրենսդրական դաշտում կատարվել են մի շարք փոփոխություններ:

Ընդունվել է «Ֆինանսական համահարթեցման մասին» նոր ՀՀ օրենք (20.10.2016թ.), որով սահմանվել են ֆինանսական համահարթեցման հասկացությունը, սկզբունքները, համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների հաշվարկման և հատկացման կարգերը: Սահմանվել են դոտացիաների ձևավորման աղբյուրը և դոտացիա ստացող համայնքները, դոտացիաների կառուցվածքը, դոտացիաների «ա» և «բ» մասերի հաշվարկման կարգը, համայնքի բյուջետային ապահովվածության և եկամտային կարողության գործակցի հաշվարկման կարգը, համայնքի ծախսային կարիքի կարգավորիչ գործակիցը, ինչպես նաև մասշտաբի, տրանսպորտային մատչելիության, համայնքի բարձրարդիւթյան, համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի քանակի և բնակչության տարիքային կառուցվածքի ծախսային գործոնների հաշվարկման կարգերը, համայնքի ծախսային գործակցի հաշվարկման բանաձևը և դոտացիաների հաշվարկների կատարումն ու հատկացումը:

Փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում (07.06.2016թ., 04.10.2016թ., 16.12.2016թ.): Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվել է տեղական տուրք՝ տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25%-ի չափով: Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան համայնքի բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10%-ը, այդ գովազդի մակերեսին համապատասխան: Սոցիալական գովազդի համար սահմանվել է 0 դրամ: Նոր խմբագրությամբ սահմանվել են ոգելից և ալկոհոլային խմիչքի, ծխախոտի արտադրանքի վաճառքի, ինչպես նաև հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքերը՝ յուրաքանչյուր եռամսյակի համար, ըստ զբաղեցրած տարածքների: «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ նոր խմբագրությամբ ընդունված օրենքում (16.12.2016թ.) սահմանվել են տեղական տուրք և (կամ) վճար վճարողների հաշվառումը, իրավունքները և պարտականությունները, տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը, տեղական տուրքի կամ վճարի հաշվարկման և գանձման կարգը, ինչպես նաև սույն օրենքը խախտելու համար պատասխանատվությունը:

ծրագրի «քառամյա» բառը փոխարինվել է «հնգամյա» բառով. նոր խմբագրությամբ սահմանվել են նաև համայնքի բյուջեի հաշվետվությունների ներկայացման, քննարկման և հաստատման կանոնները:

Փոփոխություններ են կատարվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում (16.12.2016թ.), որով օրենքի 7-րդ գլխում («Համայնքի զարգացման ծրագիրը և բյուջեն») նոր խմբագրությամբ սահմանվել են՝ համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը, համայնքի բյուջեն, դրա հաստատումը և կառուցվածքը, համայնքի հնգամյա զարգացման ծրագրի և բյուջեի կառավարման գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունը, համայնքի բյուջեին ներկայացվող պահանջները, համայնքի բյուջեի ձևավորման աղբյուրները, համայնքի բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաները, համայնքի մատուցած ծառայությունների դիմաց գանձվող վճարները, համայնքի բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, համայնքի բյուջեի պահուստային ֆոնդը, համայնքի հնգամյա զարգացման ծրագրի և տարեկան բյուջեի հրապարակումը, համայնքի բյուջեի կատարումը և կատարման սպասարկումը, համայնքի բյուջեի մուտքերի ապահովումը, համայնքի բյուջեի հետ կապված այլ հարաբերությունները:

4.1. Համայնքների սեփականությունը

Ինչպես նախորդ տարիներին, 2016թ-ին նույնպես, համայնքային սեփականությունը հիմնականում համալրվել է համայնքների կատարած կապիտալ կամ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի հաշվին (Աղյուսակ 7): Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ծավալը վերջին երկու տարվա ընթացքում նվազել է մոտ երկու անգամ, իսկ նախորդ տարվա համեմատությամբ՝ 3591.3 մլն. դրամով կամ 21.6%-ով, կազմելով՝ 13057.8 մլն. դրամ (2014թ.՝ 27522.5 մլն. դրամ; 2015թ.՝ 16649.1 մլն. դրամ): Այդ ծախսերի 99.0%-ը, ինչպես նախորդ տարիներին (2014թ.՝ 99.4%; 2015թ.՝ 98.8%), կազմել են հիմնական միջոցների գծով կատարված ծախսերը, որոնց կազմում շարունակում է բարձր մնալ շենքերի և շինությունների բաժինը՝ 82.0% (2014թ.՝ 86.9%; 2015թ.՝ 83.0%): Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի նվազմանը զուգահեռ, կտրուկ նվազել է նաև շենքերի և շինությունների ձեռքբերման ծախսերը (նախորդ տարվա համեմատ 68.7 անգամ)՝ կազմելով ընդամենը 49.0 մլն. դրամ: Վերջին երկու տարվա ընթացքում 4 անգամ նվազել է շենքերի և շինությունների կառուցման ծախսերը, իսկ նախորդ տարվա համեմատ այն նվազել է 5.8%-ով, կազմելով՝ 2298.0 մլն. դրամ: Չնայած շենքերի և շինությունների կառուցման ծախսերի նվազմանը՝ նախորդ տարվա համեմատ ավելացել է նրա տեսակարար կշիռը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերում՝ 17.6% (2015թ.՝ 14.7%): Նախորդ տարվա համեմատ 345.6 մլն. դրամով ավելացել է շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման ծախսերը, ավելացել է նաև նրանց տեսակարար կշիռը ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերում 64.1% (2016թ.՝ 48.2%): Չնայած մեքենաների և սարքավորումների գծով ծախսերի 262.9 մլն. դրամով նվազմանը, ավելացել է նրանց տեսակարար կշիռը ոչ ֆինանսա-

կան ակտիվների գծով ծախսերում կազմելով՝ 13.9 %, նախորդ տարվա 12.5%-ի փոխարեն: Դեռևս շատ փոքր են մնում պաշարների և չարտադրված ակտիվների վրա կատարված ծախսերը:

Աղյուսակ 7. ՀՀ համայնքների ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը, 2014-2016թթ.

Տող	Բովանդակություն	2014թ.		2015թ.		2016թ.	
		Գումարը, մլն. դրամ	Տես. կշիռը (%)	Գումարը, մլն. դրամ	Տես. կշիռը (%)	Գումարը, մլն. դրամ	Տես. կշիռը (%)
1	2	3	4	5	6	7	8
5000	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ, ընդամենը	27522.5	100	16649.1	100	13057.8	100
5100	այդ թվում՝ 1. Հիմնական միջոցներ	27370.9	99.4	16449.0	98.8	12931.7	99.0
5110	այդ թվում՝ Շենքեր և շինություններ	23916.5	86.9	13824.8	83.0	10712.9	82.0
5111	որից՝ - Շենքերի և շինությունների ձեռքբերում	2210.9	8.0	3364.1	20.2	49.0	0.0
5112	- Շենքերի և շինությունների կառուցում	9376.8	34.1	2440.4	14.7	2298.0	17.6
5113	- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	12328.8	44.8	8020.3	48.2	8365.9	64.1
5120	Մեքենաներ և սարքավորումներ	2862.6	10.4	2075.8	12.5	1812.9	13.9
5121	որից՝ - Տրանսպորտային սարքավորումներ	835.4	3.0	484.6	2.9	445.8	3.4
5122	- Վարչական սարքավորումներ	633.1	2.3	612.0	3.7	586.9	4.5
5123	- Այլ մեքենաներ և սարքավորումներ	1394.1	5.1	979.2	5.9	780.2	6.0
5130	Այլ հիմնական միջոցներ	591.8	2.2	548.4	3.3	405.9	3.1
5200	1.2. Պաշարներ	140.9	0.5	162.1	1.0	124.3	1.0
5300	1.3. Բարձրարժեք ակտիվներ	0.0	0.0	1.7	0.0	0.0	0.0
5400	1.4. Չարտադրված ակտիվներ	10.7	0.0	36.3	0.2	1.8	0.0
5411	այդ թվում՝ - Հողեր	10.7	0.0	36.3	0.2	1.8	0.0

«Կառավարության մի շարք որոշումներով հողամաս գույք և դրամական միջոցներ են նվիրաբերվել համայնքներին³⁸, պետական սեփականություն հանդիսացող գույք է օտարվել, որոնց արդյունքում առաջացած ֆինանսական միջոցների 30%-ը ուղղվել են համապատասխան համայնքների մանկապարտեզների նորոգման և տարածքների բարեկարգման աշխատանքներին: «Կետական բյուջեից մարզպետարաններին հատկացված միջոցներով վերանորոգվել են հանրակրթական դպրոցներ և համայնքային սեփականության ենթակառուցվածքներ:

«Կառավարության որոշումներով մի շարք համայնքների վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքների նկատմամբ բացառիկ գերակա հանրային շահ է ճանաչվել:

Վերջին երկու տարիներին համայնքների ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը կրճատվել են մոտ 2.5 անգամ, իսկ նախորդ տարվա համեմատ կրճատվել են 1360.2 մլն. դրամով կամ 18.0%-ով (Աղյուսակ 8), որը հիմնականում պայմանավորված է նրանով, որ համայնքներում քիչ են մնացել վաճառքի ենթակա հիմնական միջոցներ և հողեր: Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2016թ-ին ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը գրեթե ամբողջությամբ ստացվել են հիմնական միջոցների (11.6%) և հողերի (88.4%) իրացումից: Պաշարների և բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր չեն եղել:

Աղյուսակ 8. «Կ համայնքների ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը 2014 – 2016թթ. (մլն. դրամ)

Տող	Բովանդակություն	2014թ.	2015թ.	2016թ.
1	2	3	4	5
6000	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻՑ ՄՈՒՏՔԵՐ, ընդամենը	15354.3	7547.3	6187.1
6100	այդ թվում՝ Հիմնական միջոցների իրացումից մուտքեր	1177.6	736.5	716.6
6110	այդ թվում՝ Անշարժ գույքի իրացումից մուտքեր	936.0	584.2	517.9
6120	Շարժական գույքի իրացումից մուտքեր	1.0	0.9	0.3
6130	Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր	240.6	151.4	198.4
6200	Պաշարների իրացումից մուտքեր	0.0	0.0	0.0
6300	Բարձրարժեք ակտիվների իրացումից մուտքեր	0.0	0.4	0.0
6400	Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր	14176.7	6810.4	5470.5
6410	այդ թվում՝ Հողերի իրացումից մուտքեր	14176.7	6810.4	5470.5

³⁸ «Կառավարության 10.03.2016,234-Ա որոշումը «Կ հեռավոր, սահմանամերձ, բարձր լեռնային, լեռնային, մինչև 1000 բնակիչ ունեցող գյուղական բնակավայրերում անլար (wi-fi) ինտերնետի հասանելիության կետերի տեղադրման ծրագրի շրջանակներում գնված գույքն ընդունելու, ծրագրով ընտրված համայնքներին նվիրաբերելու մասին:

«Կ կառավարության 28.04.2016, 425-Ա որոշումը, «Կ և Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի և միջազգային զարգացման ՕՊԵԿ հիմնադրամի միջև ստորագրված փոխառության համաձայնագրերով իրականացված «Գյուղական կարողությունների ստեղծում» ծրագրի շրջանակներում ձեռք բերված պետական սեփականություն հանդիսացող գույքի կազմից 1,183,931,316 դրամ և 214,551,860 դրամ արժողությամբ գույքը նպատակային նշանակությամբ օգտագործելու նպատակով նվիրաբերել «Կ Տավուշի, Արագածոտնի. Վայոց Ձորի ու Գեղարքունիքի մարզերի համայնքներին:

2016թ-ին համայնքներին պատկանող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերն ամբողջությամբ փոխանցվել են պետությանը, որը, լիազորությունների ապակենտրոնացման առումով, գնահատվում է որպես էական հետընթաց քայլ:

Համաձայն ՀՀ արդարադատության նախարարության Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տվյալների՝ 2017թ. հունվարի 1-ի դրությամբ գրանցված համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (ՀՈԱԿ-ների) թիվը կազմել է 1327, որը 1-ով ավելի է նախորդ տարվա համեմատությամբ: 100% համայնքային սեփականությամբ բաժնետոմսերով առևտրային իրավաբանական անձանց թիվը նվազել է 5-ով և կազմել՝ 423, իսկ պետություն-համայնք մասնակցությամբ առևտրային իրավաբանական անձանց թիվը նվազել է 3-ով և կազմել՝ 213:

Ինչպես արդեն բազմիցս նշվել է, համայնքային սեփականության հիմնական մասը կառուցվել կամ ձեռք է բերվել տասնամյակներ առաջ և անցած տարիների ընթացքում ենթարկվել է ֆիզիկական և բարոյական մաշվածության: Վիճակը 2016թ-ին առանձնապես չի փոխվել և գույքի հիմնական մասը վերանորոգման կարիք ունի, իսկ համայնքների մեծ մասը դեռևս համապատասխան միջոցներ չունեն:

4.2. Համայնքների զարգացման ծրագրերը և բյուջետավարումը

Ինչպես նախկինում բազմիցս նշվել է, Հայաստանի ՏԻ համակարգում երկարաժամկետ պլանավորումը դեռևս լայնորեն չի օգտագործվում, վիճակը 2016թ-ին առանձնապես չի փոխվել, ինչը պայմանավորված է համայնքների ֆինանսական ռեսուրսների խիստ սահմանափակությամբ, համայնքների մեծ մասում որակյալ կադրերի բացակայությամբ, անտեղյակությամբ, ՏԻ ոլորտում տիրող ընդհանուր իրավիճակով և մի շարք այլ պատճառներով:

ՀՀ կառավարության 2016թ. հուլիսի 29-ի նիստի N 29 արձանագրային որոշմամբ հավանություն է տրվել ՀՀ 2016-2025թթ. Տարածքային զարգացման ռազմավարությանը: Տարածքային զարգացման ռազմավարությունն ընդգրկում է համաձայնեցված և առաջնահերթություն հանդիսացող տարածքային զարգացումը, սահմանում է կայուն տնտեսական զարգացման մոտեցումները՝ պահանջելով բոլոր մարզերից (վարչատարածքային միավորներից) ներկայացնել տարածքային զարգացման ռազմավարություններ և գործողությունների պլաններ: Տարածքային զարգացման ռազմավարությունն ուղղված է ՀՀ տարածքների միջև զարգացման անհամաչափությունների հարթեցմանը և ազգային, մարզային ու տեղական իշխանությունների համար տեղերում կարողությունների ստեղծմանն ուղղված ծրագրերի իրականացմանը, միաժամանակ, հնարավորինս նվազեցնելով ծրագրերի անհարկի կրկնություններն ու համընկնումները, կատարված աշխատանքի որակի բարձրացմանը, մարզերում կայուն զարգացման ապահովմանը, որոշումների կայացման գործընթացների ապակենտրոնացմանը և համակցված մոտեցումների կիրառմանը տարածքային ու տեղական զարգացումներում: Յուրաքանչյուր մարզ ունի զարգացման ծրագիր, որը մշակվում է մարզերի զար-

զացման խորհուրդների կողմից՝ ՏԻՄ-երի, մասնավոր ոլորտի, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Ի տարբերություն երկարաժամկետ պլանավորման՝ միջնաժամկետ զարգացման ծրագրեր կազմվում են բոլոր համայնքներում: Համայնքների ՀՀՁԾ-երը միջնաժամկետ պլանավորման ձևերից է, որի հիմնախնդիրները կոնկրետացվում և ապագա գործողությունների պլաններ են դառնում բյուջետային գործընթացում, որտեղ որոշվում են տարեկան առաջնահերթությունները և տեղ են գտնում տվյալ տարվա բյուջեում: ՀՀՁԾ-ն դեռևս քիչ թվով համայնքների համար է հիմք հանդիսանում համայնքի տարեկան բյուջեների կազմման և ծրագրային բյուջետավարման համար:

Ինչպես բազմիցս նշվել է, համայնքների մեծ մասում դեռևս հնգամյա զարգացման ծրագրերի պատշաճ մակարդակով կազմմանը լուրջ ուշադրություն չեն դարձվում, և դրանք առայժմ ձևական բնույթ են կրում: Չնայած այդ ուղղությամբ կատարված որոշ աշխատանքների (ՀՀՁԾ-երի, այդ թվում բազմաբնակավայր համայնքների, մշակման և կառավարման մեթոդաբանություն, մեթոդական ցուցումներ, համայնքի ՀՀՁԾ-ի օրինակելի ձև, բազմաթիվ սեմինարների կազմակերպում, աշխատակիցների վերապատրաստում և այլն)՝ համայնքների մեծ մասի համար հնգամյա զարգացման ծրագրերը առայժմ մնում են որպես ձևական փաստաթղթեր, որոնք էական դերակատարում չունեն համայնքների բյուջեների կազմման և կառավարման ժամանակ:

2016թ-ին բյուջետային գործընթացներին վերաբերող էական փոփոխություններ չեն եղել: Համայնքների մի մասը (հատկապես փոքր և միջին համայնքները) բյուջետային գործընթացը շարունակում է իրականացնել իմիջիայլոց և թերություններով, չեն ապահովվում այդ գործընթացի հրապարակայնությունն ու թափանցիկությունը, անտեսվում են բնակիչների մասնակցության նշանակությունը:

Դեռևս շատ են այն համայնքների թիվը, որոնց բյուջետային միջոցները բավարարում են միայն համայնքի աշխատակազմի պահպանման ծախսերին: Սովորաբար, այդ համայնքներում չկան համապատասխան մասնագետներ, իսկ բյուջեները կազմվում են որպես եկամուտների և ծախսերի նախահաշիվ՝ առանց լուրջ վերլուծությունների և զարգացման ծրագրերի հենքի:

ՀՀ պետական կառավարման համակարգում, ծրագրային բյուջետավարման ներդրմանը զուգահեռ, նմանատիպ աշխատանքների իրականացման անհրաժեշտություն է զգացվում նաև համայնքների բյուջեների մասով, ՏԻ համակարգում ևս արդյունքների վրա հիմնված (ծրագրային, ըստ աշխատանքների կատարման արդյունքների և այլն) բյուջետավարման ժամանակակից մոտեցումները և ձևաչափերը ներդնելու առումով: Այս ուղղությամբ 2016թ-ի ընթացքում կատարվել են որոշակի աշխատանքներ: Մասնավորապես, ԳՄՀԸ աջակցությամբ ՀՖՄ-ն, կիրառելով նախորդ տարի մշակված և հրատարակված «ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում արդյունքահեն բյուջետավարման մեթոդաբանությունը», օրինակելի ձևանմուշները, հարակից այլ փաստաթղթերը, տեխնիկական խորհրդատվություն է մատուցել (սեմինարների կազմակերպում, գործնական աշխատանք և այլն) ՀՀ մոտ 40 պիլոտային համայնքների՝ մշակելու իրենց 2017թ-ի արդյունքահեն (ծրագրային) բյուջեները և առաջնորդվելու դրանցով:

4.3. Համայնքի բյուջեի եկամուտները

2016թ-ին ՀՀ համայնքների բյուջեների ընդհանուր եկամուտները կազմել են 128623.6 մլն. դրամ (2014թ.՝ 114359.1 մլն. դրամ, 2015թ.՝ 128225.2 մլն. դրամ), ինչը նախորդ տարվա համեմատ ավելացել է ընդամենը 398.4 մլն. դրամով, կամ 0.3%-ով, որը աճի տեմպերով վերջին տարիների ամենացածր ցուցանիշն է (Աղյուսակ 9): Այսպես, 3758.5 մլն. դրամով ավելացել են «այլ եկամուտները», ինչը պայմանավորված է պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներով, ավելացել է նաև նրա տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ՝ 37.9% (2015թ.՝ 35.1%): Նախորդ տարվա համեմատությամբ 4123.4 մլն. դրամով նվազել են «պաշտոնական դրամաշնորհները», նվազել է նաև նրա տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ՝ 43.0% (2015թ.՝ 46.4%): Նախորդ տարվա համեմատ 73.7 մլն. դրամով նվազել են «հարկեր և տուրքեր» բաժնի գույքային հարկերն անշարժ գույքից (այդ թվում հողի հարկը), բայց 861.6 մլն. դրամով ավելացել են գույքային հարկերը փոխադրամիջոցներից, ավելացել է նաև վերջինիս տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ: Մի փոքր նվազել են տեղական և պետական տուրքերը, իսկ նրանց տեսակարար կշիռներն ընդհանուրի մեջ մնացել են մոտավորապես նույնը: Էականորեն (մոտ 4 անգամ) նվազել է վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքերը, մոտ 4 անգամ էլ նվազել է նաև նրա տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ:

**Աղյուսակ 9. ՀՀ համայնքների բյուջեների եկամուտների տեսակները
և նրանց տեսակարար կշիռներն ընդհանուր եկամուտների մեջ,
2014-2016թթ.**

	Եկամտատեսակները	2014թ.		2015թ.		2016թ.	
		Գումարը, մլն. դրամ	Տես. կշիռը, %	Գումարը, մլն. դրամ	Տես. կշիռը, %	Գումարը, մլն. դրամ	Տես. կշիռը, %
1	2	3	4	5	6	7	8
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	114359.1	100	128225.2	100	128623.6	100
1100	այդ թվում՝ 1. Հարկեր և տուրքեր	23260.1	20.3	23790,3	18.6	24553.6	19.1
1110	այդ թվում՝ 1.1.Գույքային հարկեր անշարժ գույքից /այդ թվում հողի հարկ/	9488.6	8.3	9537.1	7.4	9463.4	7.4
1121	1.2.Գույքային հարկեր փոխադրամիջոցներից	9122.2	8.0	9795.9	7.6	10657.5	8.3
1131	1.3.Տեղական տուրքեր	3892.8	3.4	3760.1	2.9	3748.3	2.9
1161	1.4.Պետական տուրքեր	756.5	0.7	697.2	0.5	684.4	0.5
1200	2.ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՈՒՄՆԵՐ	55639.1	48.7	59435.1	46.4	55311.7	43.0
1300	3.ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	35459.9	31.0	44999.8	35.1	48758.3	37.9
1342	Այդ թվում՝ Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ	25301.8	22.1	34827.0	27.2	38684.9	30.1
1392	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր	7220.4	6.3	4149,6	3.2	1036.2	0.8

Համայնքների բյուջեների սեփական եկամուտները 2016թ-ին կազմել են 34627.0 մլն. դրամ (2015թ.՝ 33963.1 մլն. դրամ) կամ ընդհանուր եկամուտների 26.9%-ը (2015թ.՝ 26.5%): Ընդ որում, համայնքների բյուջեների սեփական եկամուտներն աճել են 663.9 մլն. դրամով, իսկ նրանց տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ՝ 0.4%-ով: Բերված տվյալները ցույց են տալիս, որ դեռևս մեծ է համայնքների կախվածությունը պաշտոնական դրամաշնորհներից:

ՀՀ համայնքների բյուջեների հանրագումարի մեջ դեռևս զգալի է մնում Երևան համայնքի բյուջեի եկամուտների տեսակարար կշիռը՝ 2016թ-ին կազմելով 60.1% (2015թ.՝ 59.7%), այդ թվում՝ շենքերի և շինությունների գույքահարկ՝ 76.3%, գույքային հարկեր փոխադրամիջոցներից՝ 54.1%, տեղական տուրքեր՝ 82.4%, պաշտոնական

դրամաշնորհներ՝ 34.8%, իսկ պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցները՝ 99.0% (Աղյուսակ 10):

Աղյուսակ 10. Երևանի բյուջեի եկամուտների տեսակարար կշիռները ՀՀ համայնքների բյուջեների ընդհանուր եկամուտների կազմում, 2016թ.

	Եկամտատեսակները	Ընդամենը ՀՀ համայնքների բյուջեների եկամուտները, մլն. դրամ	Այդ թվում՝ Երևանի բյուջեի եկամուտ- ները մլն. դրամ	Երևանի բյուջեի եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ, (%)
1	2	3	4	5
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	128623.6	77331.1	60.1
1100	Այդ թվում՝ 1.Հարկեր և տուրքեր	24553.6	14220.3	57.9
1110	Այդ թվում՝ 1.1.Գույքային հարկեր անշարժ գույքից	9463.4	4985.0	52.7
1111	Այդ թվում՝ Գույքահարկ շենքերի և շինությունների համար	5702.1	4352.3	76.3
1112	Այդ թվում՝ Հողի հարկ	3761.3	632.6	16.8
1120	1.2.Գույքային հարկեր այլ գույքից	10657.5	5769.5	54.1
1121	Այդ թվում՝ փոխադրամիջոցներից	10657.5	5769.5	54.1
1131	1.3.Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ, այդ թվում՝ Տեղական տուրքեր	3748.3	3089.5	82.4
1150	1.4.Այդ թվում՝ Այլ տեղական տուրքեր	32.3	30.0	92.9
1160	1.5.Այլ պարտադիր վճարներ	684.4	376.3	55.0
1200	2.ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	55311.7	19268.5	34.8
1300	3.ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	48758.3	43642.4	89.5
1342	Այդ թվում՝ Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ	38684.9	38316.6	99.0
1392	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր	1036.2	0	0
1393	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ	697.7	212.1	30.4

Նախորդ տարվա համեմատ, 4123.4 մլն. դրամով նվազել են պաշտոնական դրամաշնորհները (Աղյուսակ 11): Չնայած պաշտոնական դրամաշնորհների նվազմանը՝ 3055.4 մլն. դրամով կամ 7%-ով ավելացել են պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաները, ավելացել է նաև նրա տեսակարար կշիռը պաշտոնական դրամաշնորհների մեջ՝ 85.1% (2015թ.՝ 74.1%): Դրան հակառակ, նվազել են պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաները՝ մոտ 2.6 անգամ, պետական բյուջեից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար տրամադրվող նպատակային հատկացումները (սուբվենցիաները)՝ մոտ 38%-ով, պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար տրամադրվող նպատակային հատկացումները (սուբվենցիաները)՝ 3.6 անգամ, համապատասխանաբար նվազել են նաև նրանց տեսակարար կշիռները պաշտոնական դրամաշնորհներում: ՀՀ կառավարության մի շարք որոշումներով ՀՀ պետական բյուջեի պահուստային ֆոնդից մարզպետարաններին տրամադրվել են գումարներ, համայնքներին ընթացիկ և կապիտալ սուբվենցիաներ, ինչպես նաև այլ դրամական միջոցներ:

Աղյուսակ 11. Համայնքների բյուջեների եկամուտների պաշտոնական դրամաշնորհները, 2014-2016թթ.

	Եկամտատեսակները	2014թ.		2015թ.		2016թ.	
		Գումարը, մլն. դրամ	Տես. կշիռը, %	Գումարը, մլն. դրամ	Տես. կշիռը, %	Գումարը, մլն. դրամ	Տես. կշիռը, %
1	2	3	4	5	6	7	8
1200	2.ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	55639.1	100	59435.1	100	55311.7	100
1210	Այդ թվում՝ 2.1 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից	0.8	0	0.8	0	9.1	0
1220	2.2 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից	0	0	0	0	0	0
1230	2.3 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից	5.0	0	0	0	0	0
1240	2.4 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝	1.8	0	0	0	22.0	0

	ստացված միջազգային կազմակերպություններից						
1250	2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	55224.0	99.3	58481.4	98.4	55015.6	99.5
1251	Որից՝ Ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	38957.7	70.0	44018.7	74.1	47074.1	85.1
1254	Բ) Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ	8029.8	14.4	4340.9	7.3	1679.1	3.0
1257	Գ) Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	8236.5	14.8	10121.8	17.0	6262.4	11.3
1260	2.6. Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	407.5	0.7	952.9	1.6	265.0	0.5
1261	Այդ թվում՝ Ա) Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	407.5	0.7	952.9	1.6	265.0	0,5
1262	Բ) ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ	0	0	0	0	0	0

2016թ-ին ստացվել են ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ այլ պետություններից՝ 9.1 մլն. դրամ, և կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններից՝ 22.0 մլն. դրամ (Աղյուսակ 11): Այլ պետություններից կապիտալ և միջազգային կազմակերպություններից ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ չեն ստացվել:

2016թ-ին, նախորդ տարվա համեմատությամբ, 3828.9 մլն. դրամով կամ 3.7 անգամ նվազել են համայնքների ֆոնդային բյուջեների եկամուտները, նվազել է նաև նրա տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ՝ 1.1% (2015թ.՝ 4.1%): Ֆոնդային բյուջեների եկամուտների հիմնական մասը՝ 73.4%-ը, ինչպես նախորդ տարիներին, բաժին է ընկնում վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքերին: Աննախադեպ (166 անգամ) նվազել է Երևան համայնքի ֆոնդային բյուջեն՝ կազմելով ընդամենը 18.4 մլն. դրամ, կտրուկ նվազել է նաև նրա տեսակարար կշիռն ՀՀ համայնքների ընդհանուր ֆոնդային բյուջեներում՝ 1.3% (2015թ.՝ 58.4%) (Աղյուսակ 12):

Աղյուսակ 12. ՀՀ համայնքների ֆոնդային բյուջեների եկամուտները և Երևանի ֆոնդային բյուջեի եկամուտների տեսակարար կշիռը դրանց մեջ, 2016թ.

Տող	Եկամուտները	Ընդամենը համայնքների, մլն. դրամ	Այդ թվում՝ Երևանի, մլն. դրամ	Երևանի տեսակարար կշիռը, (%)
1	2	3	4	5
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	1401.5	18.4	1.3
1200	2.ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	287.0	0.0	0.0
1300	3.ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	1114.5	18.4	1.7
1380	3.8 Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	85.4	14.5	17.0
1392	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր	1029.1	0.0	0.0

2016թ-ին համայնքների բյուջեների եկամուտների կառուցվածքը էական փոփոխությունների չի ենթարկվել:

Ինչպես նախորդ տարիներին, 2016թ-ին ևս պետական բյուջեին ամրագրվող եկամտահարկից, շահութահարկից և բնապահպանական վճարներից համայնքներին մասհանումներ չեն կատարվել:

2016թ-ին համայնքների բյուջեների միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 6808.4 մլն. դրամ, այդ թվում վարչական բյուջե՝ 317.2 մլն. դրամ և ֆոնդային բյուջե՝ 6491.2մլն. դրամ: Այն հիմնականում ուղղվել է բյուջեների նախորդ տարում ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված առկա պարտավորությունների կատարմանը: 2016թ-ին համայնքների բյուջեների ընդամենը դեֆիցիտը (պակասուրդը) կազմել է -1537.3 մլն. դրամ, որից վարչական բյուջեի հավելուրդը կազմել է 3932.3 մլն. դրամ, իսկ ֆոնդային բյուջեի դեֆիցիտը (պակասուրդը)՝ -5469.6 մլն. դրամ: Այդ պակասուրդը ֆինանսավորվել է հիմնականում ի հաշիվ համայնքների բյուջեների տարեսկզբի ազատ մնացորդների:

4.4. Պարտքի կառավարումը

2016թ-ի ընթացքում համայնքներին արտաքին աղբյուրներից վարկեր և այլ համայնքներից փոխատվություններ չեն ստացել:

2016թ-ին ևս ՏԻՄ-երի կողմից պարտատոմսեր թողարկելու և տեղաբաշխելու կարգ չի սահմանվել և համայնքներն այդ ընթացքում պարտատոմսեր չեն թողարկել:

4.5. Ֆինանսական հաշվետվողականությունը

2016թ-ին համայնքների կողմից ներկայացվող հաշվետվությունները սահմանված ձևով և հիմնականում օրենքով սահմանված ժամկետներում (եղել են որոշ թերություններ և առանձին ուշացման դեպքեր) ներկայացվել են համապատասխան մարմիններին (համայնքի ավագանուն, մարզպետին և այլն):

2016թ. 1-ին եռամսյակում համայնքների բյուջեների հրապարակայնությունն ու թափանցիկությունը (համայնքի բյուջեի կատարման եռամսյակային և տարեկան հաշվետվությունները, հաստատված բյուջեն և նրանում կատարվող փոփոխությունները) ապահովելու նպատակով, 896 համայնքներից ցուցատախտակներին և տեսանելի վայրերում տեղադրել են 892, հեռուստատեսությամբ հեռարձակել են 56, թերթերում տպագրել են 116, ինտերնետային կայք էջում տեղադրել են 606 համայնքներ: Դեռևս կան փոքր ու միջին համայնքներ, որոնք չեն հրապարակում ոչ միայն իրենց բյուջեների կատարման հաշվետվությունները, այլև հաստատված բյուջեները:

2016թ-ին ներքին աուդիտի համակարգը (ներդրվել է 2012թ-ից) շարունակել է գործել 45³⁹ քաղաքային համայնքներից 41-ում՝ բացառությամբ 4 քաղաքային համայնքների (Բերդ, Մարալիկ, Մեղրի, Վարդենիս), որտեղ ներքին աուդիտի ստորաբաժանումները դեռևս համալրված չեն: Վիճակը չի փոխվել նաև գյուղական համայնքներում և նրանց հիմնական մասը 2016թ-ին նույնպես չի անցել ներքին աուդիտ և շարունակում է աուդիտորի հաստիք չունենալ: Պատճառաբանությունը նույնն է՝ համապատասխան մասնագետներ չկան, միջոցներ՝ նույնպես:

Դեռևս շատ քիչ են արտաքին աուդիտ անցկացնող համայնքները:

³⁹ 49 քաղաքային համայնքներից 4-ը (Ախթալա, Թումանյան, Շամլուղ, Դաստակերտ) իրենց ներքին աուդիտներն իրականացրել են ՀՀ Լոռու և Սյունիքի մարզպետարանների օգնությամբ:

5. ՏԻՄ-ԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնվելով ՏԻՄ-երի լիազորությունների և համայնքների ֆինանսական միջոցների համապատասխանության գնահատման բնագավառում միջազգային փորձի վրա՝ ստորև բերվում են նախկին տարիներին ընտրված ֆինանսական ցուցանիշների գնահատման արդյունքները 2016թ. համար:

Տեղական բյուջեների ծախսերի տեսակարար կշիռները տվյալ երկրի հանրային ծախսերում և համախառն ներքին արդյունքում (ՀՆԱ-ում) բնութագրում են այդ երկրում իշխանության ապակենտրոնացման աստիճանը⁴⁰: Եվրամիության անդամ երկրներում տեղական ինքնակառավարման միայն տեղական մակարդակի (առանց տարածաշրջանային մակարդակի)՝ տեղական բյուջեների ծախսերի տեսակարար կշիռների միջինը հանրային ծախսերում կազմել է 23.4%, իսկ ՀՆԱ-ում՝ 10.9% (Աղյուսակ 13):

Աղյուսակ 13. Եվրամիության անդամ երկրների և Հայաստանի տեղական բյուջեների ծախսերի տեսակարար կշիռները հանրային ծախսերում և ՀՆԱ-ում (2016թ. տվյալներով)⁴¹

Երկրներ	Տեղական բյուջեների ծախսերը հանրային ծախսերում (%)	Տեղական բյուջեների ծախսերը ՀՆԱ-ում (%)
Դանիա	65,1	34,9
Շվեդիա	51,0	25,5
Ֆինլանդիա	40,1	22,5
Հոլանդիա	31,8	13,9
Լեհաստան	31,3	12,9
Իտալիա	28,9	14,3
Լատվիա	26,4	9,6
Ռումինիա	26,0	9,0
Չեխիա	25,7	10,2
Մեծ Բրիտանիա	24,9	10,5
Իսրայիլ	24,6	11,9
ԵՄ անդամ երկրների միջինը	23,4	10,9
Էստոնիա	23,3	9,4
Լիտվա	22,9	7,8
Ֆրանսիա	19,7	11,1

⁴⁰ Հայաստանում հանրային ծախսերի տակ դիտարկվում են ՀՀ համախմբված բյուջեի ծախսերը, իսկ ՀՆԱ-ի տակ դիտարկվում է անվանական ՀՆԱ-ն:

⁴¹ Աղբյուրը՝ http://appsso.eurostat.ec.europa.eu/nui/show.do?dataset=gov_10a_main&lang=en

Բուլղարիա	19,5	6,9
Սլովենիա	18,2	8,3
Գերմանիա	18,1	8,0
Ավստրիա	16,8	8,6
Սլովակիա	15,8	6,6
Իսպանիա	13,5	5,7
Բելգիա	13,2	7,0
Հունգարիա	12,8	6,1
Պորտուգալիա	12,7	5,7
Լյուքսեմբուրգ	11,9	4,9
*Հայաստան	8,8	2,56
Իռլանդիա	8,0	2,3
Հունաստան	7,0	3,5
Կիպրոս	3,8	1,5
Մալթա	1,4	0,5

ՀՀ համայնքների բյուջեների հանրագումարի տեսակարար կշիռը ՀՀ 2016թ. համախմբված բյուջեում եկամուտների գծով կազմել է 10.7%, իսկ ծախսերի գծով՝ 8.8% (Հավելված 6): Նախորդ տարվա համեմատ, 2016թ-ին այս ցուցանիշը եկամուտների գծով մնացել է նույնը, իսկ ծախսերի գծով նվազել է մոտ 0.1%-ով: Հայաստանն այդ ցուցանիշներով դեռևս էականորեն զիջում է Եվրամիության անդամ երկրներին՝ մոտ 2.7 անգամ փոքր լինելով այդ երկրների միջին ցուցանիշից, և գերազանցում է միայն Իռլանդիային, Հունաստանին, Կիպրոսին ու Մալթային:

Համայնքների բյուջեների ծախսերի հանրագումարի տեսակարար կշիռը երկրի ՀՆԱ-ում 2004-2009թթ. Հայաստանում տատանվել է 1.3-1.7%-ի սահմաններում, 2010-2015թթ.՝ 2.3-2.57%-ի սահմաններում, իսկ 2016թ-ին այն, 2015թ-ի համեմատ, նվազել է մոտ 0.1%-ով՝ կազմելով 2.56%⁴²: Այս ցուցանիշը մոտ 4.3 անգամ փոքր է Եվրամիության անդամ երկրների միջին ցուցանիշից և գերազանցում է միայն Իռլանդիայի, Կիպրոսի ու Մալթայի նույն ցուցանիշին:

Այսպիսով, Հայաստանում իշխանության ապակենտրոնացման աստիճանը 2016թ-ին շարունակել է էականորեն ցածր մնալ Եվրամիության անդամ երկրներում իշխանության ապակենտրոնացման աստիճանից:

ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ Երևան քաղաքի) 2016թ. բյուջեների ամփոփ եկամուտների փաստացի կատարումը տարեկան հաստատված պլանի նկատմամբ կազմել է 99.6%, իսկ տարեկան ճշտված պլանի նկատմամբ՝ 100.6%: Ծախսերի գծով, ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ՝ Երևան քաղաքի) 2016թ. բյուջեների կատարումը տարեկան հաստատված պլանի նկատմամբ կազմել է 96.7%, իսկ տարեկան ճշտված պլանի նկատմամբ՝ 94.9% (Աղյուսակ 14):

⁴² Հայաստանի 2016թ. տարեկան անվանական ՀՆԱ-ն ընթացիկ գներով կազմել է 5,079.9 մլրդ դրամ, աղբյուրը՝ www.armstat.am

Համեմատելով ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ՝ Երևան քաղաքի) 2016թ. բյուջեների եկամուտների և ծախսերի փաստացի կատարողականները 2015թ. նույն ցուցանիշների հետ, կարելի է նկատել, որ, և՛ եկամուտների, և՛ ծախսերի գծով դրանք 2015թ-ին զգալիորեն բարձր են, քան 2016թ-ին: Սա նշանակում է, որ նախորդ տարվա համեմատ 2016թ-ին նկատելիորեն իջել է համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի կատարողական ընդհանուր կարգապահությունը:

Աղյուսակ 14. ՀՀ համայնքների 2016թ. բյուջեների ընդհանուր եկամուտների, ծախսերի և հավելուրդի / պակասուրդի տարեկան հաստատված, ճշտված պլանները և փաստացի կատարումը (հազար դրամ)⁴³

Հ/հ	Հոդվածի անվանումը	2016թ.				
		Տարեկան հաստատված պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստացի	Կատարման տոկոսը հաստատված պլանի նկատմամբ, %	Կատարման տոկոսը ճշտված պլանի նկատմամբ, %
	ՀՀ բոլոր համայնքների բյուջեների					
1	Եկամուտներ, ընդամենը	129,110,594.0	127,911,590.2	128,623,629.6	99.6	100.6
2	Ծախսեր, ընդամենը	134,565,936.9	137,125,539.1	130,160,976.1	96.7	94.9
3	Հավելուրդ (+) կամ պակասուրդ (-)	-5,455,342.9	-9,213,948.9	-1,537,346.5	x	x
	այդ թվում՝ Երևան քաղաքի բյուջեի					
1	Եկամուտներ, ընդամենը	78,219,530.5	75,704,536.0	77,331,108.2	98.9	102.1
2	Ծախսեր, ընդամենը	78,369,530.5	78,269,754.1	78,481,116.0	100.1	100.3
3	Հավելուրդ (+) կամ պակասուրդ (-)	-150,000.0	-2,565,218.1	-1,150,007.8	x	x
	այդ թվում՝ ՀՀ բոլոր համայնքների՝ առանց Երևան քաղաքի, բյուջեների					
1	Եկամուտներ, ընդամենը	50,891,063.5	52,207,054.2	51,292,521.4	100.8	98.2
2	Ծախսեր, ընդամենը	56,196,406.4	58,855,785.0	51,679,860.1	92.0	87.8
3	Հավելուրդ (+) կամ պակասուրդ (-)	-5,305,342.9	-6,648,730.8	-387,338.7	x	x

Երևան քաղաքի 2016թ. բյուջեի եկամուտների փաստացի կատարումը տարեկան հաստատված պլանի նկատմամբ կազմել է 98.9%, իսկ տարեկան ճշտված պլանի նկատմամբ՝ 102.1%: Ծախսերի գծով, Երևան քաղաքի 2016թ. բյուջեի կատարումը տարեկան հաստատված պլանի նկատմամբ կազմել է 100.1%, իսկ տարեկան ճշտված պլանի նկատմամբ՝ 100.3%: Վերջին ցուցանիշները նկատելիորեն ավելի բարձր են,

⁴³ Աղբյուրները՝ www.minfin.am և www.yerevan.am

քան ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ՝ Երևանի) 2016թ. հաստատված և ճշտված բյուջեների ծախսերի կատարման մակարդակները:

Համեմատելով Երևանի 2016թ. հաստատված և ճշտված բյուջեների եկամուտների և ծախսերի փաստացի կատարողականները 2015թ. նույն ցուցանիշների հետ, կարելի է նկատել, որ 2016թ-ին դրանք համապատասխանաբար ավելի ցածր են, քան 2015թ-ին:

Եկամուտների գծով, **ՀՀ բոլոր համայնքների (առանց Երևան քաղաքի) 2016թ. բյուջեների կատարումը** տարեկան հաստատված պլանի նկատմամբ կազմել է 100.8%, իսկ տարեկան ճշտված պլանի նկատմամբ՝ 98.2%: Ծախսերի գծով, ՀՀ բոլոր համայնքների (առանց Երևան քաղաքի) 2016թ. բյուջեների կատարումը տարեկան հաստատված պլանի նկատմամբ կազմել է 92.0%, իսկ տարեկան ճշտված պլանի նկատմամբ՝ 87.8%: Սա նշանակում է, որ ՀՀ համայնքներում դեռևս կան որոշակի խնդիրներ՝ կապված բյուջեների եկամուտների և հատկապես ծախսերի ճշգրիտ կանխատեսումների, պլանավորման և, հետագայում նաև, դրանց ճշտման և պատշաճ կատարման հետ:

Փաստորեն, ՀՀ բոլոր համայնքների (առանց Երևան քաղաքի) 2016թ. ճշտված բյուջեների եկամուտների կատարման մակարդակը մոտ 2.4%-ով ավելի ցածր է, քան ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ՝ Երևանի) 2016թ. նույն ցուցանիշը, իսկ ՀՀ բոլոր համայնքների (առանց Երևան քաղաքի) 2016թ. հաստատված և ճշտված բյուջեների ծախսերի կատարման մակարդակները, ավելի վատ, համապատասխանաբար մոտ 4.7%-ով և 7.1%-ով ավելի ցածր են, քան ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ՝ Երևանի) 2016թ. նույն ցուցանիշները:

Համայնքների ֆինանսական ապահովվածության կարևոր հարաբերական ցուցանիշներից են **բնակչության մեկ շնչին ընկնող՝ համայնքների բյուջեների եկամուտը և ծախսը**: ՀՀ համայնքների (ներառյալ՝ Երևանի) 2012-2016թթ. բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով (Աղյուսակ 15, Գծապատկեր 2) բացարձակ արժեքով տարեցտարի զգալիորեն աճել է՝ 2012թ. 31,556 ՀՀ դրամից (մոտ 78.5 ԱՄՆ դոլարից) 2016թ-ին հասնելով 43,074 դրամի (մոտ 89.6 դոլարի): Համապատասխանաբար, ՀՀ համայնքների (ներառյալ՝ Երևանի) 2012-2016թթ. բյուջեների փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով (Աղյուսակ 15, Գծապատկեր 3) 2012թ. 32,196 դրամից (մոտ 80.1 դոլարից) 2016թ-ին հասել է 43,589 դրամի (մոտ 90.6 դոլարի):

Աղյուսակ 15. ՀՀ համայնքների 2012-2016թթ. բյուջեների՝ բնակչության մեկ շնչին ընկնող եկամուտը և ծախսը (ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով) *

Ցուցանիշի անվանումը	2012	2013	2014	2015	2016
ՀՀ (ներառյալ՝ Երևանի) բնակչության ընդհանուր թիվը տվյալ տարվա տարեվերջի դրությամբ (հազ. մարդ)	3,026.9	3,017.1	3,010.6	3,001.4	2,986.1
Երևանի բնակչության ընդհանուր թիվը տվյալ տարվա տարեվերջի դրությամբ (հազ. մարդ)	1,066.3	1,068.3	1,071.5	1,072.4	1,075.8
ՀՀ (առանց Երևանի) բնակչության ընդհանուր թիվը տվյալ տարվա տարեվերջի դրությամբ (հազ. մարդ)	1,960.6	1,948.8	1,939.1	1,929.0	1,910.3
Մեկ ԱՄՆ դոլարի տարվա միջին փոխարժեքը (ՀՀ դրամ)	402	410	416	478	481
Սպառողական գների ինդեքսը (տարեկան, %)	102.6	105.8	103.0	103.7	98.6
ՀՀ համայնքների (ներառյալ՝ Երևանի) բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով (ՀՀ դրամ)	31,556	35,068	37,985	42,722	43,074
Երևանի բյուջեի փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով (ՀՀ դրամ)	53,688	59,597	63,475	71,393	71,882
ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով (ՀՀ դրամ)	19,519	21,621	23,901	26,783	26,851
ՀՀ համայնքների (ներառյալ՝ Երևանի) բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար)	78.5	85.5	91.3	89.4	89.6
Երևանի բյուջեի փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար)	133.6	145.4	152.6	149.4	149.4
ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար)	48.6	52.7	57.5	56.0	55.8
ՀՀ համայնքների (ներառյալ՝ Երևանի) բյուջեների փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով (ՀՀ դրամ)	32,196	34,182	38,078	43,060	43,589
Երևանի բյուջեի փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով (ՀՀ դրամ)	55,412	58,187	64,484	71,875	72,951
ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեների փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով (ՀՀ դրամ)	19,570	21,022	23,487	27,041	26,851
ՀՀ համայնքների (ներառյալ՝ Երևանի) բյուջեների փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար)	80.1	83.4	91.5	90.1	90.6
Երևանի բյուջեի փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար)	137.8	141.9	155.0	150.4	151.7
ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեների փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով (ԱՄՆ դոլար)	48.9	51.3	56.5	56.6	55.8


*) Աղբյուրները՝ www.armstat.am և www.minfin.am

Երևանի 2012-2016թթ. բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով բարձրանալով արժեքով տարեցտարի զգալիորեն աճել է՝ 2012թ. 53,688 դրամից (մոտ 133.6 դոլարից) 2016թ-ին հասնելով 71,882 դրամի (մոտ 149.4 դոլարի): Համապատասխանաբար, Երևանի 2012-2016թթ. բյուջեների փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով 2012թ.

55,412 ՀՀ դրամից (մոտ 137.8 դոլարից) 2016թ-ին հասել է 72,951 դրամի (մոտ 151.7 դոլարի):


ՀՀ համայնքների (առանց Երևանի) 2012-2016թթ. բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով բացարձակ արժեքով տարեցտարի որոշ չափով աճել է՝ 2012թ. 19,519 դրամից (մոտ 48.6 դոլարից) 2016թ-ին հասնելով ընդամենը 26,851 դրամի (մոտ 55.8 դոլարի): Համապատասխանաբար, ՀՀ համայնքների (առանց Երևանի) 2012-2016թթ. բյուջեների փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով 2012թ. 19,570 դրամից (մոտ 48.9 դոլարից) 2016թ-ին հասել է ընդամենը 26,851 դրամի (մոտ 55.8 դոլարի):

Գծապատկեր 2. ՀՀ համայնքների 2012-2016թթ. բյուջեների՝ բնակչության մեկ շնչին ընկնող փաստացի եկամուտը (ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով)



Սակայն, եթե հաշվի առնենք նաև Հայաստանում սպառողական գների ինդեքսի տարեցտարի փոփոխությունը (Աղյուսակ 15), ապա բնակչության մեկ շնչին մատուցվող համայնքային ծառայությունների ընդհանուր ծախսերի չափը տարիների ընթացքում զգալի փոփոխության չի ենթարկվել և նկատելի դրական ազդեցություն չի ունեցել բնակչության ընդհանուր կենսամակարդակի վրա, իսկ փոքր ու միջին համայնքների բնակչության կենսամակարդակի վրա, ընդհակառակը, այն նույնիսկ բացասական ազդեցություն է ունեցել:

Գծապատկեր 3. ՀՀ համայնքների 2012-2016թթ. բյուջեների՝ բնակչության մեկ շնչին ընկնող փաստացի ծախսը (ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով)



Ցուցանիշների առանձին խումբ են կազմում ՏԻՄ-երին օրենքով տրված լիազորությունների ֆինանսական ապահովման ըստ նրանց գործունեության բնագավառների կամ **համայնքների բյուջեների ծախսերն ըստ գործառական դասակարգման** (Աղյուսակ 16):

2016թ-ին ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերի տեսակարար կշիռը **ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների** ընդհանուր ծախսերում (Գծապատկեր 4) կազմել է 22.4%, որը 0.3%-ով ցածր է 2015թ-ի ցուցանիշից:

Համայնքների 2016թ. բյուջեների ընդհանուր ծախսերում ամենամեծ տեսակարար կշիռն ունեն կրթության ոլորտի ծախսերը՝ 31.2% (2015թ-ին՝ 30.2%), այդ թվում՝ նախադպրոցական կրթություն՝ 12.3%, տարրական ընդհանուր կրթություն՝ 5.3%, միջնակարգ ընդհանուր կրթություն՝ 6.9%, արտադպրոցական դաստիարակություն՝ 6.0% և այլ դասերին չպատկանող կրթություն՝ 0.8%:

Աղյուսակ 16. ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի և առանց Երևանի) և Երևանի 2016թ. բյուջեների փաստացի ծախսերն՝ ըստ գործառական դասակարգման


Հ/հ	Ծախսի անվանումը	2016թ.					
		ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների փաստացի ծախսերը, հազ. դրամ	Տեսակարար կշիռը, %	Երևանի բյուջեի փաստացի ծախսերը, հազ. դրամ	Տեսակարար կշիռը, %	ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեների փաստացի ծախսերը, հազ. դրամ	Տեսակարար կշիռը, %
	Ընդամենը ծախսեր*, այդ թվում՝	130,160,976.1	100	78,481,116.0	100	51,679,860.1	100
	Վարչական բյուջե	124,326,068.1	95.5	76,050,996.8	96.9	48,275,071.3	93.4
	Ֆոնդային բյուջե	6,871,107.3	5.3	2,430,119.2	3.1	4,440,988.1	8.6
1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	29,148,093.2	22.4	7,623,841.8	9.7	21,524,251.4	41.6
2	Պաշտպանություն	27,362.1	0.0	19,134.7	0.0	8,227.4	0.0
3	Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	650.0	0.0	0.0	0.0	650.0	0.0
4	Տնտեսական հարաբերություններ, այդ թվում՝	8,787,077.9	6.8	7,861,252.3	10.0	925,825.6	1.8
4.1	Ընդհանուր բնույթի փոխափոխական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերություններ	48,540.4	0.0	0.0	0.0	48,540.4	0.1
4.2	Գյուղատնտեսություն, անտառային փոխափոխական, ձկնորսություն և որսորդություն	650,026.2	0.5	70,362.4	0.1	579,663.8	1.1
4.3	Վառելիք և էներգետիկա	126,769.4	0.1	0.0	0.0	126,769.4	0.2
4.4	Լեռնաարդյունահանում, արդյունաբերություն և շինարարություն	2,740.5	0.0	0.0	0.0	2,740.5	0.0
4.5	Տրանսպորտ	12,833,701.2	9.9	9,683,464.3	12.3	3,150,236.9	6.1
4.6	Կապ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
4.7	Այլ բնագավառներ	25,550.0	0.0	19,945.0	0.0	5,605.0	0.0
4.8	Տնտեսական հարաբերությունների գծով հեղափոխական և նախագծային աշխատանքներ	4,538.5	0.0	0.0	0.0	4,538.5	0.0
4.9	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չսպարկանող)	-4,904,788.3	-3.8	-1,912,519.4	-2.4	-2,992,268.9	-5.8
5	Շրջակա միջավայրի պաշտպանություն, այդ թվում՝	11,468,199.6	8.8	7,609,709.8	9.7	3,858,489.8	7.5
5.1	Աղբահանում	8,880,914.5	6.8	5,436,824.2	6.9	3,444,090.3	6.7
5.2	Կեղտաջրերի հեռացում	115,040.0	0.1	0.0	0.0	115,040.0	0.2
5.3	Շրջակա միջավայրի աղբորոման դեմ պայքար	62,119.7	0.0	38,567.0	0.0	23,552.7	0.0
5.4	Կենսաբազմազանության և բնության պաշտպանություն	23,571.1	0.0	0.0	0.0	23,571.1	0.0
5.5	Շրջակա միջավայրի պաշտպանության գծով հեղափոխական և նախագծային աշխատանքներ	3,046.8	0.0	0.0	0.0	3,046.8	0.0

5.6	Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	2,383,507.6	1.8	2,134,318.7	2.7	249,188.9	0.5
6	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն, այլ թվում՝	16,740,053.5	12.9	12,096,944.0	15.4	4,643,109.5	9.0
6.1	Բնակարանային շինարարություն	479,994.2	0.4	147,325.9	0.2	332,668.3	0.6
6.2	Համայնքային զարգացում	534,158.5	0.4	0.0	0.0	534,158.5	1.0
6.3	Ջրամատակարարում	8,150,625.1	6.3	7,142,102.2	9.1	1,008,522.9	2.0
6.4	Փողոցների լուսավորում	3,909,741.2	3.0	2,376,499.6	3.0	1,533,241.6	3.0
6.5	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	22,687.3	0.0	12,149.0	0.0	10,538.3	0.0
6.6	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	3,642,847.1	2.8	2,418,867.4	3.1	1,223,979.7	2.4
7	Առողջապահություն	432,052.5	0.3	386,880.5	0.5	45,172.0	0.1
8	Հանգիստ, մշակույթ և կրոն	7,860,291.5	6.0	2,857,125.3	3.6	5,003,166.2	9.7
9	Կրթություն	40,651,871.6	31.2	27,307,781.1	34.8	13,344,090.5	25.8
9.1	Նախադպրոցական կրթություն	15,993,082.0	12.3	7,561,794.0	9.6	8,431,288.0	16.3
9.2	Տարրական ընդհանուր կրթություն	6,838,127.3	5.3	6,740,051.4	8.6	98,075.9	0.2
9.3	Միջնակարգ ընդհանուր կրթություն	9,017,624.4	6.9	8,904,480.0	11.3	113,144.4	0.2
9.4	Արտադպրոցական դաստիարակություն	7,746,745.1	6.0	3,392,253.5	4.3	4,354,491.6	8.4
9.5	Կրթություն (այլ դասերին չպատկանող)	1,056,292.8	0.8	709,202.2	0.9	347,090.6	0.7
10	Սոցիալական պաշտպանություն	3,899,812.6	3.0	1,789,622.1	2.3	2,110,190.5	4.1
11	Հիմնական բաժինների չդասվող պահուստային ֆոնդեր*	11,145,511.5	8.6	10,928,824.3	13.9	216,687.2	0.4

*) Առանց վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարված հատկացումների. ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեներում՝1,036,199.3 հազ. դրամ, Երևանի բյուջեում՝ 0.0 հազ. դրամ, ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեներում՝1,036,199.3 հազ. դրամ:

2015թ-ի համեմատ, մոտ 0.8%-ով նվազել է հանգիստ, մշակույթ և կրոնի ոլորտին հատկացված ծախսերի տեսակարար կշիռը ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) 2016թ. բյուջեների ընդհանուր ծախսերում՝ 6.0% (2015թ-ին՝ 6.8%): Սոցիալական ուղղվածություն ունեցող մյուս ոլորտներին ՀՀ համայնքների 2016թ. բյուջեներից հատկացված ծախսերի տեսակարար կշիռներն առանձնապես մեծ տեսակարար կշիռ չունեն ընդհանուր ծախսերում և կազմում են համապատասխանաբար՝ սոցիալական պաշտպանություն՝ 3.0% (2015թ-ին՝ 3.0%), առողջապահություն՝ 0.3% (2015թ-ին՝ 0.3%):

Գծապատկեր 4. ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) 2016թ. բյուջեների փաստացի ծախսերի տեսակարար կշիռներն ընդհանուր ծախսերում (ըստ գործառական դասակարգման)



ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) 2016թ. բյուջեների ընդհանուր ծախսերում տնտեսական ուղղվածություն ունեցող հանրային ծառայությունների մատուցման ծախսերի տեսակարար կշիռները, 2015թ-ի համեմատ, զգալիորեն փոխվել են: Այսպես, այդ ցուցանիշը նվազել է տրանսպորտի ոլորտում՝ կազմելով 9.9% (2015թ-ին՝ 11.1%), որը պայմանավորված է Երևանի բյուջեում նույն ցուցանիշի զգալի նվազմամբ՝ 12.3% (2015թ-ին՝ 14.7%): Այդ ցուցանիշը նկատելիորեն նվազել է նաև բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայությունների ոլորտում (բնակարանային շինարարություն, ջրամատակարարում, փողոցների լուսավորում և այլն)՝ կազմելով 12.9% (2015թ-ին՝ 16.9%), որը նորից պայմանավորված է Երևանի բյուջեում նույն ցուցանիշի էական նվազմամբ՝ 15.4% (2015թ-ին՝ 22.3%):

Դրա հետ մեկտեղ, 2015թ-ի համեմատ, ավելի քան կրկնակի չափով աճել է հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդերի տեսակարար կշիռը ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) 2016թ. բյուջեների ընդհանուր ծախսերում՝ կազմելով 8.6% (2015թ-ին՝ 4.1%), որը նորից պայմանավորված է Երևանի բյուջեում նույն ցուցանիշի ավելի քան կրկնակի աճով՝ 13.9% (2015թ-ին՝ 6.7%):

Ընդհանուր առմամբ, **Երևան համայնքի 2016թ. բյուջեում** ըստ գործառական դասակարգման ծախսերի տեսակարար կշիռները զգալիորեն տարբերվում են ՀՀ բոլոր համայնքների բյուջեների ծախսերի տեսակարար կշիռներից և էական ազդեցություն ունեն վերջիններիս վրա: Այսպես, Երևանի 2016թ. բյուջեում ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերի տեսակարար կշիռը (9.7%) մոտ 2.3 անգամ ավելի ցածր է ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների նույն ցուցանիշից

(22.4%), իսկ ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեների նույն ցուցանիշից (41.6%)՝ մոտ 4.3 անգամ: Կրթության ոլորտի ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում, ընդհակառակը, ավելի բարձր է Երևանի 2016թ. բյուջեում՝ կազմելով 34.8% (2015թ-ին՝ 33.8%), քան ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ Երևանի) 2016թ. բյուջեներում: Սա հիմնականում պայմանավորված է Երևանում հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթության ոլորտում պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացմամբ և դրանց համար ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորմամբ:

ՀՀ համայնքների (առանց Երևան քաղաքի) 2016թ. բյուջեների՝ ըստ գործառական դասակարգման ծախսերի տեսակարար կշիռներն էականորեն տարբերվում են ինչպես ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) 2016թ. բյուջեների, այնպես էլ Երևանի 2016թ. բյուջեի ծախսերի տեսակարար կշիռներից ընդհանուր ծախսերում: Այսպես, ՀՀ համայնքների (առանց Երևանի) 2016թ. բյուջեներում ընդհանուր բնոյթի հանրային ծառայությունների ծախսերի տեսակարար կշիռը առայժմ ամենաբարձրն է և կազմում է ընդհանուր ծախսերի մոտ 41.6%-ը (2015թ-ին՝ ևս 41.6%):

Ընդհանուր ծախսերում երկրորդ բարձր տեսակարար կշիռն ունեն կրթության ոլորտի ծախսերը՝ կազմելով 25.8% (2015թ-ին՝ 24.9%), այդ թվում՝ նախադպրոցական կրթություն՝ 16.3% (2015թ-ին՝ 15.9%), արտադպրոցական դաստիարակություն՝ 8.4% (2015թ-ին՝ 8.1%): Սոցիալական ուղղվածություն ունեցող մյուս ոլորտներին ՀՀ համայնքների (առանց Երևանի) 2016թ. բյուջեներից հատկացված ծախսերի տեսակարար կշիռները, նախորդ տարվա համեմատ, մնացել են մոտավորապես նույն մակարդակի վրա: Իսկ տնտեսական ուղղվածություն ունեցող հանրային ծառայությունների մատուցման ծախսերի տեսակարար կշիռները որոշ չափով փոփոխվել են և համապատասխանաբար կազմել են՝ տնտեսական հարաբերությունների ոլորտում՝ 1.8% (2015թ-ին՝ 2.8%), շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում՝ 7.5% (2015թ-ին՝ 7.3%), բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայությունների ոլորտում՝ 9.0% (2015թ-ին՝ 9.0%):

ՏԻՄ-երի լիազորությունների և համայնքների ֆինանսական միջոցների համապատասխանության ցուցանիշներից է նաև «**Ֆինանսավորվող կամ թերի ֆինանսավորվող լիազորությունների**» առկայությունը: Կան ՏԻՄ-երի՝ օրենքով սահմանված բազմաթիվ լիազորություններ (այդ թվում՝ հանրային ծառայությունների մատուցման), որոնք ՀՀ շատ համայնքներում կամ ընդհանրապես չեն իրականացվում, կամ էլ իրականացվում են մասնակիորեն: Այդպիսի լիազորությունների թվին կարելի է դասել կենսական նշանակություն ունեցող այնպիսի հանրային ծառայությունների մատուցումը, ինչպիսիք են, մասնավորապես՝ աղբահանությունը, կանաչապատումը, ջրամատակարարումը և ջրահեռացումը, շրջակա միջավայրի պաշտպանությունը, բնակկոմունալ ծառայությունները և այլն:

Համայնքների բյուջեների ծախսերի տեսակների հարաբերակցությունների մասին կարելի է պատկերացում կազմել՝ դիտարկելով **բյուջետային ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման** (Աղյուսակ 17):

Աղյուսակ 17. ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի և առանց Երևանի) և Երևանի 2016թ. բյուջեների փաստացի ծախսերն՝ ըստ տնտեսագիտական դասակարգման

Հ / հ	Ծախսի անվանումը	2016թ.					
		ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների փաստացի ծախսերը, հազ. դրամ	Տեսակարար կշիռը, %	Երևանի բյուջեի փաստացի ծախսերը, հազ. դրամ	Տեսակարար կշիռը, %	ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեների փաստացի ծախսերը, հազ. դրամ	Տեսակարար կշիռը, %
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ* (Ա+Բ+Գ)	130,160,976.1	100	78,481,116.0	100	51,679,860.1	100
Ա	ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ*	123,290,260.8	94.7	76,050,996.8	96.9	47,239,264.0	91.4
1	Աշխատանքի վարձատրություն, այլ թվում՝	23,527,866.0	18.1	5,788,254.7	7.4	17,739,611.3	34.3
	<i>Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ</i>	23,527,568.5	18.1	5,788,254.7	7.4	17,739,313.8	34.3
	<i>Փաստացի սոցիալական ապահովության վճարներ</i>	297.5	0.0	0.0	0.0	297.5	0.0
2	Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում	23,342,339.9	17.9	12,538,631.1	16.0	10,803,708.8	20.9
3	Տոկոսավճարներ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
4	Սուբսիդիաներ	45,970,835.1	35.3	33,655,005.7	42.9	12,315,829.4	23.8
5	Դրամաշնորհներ	4,666,618.2	3.6	871,294.0	1.1	3,795,324.2	7.3
6	Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	3,249,284.1	2.5	1,193,765.8	1.5	2,055,518.3	4.0
7	Այլ ծախսեր*, այլ թվում՝	22,533,317.5	17.3	22,004,045.5	28.0	529,272.0	1.0
	<i>Պահուստային միջոցներ*</i>	11,145,511.5	8.6	10,928,824.3	13.9	216,687.2	0.4
	<i>Համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներ</i>	1,036,199.3	0.8	0.0	0.0	1,036,199.3	2.0
Բ	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՎՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ	13,057,792.8	10.0	5,611,107.3	7.1	7,446,685.5	14.4
1	Հիմնական միջոցներ	12,931,713.9	9.9	5,511,486.8	7.0	7,420,227.1	14.4
2	Պաշարներ	124,278.9	0.1	99,620.4	0.1	24,658.5	0.0
3	Բարձրարժեք ակտիվներ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
4	Զարտադրված ակտիվներ	1,800.0	0.0	0.0	0.0	1,800.0	0.0
Գ	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՎՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՏՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	-6,187,077.5	-4.8	-3,180,988.0	-4.0	-3,006,089.5	-5.8
1	Հիմնական միջոցների իրացումից մուտքեր	-716,516.4	-0.6	-487,954.1	-0.6	-228,562.3	-0.4
2	Պաշարների իրացումից մուտքեր	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0

3	Բարձրաժեք ակտիվների իրացումից մուտքեր	-50.0	0.0	0.0	0.0	-50.0	0.0
4	Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր	-5,470,511.1	-4.2	-2,693,034.0	-3.4	-2,777,477.1	-5.4

*) Առանց վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարված հատկացումների


«Հ բոլոր համայնքների (ներառյալ Երևանի) 2016թ. բյուջեների կապիտալ / ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում⁴⁴ իրականում կազմել է 9.6%, իսկ ընթացիկ ծախսերինը՝ 90.4%:

Դիտարկելով «Հ համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների ընթացիկ և կապիտալ ծախսերի հարաբերակցություններն ընդհանուր ծախսերում վերջին 5 տարիների՝ 2012-2016թթ. համար (Գծապատկեր 5), տեսնում ենք, որ եթե կապիտալ ծախսերի տեսակարար կշիռը 2012-2013թթ-ին 22.3%-ից նվազել է՝ հասնելով մինչև 20.1%-ի, ապա 2014-ին այն դրսևորել է որոշ աճի միտում՝ բարձրանալով մինչև 21.2%-ի, սակայն 2015թ-ին այն կտրուկ նվազել է՝ իջնելով մինչև 12.2%-ի, իսկ 2016թ-ին այն շարունակել է նվազել՝ հասնելով մինչև 9.6%-ի:


Ընթացիկ և կապիտալ ծախսերի հարաբերակցությունների պատկերն այլ է Երևանի 2012-2016թթ. բյուջեներում: Այդ բյուջեների ընդհանուր ծախսերում կապիտալ ծախսերի տեսակարար կշիռները կազմել են համապատասխանաբար 24.2%, 23.4%, 24.7%, 10.3% և 6.9% (Գծապատկեր 6): Եթե Երևանի 2012-2014թթ. բյուջեների այդ ցուցանիշները զգալիորեն ավելի բարձր են «Հ բոլոր համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների նույն ցուցանիշներից, ապա 2015-2016թթ-ին, ընդհակառակը, դրանք նկատելիորեն ավելի ցածր են կազմել, քան «Հ բոլոր համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների նույն ցուցանիշները:

⁴⁴ Ընդհանուր ծախսերի իրական գումարն ստանալու համար աղյուսակ 5-ում պետք է Ա. Ընդամենը ծախսերի գումարում ներառել նաև Գ. Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը՝ դրական նշանով

Գծապատկեր 5. ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) 2012-2016թթ. բյուջեների ընթացիկ և կապիտալ ծախսերի տեսակարար կշիռներն ընդհանուր ծախսերում, %



Գծապատկեր 6. Երևան համայնքի 2012-2016թթ. բյուջեների ընթացիկ և կապիտալ ծախսերի տեսակարար կշիռներն ընդհանուր ծախսերում, %



ՏԻՄ-երի գործունեության արդյունավետ կազմակերպման տեսանկյունից, կարևոր ֆինանսական ցուցանիշներից է նաև համայնքային աշխատողների աշխատանքի վարձատրության՝ **աշխատավարձերի և հավելավճարների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր ծախսերում**: 2016թ-ին ՀՀ բոլոր համայնքների (ներառյալ Երևանի) ՏԻՄ-երի, դրանց ենթակա բյուջետային և ոչ առևտրային կազմա-

կերպությունների աշխատողների աշխատավարձերի ու հավելավճարների փաստացի ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում կազմել է 18.1% (Աղյուսակ 17): Համեմատելով վերջին ցուցանիշը 2014-2015թթ-ի նույն ցուցանիշների հետ (17.7%)՝ պետք է արձանագրել 2016թ-ին դրա փոքր-ինչ աճը:

Երևան քաղաքի 2016թ. բյուջեում այդ ցուցանիշը կազմել է 7.4% (Աղյուսակ 17), որը 2014-2015թթ-ի համեմատ (համապատասխանաբար 7.2% և 7.3%) նորից դրսևորել է աճի որոշ միտում:

2016թ-ին ՀՀ բոլոր համայնքների (առանց Երևանի) ՏԻՄ-երի, դրանց ենթակա բյուջետային և ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների աշխատավարձերի ու հավելավճարների փաստացի ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում կազմել է 34.3% (Աղյուսակ 17): Համեմատելով վերջին ցուցանիշը 2014-2015թթ-ի նույն ցուցանիշների հետ (համապատասխանաբար 33.7% և 33.1%)՝ պետք է նորից արձանագրել 2016թ-ին դրա աճի բացասական միտումը:

Պետք է նաև նկատել, որ ՀՀ բոլոր համայնքների (առանց Երևանի) համար հաշվարկված վերջին ցուցանիշը մոտ 4.6 անգամ բարձր է Երևանի նույն ցուցանիշից: Դա պայմանավորված է հիմնականում երկու հանգամանքներով՝ ՀՀ համայնքների (առանց Երևանի) աշխատակազմերի ու ենթակա կազմակերպությունների ուժնաճանաչված լինելով և բյուջետային եկամուտների ընդհանուր անբավարարությամբ:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ նոր խմբագրությամբ օրենքի 8-րդ գլխում սահմանված դրույթների՝ ՏԻՄ-երի սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողություն իրականացնող մարմինը ՀՀ ՏԿՁՆ-ն է՝ անմիջականորեն կամ ՀՀ մարզպետների միջոցով: Պետության պատվիրակած լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողությունն իրականացնում են ՀՀ կառավարության այն լիազոր մարմինները, որոնց իրավասության մեջ են մտնում այդ լիազորությունները՝ անմիջականորեն կամ մարզպետների միջոցով՝ համաձայնեցնելով ՀՀ ՏԿՁՆ-ի հետ:

Համայնքային աշխատողների աշխատավարձերի գծով իրավական և մասնագիտական հսկողություն կարող են իրականացնել նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Աշխատանքի պետական տեսչությունն՝ իր լիազորությունների սահմաններում, ինչպես նաև ՀՀ Հաշվեքննիչ պալատը՝ համայնքներում պարբերական ստուգումներ անցկացնելու ժամանակ: Մասնավորապես, ՀՀ աշխատանքի պետական տեսչությունն օրենքով սահմանված կարգով իրականացնում է պետական վերահսկողություն ՀՀ աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ: Համայնքների աշխատակազմերը և համայնքային կազմակերպությունները, որպես գործատուներ, պարտավոր են ՀՀ աշխատանքի պետական տեսչություն ներկայացնել եռամսյակային և տարեկան հաշվետվություններ՝ իրենց աշխատողների թվի, աշխատավարձի (ըստ մասնագիտությունների), աշխատավայրում տեղի ունեցած դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների մասին:

6. ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

6.1. ՏԻՄ-երի և համայնքների աշխատակազմերի ընդհանուր կարողությունները

ՀՀ-ում իրականացվող ՏԻ-ան վերլուծությունը ցույց է տալիս, որ համայնքների մեծ մասի մասնագիտական կարողությունները բավարար չեն հանրային ծառայությունները ողջ ծավալով և բավարար որակով մատուցելու համար, իսկ բյուջետային միջոցներն այնքան սուղ են, որ հիմնականում բավարարում են միայն համայնքի աշխատակազմը պահպանելու համար, և միջոցների այսպիսի սղությունը հանգեցնում է մի շարք խորքային խնդիրների: Այդ ամենով պայմանավորված՝ ՏԻ-երը լիարժեքորեն չեն կատարում իրենց կարևոր դերը հանրային կառավարման համակարգում: Համայնքների կառավարման վարչական կառուցվածքների բարեփոխման և որակյալ մարդկային ռեսուրսներով ապահովման խնդիրները համապատասխան լուծում են պահանջում՝ հիմնված համակարգային ու համալիր մոտեցումների վրա:

Համայնքի աշխատակազմի կառուցվածքը

ՀՀ ՏԻ համակարգում համայնքի ղեկավարն իր լիազորությունները իրականացնում է աշխատակազմի (մասնագետների, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների), համայնքային բյուջետային հիմնարկների, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով: Ընդ որում, համայնքի ղեկավարը նաև համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում աշխատակազմի, համայնքային բյուջետային հիմնարկների կանոնադրությունները, կառուցվածքները՝ համապատասխան ստորաբաժանումներ նախատեսված լինելու դեպքում, ինչպես նաև դրանց աշխատակիցների քանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը: Դրանց հաստատումից հետո համայնքի ղեկավարը մեկամսյա ժամկետում նշանակումներ է կատարում հայեցողական պաշտոններում, սակայն արդեն ինքնուրույնաբար և սեփական պատասխանատվությամբ:

Աշխատակազմն ապահովում է համայնքի ղեկավարի և ավագանու լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը: Այն իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող համայնքային կառավարչական հիմնարկ է, որի կառավարումն իրականացնում է համայնքի ղեկավարը: Աշխատակազմի ընթացիկ գործունեությունը ղեկավարում է աշխատակազմի քարտուղարը՝ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում: Աշխատակազմի (բացառությամբ Երևանի քաղաքապետարանի,

Գյումրու և Վանաձորի համայնքապետարանների աշխատակազմերի) կառուցվածքում կարող են նախատեսվել միայն «բաժին» տեսակի կառուցվածքային կամ առանձնացված ստորաբաժանումներ⁴⁵:

Համայնքների աշխատակազմերում թերևս ամենաէական կառուցվածքային փոփոխությունները հաշվետու տարում կապված են համայնքների խոշորացման և դրա արդյունքում նոր ձևավորված բազմաբնակավայր համայնքներում վարչական ղեկավարի ինստիտուտի ներդրման հետ: 2016թ. փետրվարի 14-ին ՀՀ Լոռու մարզի Թումանյան, ՀՀ Սյունիքի մարզի Տաթև, ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան բազմաբնակավայր համայնքներում անցկացվեցին ՏԻՄ-երի ընտրություններ, ինչի արդյունքում ձևավորվեցին առաջին երեք խոշորացված համայնքների ՏԻՄ-երը: Այնուհետև, համայնքների խոշորացման գործընթացը շարունակվեց ՀՀ Ազգային ժողովի կողմից 2016թ-ի հունիսի 17-ին «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելով, ինչի արդյունքում 118 համայնքների միավորման միջոցով ձևավորվեցին 15 նոր բազմաբնակավայր համայնքներ: Այս դեպքում արդեն ՏԻՄ-երի ընտրությունները կազմակերպվեցին երկու փուլով՝ սեպտեմբերի 18-ին և հոկտեմբերի 2-ին: Պետք է նշել, սակայն, որ 2016թ-ի դրությամբ փաստացի ձևավորվել և գործել են միայն առաջին երեք խոշորացված համայնքների աշխատակազմերը:

Եթե 2015թ-ին օրենսդրորեն սահմանվել էր, որ բազմաբնակավայր համայնքների կազմում ընդգրկված, 100-ից ավելի հաշվառված բնակիչ ունեցող յուրաքանչյուր բնակավայր, բացառությամբ համայնքի կենտրոնի, պետք է ունենա մեկ վարչական ներկայացուցիչ, իսկ 100-ից պակաս հաշվառված բնակիչ ունեցող բնակավայրերում վարչական ներկայացուցիչ լիազորություններից բխող գործառույթների իրականացումն ապահովում է աշխատակազմը⁴⁶, ապա 2016թ-ի ղեկտեմբերին «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքով որոշվեց, որ արդեն վերանվանված վարչական ղեկավար պետք է ունենան բոլոր բնակավայրերը՝ անկախ բնակիչների թվից, սակայն բացառությամբ համայնքի կենտրոնի⁴⁷: Ընդ որում, վարչական ղեկավարի պաշտոնը հայեցողական պաշտոն է, իսկ վարչական ղեկավարի պահպանման ծախսերը պետք է առանձին տողով ներկայացվեն համայնքի բյուջեում:

Վարչական ղեկավարը, բնակավայրի տարածքում գործելով համայնքի ղեկավարի անունից, պետք է հետևի բնակավայրի տարածքում մատուցվող հանրային ծառայությունների իրականացմանը և այդ մասին տեղեկություններ ներկայացնի համայնքի ղեկավարին: Նա նաև պարտավոր է աջակցել և կազմակերպել իր բնակավայրում համայնքի ավագանուն, համայնքի ղեկավարին և աշխատակազմի քարտուղարին վերապահված լիազորությունների մի մասի իրականացումը: Մասնավորապես՝ խոսքը վերաբերում է համայնքի բնակիչների ընդունելությանը, հանրային հանդիպումների ու քննարկումների կազմակերպմանը, տեղական ինքնակառավարմանը բնակիչների

⁴⁵ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 33:

⁴⁶ ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 91 (1180), Երևան, 2015, հոդված 5:

⁴⁷ ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 95 (1275).1, Երևան, 2016, հոդված 31:

մասնակցության ապահովմանը, տեղական հարկերի, տուրքերի և վճարների, ինչպես նաև համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի, համայնքի սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը կազմակերպելուն և այլն⁴⁸: Սակայն, բնականաբար, վարչական ղեկավարը ՏԻ-ան առանձին մարմին չէ, և, հետևաբար, համայնքի ղեկավարը բնակիչների առջև պատասխանատու է բնակավայրի վարչական ղեկավարի գործունեության համար:

Համայնքների խոշորացումով պայմանավորված աշխատակազմերի կառուցվածքային փոփոխություններից բացի, այլ կառուցվածքային փոփոխություններ 2016թ-ի ընթացքում չեն եղել:

Էական փոփոխության չեն ենթարկվել նաև համայնքների ղեկավարների կրթության վերաբերյալ ցուցանիշները: Ինչպես հայտնի է, ՀՀ օրենսդրությամբ համայնքի ղեկավարների համար կրթական ցենզ սահմանված չէ, սակայն համայնքների ղեկավարների զգալի մասն ունի բարձրագույն կրթություն: 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համայնքների ղեկավարներից 483-ն ունի բարձրագույն կրթություն, 9-ը՝ թերի բարձրագույն, 215-ը՝ միջնակարգ մասնագիտական, 92-ը՝ միջնակարգ և միայն 1-ը՝ 8-ամյա կրթություն (Աղյուսակ 18):

Աղյուսակ 18. Համայնքների ղեկավարների կրթության վերաբերյալ ցուցանիշները՝ ըստ մարզերի, 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ⁴⁹

Հ/Հ	Մարզի անվանումը	Համայնքների թիվը	Կրթությունը				
			բարձր.	թ/բարձր.	մ/մասն.	միջնակարգ	8-ամյա
1.	Արագածոտն	114	63	0	33	18	0
2.	Արարատ	95	71	1	19	4	0
3.	Արմավիր	97	55	2	25	15	0
4.	Գեղարքունիք	92	60	2	23	7	0
5.	Լոռի	107	60	2	37	8	0
6.	Կոտայք	67	45	1	19	2	0
7.	Շիրակ	79	50	0	17	11	1
8.	Սյունիք	72	33	0	23	16	0
9.	Վայոց ձոր	29	15	0	11	3	0
10.	Տավուշ	40	31	1	8	0	0
	Ընդամենը	792	483	9	215	84	1

⁴⁸ ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 95 (1275).1, Երևան, 2016, հոդված 32:

⁴⁹ ՀՀ ՏԿԶԼ-ի ամփոփ տեղեկանք՝ համայնքների ղեկավարների կրթության վերաբերյալ՝ 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

ՏԻՄ-երի և աշխատակազմերի գենդերային բաժանումը

ՏԻ համակարգի ընտրովի մարմիններում գենդերային անհամամասնության և կանանց ցածր տեսակարար կշռի միտումները շարունակվել են պահպանվել 2016թ-ին: Մասնավորապես՝ 792 համայնքներից կին համայնքի ղեկավար եղել է միայն 18-ում: Նշանակվել է միայն 45 կին համայնքի ղեկավարի տեղակալ: Համայնքների ավագանու անդամները ևս գերակշռաբար կազմված են եղել տղամարդկանցից, իսկ կանանց տեսակարար կշիռը կազմել է ընդամենը 9.6%: Փոխարենը, գենդերային առումով բավական համամասնորեն է բաշխված համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի պաշտոնը՝ 414 կին և 403 տղամարդ: Նույնը վերաբերում է նաև համայնքապետարանների աշխատակիցների ներկայացվածությանը, որտեղ կանանց տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ կազմել է 47.5% (Աղյուսակ 19): Այս առումով ևս ընդհանուր առմամբ պահպանվել են նախորդ տարիների միտումները:

Աղյուսակ 19. Համայնքներում ՏԻՄ-երի և աշխատակազմերի գենդերային բաշխվածությունը՝ 2016թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ⁵⁰

Մարզի անվանումը	Համայնքի ղեկավար		Համայնքի ղեկավարի տեղակալ		Համայնքի ավագանու անդամ		Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար		Համայնքապետարանի աշխատակիցներ	
	Կ	Տ	Կ	Տ	Կ	Տ	Կ	Տ	Կ	Տ
Արագածոտն	0	114	5	36	33	619	41	65	438	589
Արարատ	1	94	0	73	44	650	56	29	518	486
Արմավիր	2	95	2	88	61	689	36	55	379	462
Գեղարքունիք	3	89	1	77	46	547	24	60	260	659
Լոռի	4	103	19	47	90	555	63	31	491	405
Կոտայք	1	66	3	49	39	460	35	29	459	565
Շիրակ	2	77	1	46	73	598	53	47	637	623
Սյունիք	5	67	11	43	109	440	58	39	427	306
Վայոց ձոր	0	29	2	10	18	235	18	26	214	195
Տավուշ	0	40	1	28	33	354	30	22	164	117
Ընդամենը	18	774	45	497	546	5147	414	403	3987	4407

Ինչպես կարելի է նկատել Աղյուսակ 20-ից, Երևանի քաղաքապետարանում և վարչական շրջաններում գենդերային բաժանման տեսանկյունից էական

⁵⁰ ՀՀ ՏԿՁՆ-ի ամփոփ տեղեկանք՝ համայնքների աշխատակազմերի գենդերային բաշխվածության վերաբերյալ՝ 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

փոփոխություններ տեղի չեն ունեցել 2016թ-ին՝ բացառությամբ աշխատակազմի աշխատակիցների կազմում գրանցված չնչին գենդերային տեղաշարժերից:

Աղյուսակ 20. Երևանի քաղաքապետարանում և վարչական շրջաններում ՏԻՄ-երի և աշխատակազմերի գենդերային բաշխվածությունը՝ 2015 և 2016թթ. հունվարի 1-ի դրությամբ⁵¹

Պաշտոն	2015թ.		2016թ.	
	Կ	Տ	Կ	Տ
Քաղաքապետ	-	1	-	1
Քաղաքապետի տեղակալներ	-	4	-	4
Ավագանու անդամներ	10	55	10	55
Քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար (այդ թվում՝ վարչական շրջանների աշխատակազմերի քարտուղարներ)	1	12	1	12
Քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ	1039	876	1019	865
Վարչական շրջանների ղեկավարներ	-	12	-	12
Վարչական շրջանների ղեկավարի տեղակալներ	-	19	-	19
Ընդամենը	1050	979	1030	968

Համայնքի կառավարման տեղեկատվական համակարգերի զարգացումը

2016 թվականի ընթացքում շարունակվել է ՀԿՏՀ գործարկումը համայնքներում: 2016թ-ի դեկտեմբեր ամսվա դրությամբ 559 համայնքապետարաններում շահագործվող ՀԿՏՀ-ն՝ որպես ՀՀ ՏԿԶՆ-ի կողմից ներկայացված նախաձեռնություն, հաղթող է ճանաչվել 2016թ-ի նոյեմբերին Թբիլիսիում կայացած՝ Վրաստանի Կիբերանվտանգության և ՏՀՏ նորարարության 9-րդ տարածաշրջանային համաժողովի (GITI) շրջանակներում անցկացված մրցանակաբաշխության ժամանակ՝ «Լավագույն տարածաշրջանային համայնքային էլեկտրոնային ծառայություն» անվանակարգում:

Համայնքապետարանների համացանցային կայքեր են գործարկվել թվով 138 համայնքապետարաններում, ինչի արդյունքում պաշտոնական համացանցային կայքեր ունեցող համայնքապետարանների ընդհանուր թիվը դարձել է 203:

2016թ-ին քաղաքացիների սպասարկման գրասենյակներ են բացվել 7 համայնքապետարաններում: Դրանց ընդհանուր թիվը հանրապետությունում 21-ն է դարձել, որոնցից 8-ը՝ նոր ձևավորված բազմաբնակավայր համայնքների կենտրոններում: Ներդրվել է համայնքային նշանակության հանրային միջոցառումների առցանց հեռարձակում: Այս ուղղությամբ 2016թ-ին իրականացված աշխատանքների արդյունքում ՀՀ թվով 28 համայնքներ ապահովվել են համայնքային նշանակության միջոցառումները (ավագանու նիստեր, ՏԻՄ-երի ասուլիսներ, հանրային քննարկումներ) առցանց հեռարձակելու հնարավորությամբ⁵²:

⁵¹ Նույն տեղում:

⁵² ՀՀ ՏԿԶՆ-ի 2016թ. աշխատանքների հաշվետվություն, էջ 3:

6.2. Համայնքային ծառայություն

ՀՀ համայնքային ծառայության օրենսդրական հիմքերը

Համայնքային ծառայությունը հանրային ծառայության ինքնուրույն տեսակ է: «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը համայնքային ծառայությունը սահմանում է որպես մասնագիտական գործունեություն, որն ուղղված է ՀՀ օրենսդրությամբ ՏԻՄ-երին վերապահված խնդիրների և գործառույթների իրականացմանը⁵³: «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով ամրագրվում են համայնքային ծառայության հիմնական սկզբունքները, կարգավորվում համայնքային ծառայության պաշտոնների և դասային աստիճանների դասակարգման, համայնքային ծառայության պաշտոնի նշանակման, համայնքային ծառայողների ատեստավորման և վերապատրաստման, համայնքային ծառայության կադրային պահուստի, համայնքային ծառայողների իրավական վիճակի, համայնքային ծառայության կազմակերպման և ղեկավարման, ինչպես նաև դրանց առնչվող մյուս հարաբերությունները:

Համայնքային ծառայության ինստիտուտի զարգացումը ՀՀ ՏԻ համակարգի կատարելագործման կարևորագույն ուղղություններից մեկն է: Պետք է փաստել, որ համայնքային ծառայության մասին օրենքի ընդունումից ի վեր բավականաչափ աշխատանք է կատարվել համայնքային ծառայության ինստիտուտի կայացման և արմատավորման ուղղությամբ: Խոսքը մասնավորապես վերաբերում է ընդհանուր օրենսդրանորմատիվային դաշտի ստեղծմանը, համայնքային ծառայության կազմակերպման և կադրերի կառավարման ընթացակարգերին, համայնքային ծառայության հիմնական սկզբունքներին, համայնքային ծառայողի իրավական կարգավիճակին, էլեկտրոնային կառավարման համակարգի (ՀԿՏՀ) ներդրմանն ու կատարելագործմանը և այլն: Սակայն, այս ամենով հանդերձ, դեռևս շատ խնդիրներ կան, որոնք պետք է ժամանակի ընթացքում իրենց լուծումը ստանան: Այդ խնդիրների շարքին կարելի է դասել համայնքային ծառայության արդյունավետության ցածր մակարդակը, համայնքային ծառայողների ընտրության, ատեստավորման, վերապատրաստման և մասնագիտական առաջխաղացման կառուցակարգերի անկատարությունը, խրախուսման համակարգերի անարդյունավետությունը և այլն: Առանց վերոնշյալ խնդիրների լուծման անհնար կդառնա համակարգի հետագա զարգացումը և կատարելագործումը: Համայնքային ծառայության համակարգի մշտական կատարելագործման անհրաժեշտությունը պայմանավորված է ՏԻ համակարգում ընթացող բարեփոխումներով, ինչպես նաև քաղաքացիական հասարակության բաղադրիչների զարգացմամբ:

Այդուհանդերձ, ինչպես ընդհանրապես հանրային ծառայության ոլորտում, այնպես էլ համայնքային ծառայության համակարգում, բարձր որակավորում ունեցող կադրերի պակաս է զգացվում: Մասամբ այս խնդրի լուծմանն է ուղղված կադրերի պահուստի և ծառայողների վերապատրաստման ինստիտուտների ներդրումը: Սակայն

⁵³ ՀՀ օրենքը «Հանրային ծառայության մասին», ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 37 (840), Երևան, 2011, հոդված 3:

կադրերի պահուստը, որն ամենից առաջ կոչված է ժամանակավոր թափուր պաշտոնների համալրման խնդրի լուծմանը, այս համակարգում դեռևս իր գործառույթն ամբողջությամբ չի կարողանում կատարել: Այս իրողությունը բացատրվում է այն հանգամանքով, որ համայնքային ծառայության համակարգում գործող կադրերի պահուստը դեռևս ամբողջությամբ չի լուծում ժամանակավոր թափուր պաշտոնները համալրելու խնդիրը, քանի որ հաստիքների կրճատման հիմքով ազատված համայնքային ծառայողները հիմնականում արտամրցութային կարգով զբաղեցնում են այլ պաշտոններ, իսկ մրցույթներում հաղթող ճանաչված, սակայն պաշտոնի չնշանակված անձանցից քչերն են ցանկանում գրանցվել կադրերի պահուստում:

ՀՀ համայնքները միմյանցից տարբերվում են բնակչության թվի, կենսամակարդակի, սահմանամերձ կամ հեռավոր, բարձր լեռնային գոտում գտնվելու առումներով: Այս և այլ տարաբնույթ առանձնահատկությունների պատճառով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթների լիարժեք և ամբողջական իրականացումն ակնհայտորեն պահանջում է առանձնակի մոտեցումներ՝ իրարից էականորեն տարբերվող համայնքներում համայնքային ծառայության համակարգը կայացնելու համար:

Պետք է նշել սակայն, որ 2016թ-ի ընթացքում համայնքային ծառայության ոլորտում որևէ օրենսդրական փոփոխություն կամ լրացում չի կատարվել:

2015թ-ին ՀՀ ՏԿՁՆ-ն փորձել է ապահովել համայնքային ծառայության մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գործընթացների իրականացումը: Համայնքային ծառայողների վերաբերյալ տվյալների միասնական գրանցամատյանի համաձայն՝ 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համայնքային ծառայության պաշտոնները 6477-ն են⁵⁴: (Աղյուսակ 21):

Թափուր պաշտոններ զբաղեցնելու համար հայտարարվել է 921 մրցույթ, որից կայացել է 477-ը, այսինքն՝ շուրջ կեսը: Հրապարակայնությունն ապահովելու նպատակով մրցույթների մասին հայտարարությունները տեղադրվել են ՀՀ ՏԿՁՆ-ի հայտարարությունների վահանակում և ինտերնետային կայքում, ինչպես նաև դրանք տրամադրվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Զբաղվածության պետական գործակալությանը:

⁵⁴ Սույն հաշվետվությունը կազմելու պահին ՏԿՁՆ-ն դեռևս չէր տիրապետում 2016թ. դրությամբ համայնքային ծառայության փաստացի զբաղեցված պաշտոնների վիճակագրությանը, որովհետև նախարարության վերակազմակերպման հետևանքով համապատասխան ծրագիրը շուրջ 1 տարի չի գործարկվել:

Աղյուսակ 21. Համայնքային ծառայության պաշտոնների թիվը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ⁵⁵

Հ/Հ	Երևան և ՀՀ մարզեր	Ընդամենը
		Հաստատված պաշտոնների թիվը
1	Երևան	1624
2	Արագածոտն	465
3	Արարատ	542
4	Արմավիր	629
5	Գեղարքունիք	541
6	Լոռի	669
7	Կոտայք	584
8	Շիրակ	596
9	Սյունիք	344
10	Վայոց ձոր	164
11	Տավուշ	319
Ընդամենը		6477

Աղյուսակ 22. 2016թ-ի ընթացքում առեստավորված համայնքային ծառայողների և թափուր պաշտոնների զբաղեցման համար հայտարարված ու կայացած մրցույթների թիվը 2016թ. դեկտեմբերի 15-ի դրությամբ⁵⁶

ՀՀ	Մարզի անվանումը	2016 թվական		
		Առեստավորում	Մրցույթ	
			Հայտարարված	Կայացած
1	Երևան	221	292	251
2	Արագածոտն	152	65	19
3	Արարատ	5	36	16
4	Արմավիր	123	178	47
5	Գեղարքունիք	89	47	14
6	Լոռի	87	138	17
7	Կոտայք	33	32	20
8	Շիրակ	58	24	24
9	Սյունիք	2	50	28
10	Վայոց ձոր	7	3	1
11	Տավուշ	29	56	40
Ընդամենը		806	921	477

Որպեսզի համայնքների աշխատակազմերը մշտապես հնարավորություն ունենան բարձրացնելու իրենց աշխատանքային կարողությունները, երեք տարին մեկ ան-

⁵⁵ ՀՀ ՏԿԶՆ վարչական վերահսկողության և համայնքային ծառայության հարցերի վարչության 2016թ-ի հաշվետվություն:

⁵⁶ Նույն տեղում:

գամ համայնքային ծառայողների համար անցկացվում է ատեստավորում: 2016թ-ի ընթացքում ատեստավորվել է 806 համայնքային ծառայող (Աղյուսակ 22):

Համայնքային ծառայողների թվաքանակի հարաբերակցությունը համայնքի բնակչությանը

Համայնքային ծառայողների թվի վերաբերյալ առավել շոշափելի պատկերացում կազմելու համար դրա բացարձակ մեծությունից զատ անհրաժեշտ է պարզել նաև հարաբերական մեծությունը՝ կախված բնակչության թվաքանակից: Այս առումով դիտարկենք համայնքների աշխատակազմերում համայնքային ծառայության պաշտոնների թվի տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվի կազմում՝ ըստ Երևան քաղաքի և ՀՀ մարզերի: Ինչպես կարելի է նկատել աղյուսակից, այդ ցուցանիշով բացարձակ առաջատարները ՀՀ Արագածոտնի և Վայոց ձորի մարզերն են՝ համապատասխանաբար 0.36% և 0.33%: Ընդ որում, այս մարզերի համար ստացված համայնքային ծառայողների թվի հարաբերական մեծությունը գերազանցում է Երևան քաղաքի համանման ցուցանիշը (0.15) շուրջ 2.5 անգամ (Աղյուսակ 23): Այս հանգամանքը կարող է հուշել համապատասխան մարզերում համայնքապետարանների աշխատակազմերի անհարկի ուռճացման և ավելորդ հաստիքների առկայության մասին:

Աղյուսակ 23. ՀՀ համայնքների աշխատակազմերում համայնքային ծառայության պաշտոնների թվի տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվի կազմում՝ ըստ Երևան քաղաքի և ՀՀ մարզերի, 2016թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ

Հ/Հ	Անվանումը	Համայնքային ծառայության հաստատված պաշտոնների թիվը (ՀՊԹ)	Բնակչության թիվը, հազար մարդ ⁵⁷ (ԲԹ)	ՀՊԹ/ԲԹ, %
1	Երևան	1624	1075.8	0.15
2	Արագածոտն	465	128.5	0.36
3	Արարատ	542	258.4	0.21
4	Արմավիր	629	265.8	0.24
5	Գեղարքունիք	541	230.7	0.23
6	Լոռի	669	221.1	0.30
7	Կոտայք	584	252.8	0.23
8	Շիրակ	596	239.3	0.25
9	Սյունիք	344	138.9	0.25
10	Վայոց ձոր	164	50.3	0.33
11	Տավուշ	319	124.5	0.26
	Ընդամենը	6477	2986.1	0.22

⁵⁷ ՀՀ ԱՎԾ, ՀՀ մշտական բնակչության թվաքանակը 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ, 2017թ., էջ 7:

6.3. Համայնքային ծառայողների վերապատրաստումը

Համայնքային ծառայողների վերապատրաստման համակարգի գնահատումը

«Հ գործող օրենսդրության համաձայն՝ յուրաքանչյուր համայնքային ծառայող առնվազն երեք տարին մեկ ենթակա է պարտադիր վերապատրաստման: Վերապատրաստումն անցկացվում է նաև համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով համայնքային ծառայողի իրավունքների ու պարտականությունների, մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման կոնկրետ պահանջների կատարելագործման կամ այդ պահանջների փոփոխության դեպքում՝ համայնքային ծառայողի կամ համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ: Համայնքային ծառայողների վերապատրաստման կարգը և ծրագրերը հաստատում է ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:

Համայնքային ծառայողների վերապատրաստումներն իրականացվում են մրցութային կարգով ընտրված կազմակերպությունների միջոցով: 2016թ-ին Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների վերապատրաստումն իրականացրել է Տնտեսագիտության և կառավարման ինստիտուտը, համայնքների ղեկավարների և ավագանիների անդամների վերապատրաստումը՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիան, իսկ մարզերի համայնքների համայնքային ծառայողներին՝ Հայաստանի համայնքների միությունը:

Համայնքային ծառայության համակարգում 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վերապատրաստվել է 692 համայնքային ծառայող, որից 465-ը՝ ՀՀ պետական բյուջեի հաշվին, 198-ը՝ Երևան համայնքի բյուջեի, իսկ 30-ը՝ «Հայ պետական ծառայողների միություն» ՀԿ-ի (Աղյուսակ 24):

Վերլուծությունները ցույց են տալիս, որ համայնքային ծառայողների վերապատրաստման համակարգում բավարար ուշադրություն չի դարձվում գործնական հարցերի, տարբեր հավանական իրավիճակների հետազոտմանը և քննարկմանը: Այսպես՝ գնումների բնագավառում համայնքային ծառայողների վերապատրաստման ծրագրի ընդհանուր ժամաքանակի (24 ժամ) մեծ մասը բաժին է ընկնում գնումների մասին օրենսդրության քննարկմանը (16 ժամ), գործնական հարցերի քննարկմանը հատկացված է ընդամենը 6 ժամ, իսկ 2 ժամ հատկացված է էլեկտրոնային գնումների համակարգի նկարագրությանը⁵⁸:

⁵⁸ ՀՀ Տարածքային կառավարման նախարարի N 169-Ա հրամանը «Համայնքային գնումների կազմակերպման և իրականացման բնագավառում համայնքային ծառայողների վերապատրաստման ծրագիրը հաստատելու մասին», 2013թ.:

Աղյուսակ 24. Վերապատրաստված համայնքային ծառայողների թիվը⁵⁹

Հ/Հ	Անվանումը	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.
1	Արագածոտն	36	78	260	51	155	160	39
2	Արարատ	129	249	81	100	252	81	60
3	Արմավիր	115	241	98	164	256	89	120
4	Գեղարքունիք	163	207	82	162	240	67	40
5	Լոռի	102	287	153	113	282	118	80
6	Կոտայք	79	260	75	121	222	98	20
7	Շիրակ	120	134	117	124	218	60	60
8	Սյունիք	31	39	215	41	137	98	19
9	Վայոց ձոր	25	83	40	27	103	21	20
10	Տավուշ	56	98	131	64	136	71	37
	Ընդամենը	856	1676	1252	967	2001	863	495
11	Երևան	0	0	280	423	388	405	198
	Ընդհանուր	856 (ամբողջությամբ պետ. բյուջեի հաշվին)	2071 (որից պետ. բյուջեի հաշվին՝ 1593-ը)	1532 (որից պետ. բյուջեի հաշվին՝ 1028-ը)	1390 (որից պետ. բյուջեի հաշվին՝ 966-ը)	2389 (որից պետ. բյուջեի հաշվին՝ 2001-ը)	1268 (որից պետ. բյուջեի հաշվին՝ 833-ը)	692 (որից պետ. բյուջեի հաշվին՝ 465-ը)

Ներկայումս ՀՀ-ում հանրային ծառայողների վերապատրաստման թերություններից է դասընթացների շրջանակներում ուսումնական նյութը գլխավորապես դասախոսությունների միջոցով մատուցումը, ինչը նշանակալիորեն սահմանափակում է գործնական հմտությունների ստացման, կայուն կարողությունների ձևավորման հնարավորությունները, բացի դրանից հաշվի չեն առնվում համայնքային ծառայողների ընկալունակության առանձնահատկությունները:

Համայնքային ծառայողների վերապատրաստման՝ ՀՀ ներկայիս համակարգի ուսումնասիրության արդյունքում ակնհայտ են դառնում հետևյալ թերությունները՝ վերապատրաստումների հատվածականությունը, համայնքային ծառայողի որակավորման բարձրացման իրական կարիքների հետ վերապատրաստման ծրագրերի թույլ կապը, վերապատրաստման գործընթացում դասավանդման արդի մեթոդների և եղանակների կիրառման պակասը և այլն: Հետևաբար, ընդհանուր առմամբ, համայնքային ծառայության համակարգի կատարելագործման խնդիրներից մեկը պետք է լինի համայնքային ծառայողների վերապատրաստման գործընթացի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների մշակումը և դրանց հետևողական իրագործումը: Մասնավորապես, պետք է հստակորեն սահմանվեն վերապատրաստման վերջնարդյունքները՝ գիտելիքը, հմտությունները և կարողությունները, որոնք ծրագրի ավարտին ձեռք են բերվելու վերապատրաստվողների կողմից:

⁵⁹ ՀՀ ՏԿԶՆ վարչական վերահսկողության և համայնքային ծառայության հարցերի վարչության 2016թ-ի հաշվետվություն:

Համայնքային ծառայողների վերապատրաստման ներկայիս համակարգի թե-
րություններից մեկն էլ այն է, որ ծրագրերը հիմնականում կազմվում են կրթական հաս-
տատությունների կողմից և չեն համապատասխանում մասնակիցների նախապատ-
վություններին ու կարիքներին: Պետական լիազոր մարմինը հաստատում է միայն
կրթական ծրագրի թեման՝ առանց հստակեցնելու դրա բովանդակությունը, ինչի
հետևանքով ծրագիրը լիովին չի համապատասխանում կատարելագործման պահանջ-
ներին: Այս առումով, համայնքային ծառայողների վերապատրաստման համակարգում
անհրաժեշտ է մշակել և ներդնել կառուցակարգեր, որոնց գործարկմամբ հնարավոր
կլինի կրթական ծրագրերի կազմման մեկնարկային փուլում պատշաճ տեղեկատվությ-
ուն ստանալ հստակ պահանջների և կարիքների մասին: Սակայն, ծրագրերի մշակու-
մից բացի, համայնքային ծառայողների վերապատրաստման գործընթացի որակի
բարձրացումն էականորեն կախված է նաև արդեն իսկ մշակված ծրագրերի մատուց-
ման արդյունավետ եղանակների ընտրությունից և կիրառումից:

6.4. Միջազգային աջակցությունը

«Հ համակարգի զարգացման գործում ավանդաբար էական դերակատարում
ունեն Հայաստանում տարբեր առաքելություններ իրականացնող միջազգային կազ-
մակերպությունները և նրանց հայաստանյան մասնաճյուղերը: Այս առումով, միջազ-
գային կազմակերպությունների կողմից հատուկ կարևորություն է տրվում «Հ վարչա-
տարածքային բարեփոխումների գործընթացին, ապակենտրոնացմանը, տեղական
ժողովրդավարության ամրապնդմանը, համայնքների ֆինանսական կառավարման
կատարելագործմանը, էլեկտրոնային կառավարման զարգացմանը և այլն: 2016թ-ի
ընթացքում միջազգային կազմակերպությունները շարունակել են իրենց կողմից իրա-
կանացվող ծրագրերը «Հ համակարգում: Անդրադառնանք դրանցից յուրաքանչ-
յուրին առանձին:

**«Համայնքների զարգացում Հարավային Կովկասում» ծրագիրը, որն իրակա-
նացվում է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ,
GIZ) կողմից,** աջակցում և խորհրդատվություն է տրամադրում համապատասխան
գործընկերներին ազգային, մարզային (ենթաազգային) և տեղական մակարդակնե-
րում Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում համագործակցային նախաձեռ-
նությունների իրականացման գործում, որոնք ուղղված են ՏԻ զարգացմանը: Այն
աջակցում է ՏԻ շրջանակային պայմանների բարելավմանը, անդրադառնում մարզա-
յին կառավարման հարցերին և աշխատում համայնքային ծառայությունների բարելավ-
ման ուղղությամբ: Գերմանական միջազգային համագործակցության համատեքստում
ծրագրի նպատակներն ուղղված են կովկասյան նախաձեռնությունների շրջանակին,
ուստի՝ երկրների միջև արհեստավարժ փորձի փոխանակման և նրանց միջև համա-
գործակցության բարելավումը հանդիսանում են Հարավային Կովկասի տարածաշր-
ջանային մակարդակում հիմնական խնդիրները: Ծրագիրն իրականացվում է «Հ
ՏԿԶՆ-ի հետ համատեղ:

Ծրագրի բաղադրիչներն են՝

- վարչատարածքային բարեփոխումները,
- էլեկտրոնային կառավարման համակարգը,
- համայնքային բյուջետավարումը,
- տարածքային կառավարումը:

2016թ-ի ընթացքում Քաղաքացիների սպասարկման գրասենյակներ (ՔՍԳ) են բացվել թվով 7 համայնքապետարաններում: ՔՍԳ-ների ընդհանուր թիվը հանրապետությունում 21 է, որոնցից 8-ը՝ խոշորացված համայնքներում: Գրասենյակները հիմնադրվել են վերոնշյալ ծրագրի շրջանակում՝ Գերմանիայի Տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության աջակցությամբ և Հայաստանում՝ **Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ՇՀՀԳ) և ԱՄՆ Միջազգային Հարգացման Գործակալության (ԱՄՆ ՄՀԳ) համաֆինանսավորմամբ**: ՔՍԳ-ի նպատակը «Մեկ կանգառ, մեկ պատուհան» սկզբունքի համաձայն ծառայությունների կենտրոնացված մատուցումն է քաղաքացիներին, ՏԻՄ-երի արդյունավետության, թափանցիկության և հասանելիության բարձրացումը, քաղաքացու և համայնքապետարանի միջև առավել մատչելի և դյուրին հաղորդակցության ապահովումը: ՔՍԳ-ում ներդրվել է նաև ՀԿՏՀ-ն, որի խնդիրը ՏԻՄ-երի գործունեության արդյունավետության բարձրացումն է: Որպես ՏԻՄ-երի համար մշակված տեղեկատվական համակարգ՝ այն թույլ է տալիս ապահովել տեղեկատվական հոսքերի ավտոմատացված կառավարում համայնքապետարանում: Համակարգը նպաստում է քաղաքացիների նկատմամբ ՏԻՄ-երի հաշվետվողականության և թափանցիկության աստիճանի բարձրացմանը, մատուցվող ծառայությունների վրա ծախսվող ժամանակի կրճատմանը, մասնակցային ՏԻ-ան ապահովմանը: Համակարգի միջոցով հնարավոր է դարձել մատուցել առցանց ծառայություններ բնակիչներին, հետևել դրանց ընթացքին, հարցերի դեպքում առցանց դիմել համապատասխան մասնագետներին, ստանալ կարևոր տեղեկատվություն համայնքի վերաբերյալ: Ստեղծվել են առցանց հնարավորություններ՝ ապահովելու քաղաքացիների ներգրավումը համայնքային մակարդակով որոշումների կայացմանը: Վարչատարածքային բարեփոխումների շրջանակում ՀԿՏՀ-ն կապահովի խոշորացված համայնքի արդյունավետ կառավարում, բնակավայրերի ինտեգրում և փոխգործակցություն մեկ միասնական տեղեկատվական հարթակի միջոցով, վարչական ծառայությունների մատուցում բնակիչներին անմիջապես բնակավայրերում (այդ թվում՝ առցանց), ինչպես նաև միասնական տվյալների շտեմարանների կիրառում ամբողջ համայնքում:

Խոշորացված համայնքների 18 փնջերում ներդրումային ծրագրեր իրականացնելու համար **ԱՄՆ ՄՀԳ և ՇՀԳ** դրամաշնորհային միջոցներով Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից 2016 թվականին սկսվել է «ՏԻ-ան բարեփոխումների ծրագրի» իրագործումը, որը կշարունակվի մինչև 2020 թվականը: Այս նպատակով ԱՄՆ կառավարության կողմից Հայաստանին է շնորհվել 8.5 մլն և Շվեյցարական կառավարության կողմից՝ 2.4 մլն ԱՄՆ դոլար դրամաշնորհ⁶⁰:

⁶⁰ ՀՀ ՏԿԶՆ-ի 2016թ. աշխատանքների հաշվետվություն, էջ 3:

2016թ-ին շարունակվել է նաև Հայաստանի համայնքներում իրականացվող «Ինտեգրված աջակցություն գյուղական համայնքների զարգացմանը. համայնքների դիմակայունության ամրապնդում ծրագիրը», ինչպես նաև մեկնարկել է նոր «Գյուղական տուրիզմի ինտեգրված զարգացում ծրագիրը»: Դրանք իրականացվում են **ՄԱԿ-ի զարգացման ծրագրի** կողմից՝ ՀՀ ՏԿԶՆ-ի հետ սերտ համագործակցությամբ, ՌԴ կառավարության ֆինանսավորմամբ և ուղղված են մարզերում գյուղական աղքատության կրճատմանը, կայուն տնտեսական եկամուտների ստեղծմանը⁶¹:

2016թ. հոկտեմբերի 26-ին կայացել է Հայաստանում ՏԻ համակարգի ներդրման 20-ամյակին նվիրված «Կայուն զարգացման խթանումը Արևելյան գործընկերության երկրներում» բարձրաստիճան միջազգային համաժողովը: Համաժողովը կազմակերպվել է **Եվրոպական հանձնաժողովի**, ՀՀ ՏԿԶՆ-ի, ԵՄ **Արևելյան գործընկերության տեղական և տարածքային իշխանությունների խորհրդատվության կենտրոնի (CORLEAP)** և **«Քաղաքապետերի դաշնագիր՝ Արևելք» (CoM East)** նախաձեռնության համատեղ ուժերով: Համաժողովի ընթացքում, մասնավորապես, Եվրոպական հանձնաժողովը հայտարարել է Արևելյան գործընկերության երկրների «Քաղաքապետերի դաշնագիր» ծրագրի երկրորդ փուլի և «Քաղաքապետերը հանուն տնտեսական զարգացման» նոր նախաձեռնության (M4EG) մասին՝ ուղղված համապատասխանաբար էներգետիկ արդյունավետությանը և գործարար ոլորտին: Համաժողովին մասնակցել է Արևելյան գործընկերության և Դաշնագիրը ստորագրած երկրների (թվով 15) մոտ 320 մասնակիցներ: Դաշնագրին միացել են ՀՀ թվով 15 համայնքներ, որից 4-ը՝ վերոնշյալ միջոցառման շրջանակներում⁶²: Տեղական և տարածքային իշխանությունների խորհրդատվությունը ԵՄ-ի այն հարթակն է, որ հնարավորություն է ընձեռում քննարկելու քաղաքների և ռեգիոնների դերակատարումը Արևելյան գործընկերության զարգացման համատեքստում: Այն ԵՄ և Արևելյան գործընկերության երկրների տեղական և տարածքային իշխանությունների քաղաքական ֆորում է: Խորհրդատվությունը կազմված է 36 տարածքային և տեղական իշխանություններից ներկայացված անդամներից, որից 18-ը ԵՄ ռեգիոնների կոմիտեի անդամներ են, իսկ մյուս 18-ը՝ Արևելյան գործընկերության 6 երկրների ներկայացուցիչներ: ԵՄ Արևելյան գործընկերության տեղական և տարածքային իշխանությունների խորհրդատվությունը անցկացնում է բյուրոյի նիստեր, ամենամյա հանդիպումներ և կոնֆերանսներ:

2016թ-ին ԵՄ կողմից նախաձեռնվել և իրականացվում է «Քաղաքացիական հասարակության և ՏԻՄ-երի զարգացում (աջակցություն համախմբված կլաստերներին)» ծրագիրը (2.122.265 եվրո արժողությամբ), որի հիմնական նպատակը նոր խոշորացված համայնքներին աջակցություն ցուցաբերելն է⁶³:

Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսը ներկայացնում է տեղական և տարածքային իշխանություններին և խթանում է տեղական ժողովրդավարությանը: Այն բաղկացած է երկու պալատներից՝ Տեղական իշխանությունների պալատ և Տարածքային իշխանությունների պալատ, որոնք ներառում են

⁶¹ <http://mtad.am/hy/news/item/2016/09/07/mtad79/>

⁶² ՀՀ ՏԿԶՆ 2016թ. աշխատանքների հաշվետվություն, էջ 4:

⁶³ Նույն տեղում, էջ 8:

ավելի քան 200 000 տեղական և տարածքային իշխանությունների ներկայացնող 324 մշտական և 324 փոխարինող անդամների: ՀՀ ՏԿԶՆ-ի և Եվրոպայի Խորհրդի Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի միջև 2016թ. հունիսի 9-ին ստորագրվել է Հայաստանում տեղական ժողովրդավարության ճանապարհային քարտեզը: Ճանապարհային քարտեզի ստորագրմամբ կողմերը ստանձնել են ՏԻ Եվրոպական խարտիայի իրականացման մոնիթորինգի շրջանակներում փոխգործակցությունը և քաղաքական երկխոսությունը շարունակելու հանձնառությունը: Կողմերը պարտավորվել են նաև համատեղ աշխատանքով կյանքի կոչել ճանապարհային քարտեզը՝ Հայաստանում տեղական ժողովրդավարության մասին թիվ 351 (2014թ.) խորհրդատվությունն իրագործելու նպատակով:

Ասիական զարգացման բանկի (ADB), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (EBRD) և Գերմանական զարգացման բանկի (KFW) աջակցությամբ իրականացվող Հայաստանի կոշտ կենցաղային թափոնների (ԿԿԹ) կառավարման բարելավման ոլորտում 2016թ-ին ՀՀ ՏԿԶՆ-ն շարունակել է ԿԿԹ կառավարման ոլորտի ծրագրերի իրականացումը⁶⁴:

Ակտիվ բանակցություններ են վարվել ՀՀ կառավարության և KFW-ի միջև համագործակցության շրջանակներում ՀՀ Լոռու մարզի և Դիլիջան քաղաքի աղբահանության զարգացման և աղբավայրի կառուցման ծրագրի իրականացման շուրջ: 2016թ. նոյեմբերի 4-ին ՀՀ ՏԿԶ նախարարի մոտ կայացած ծրագրի ղեկավար անձնակազմի, փորձագետների և բանկի ներկայացուցչի հետ քննարկումների արդյունքներով որոշվել է ծրագրում ընդգրկել նաև ՀՀ Տավուշի մարզն ամբողջությամբ: Քննարկվել է նաև Գերմանիայի կառավարության կողմից 2.0 մլն. եվրո դրամաշնորհի տրամադրման, ինչպես նաև խորհրդատվական աշխատանքների ընդլայնման հարցերը: 2016թ. ապրիլի 5-ին ՀՀ ֆինանսների նախարարության և EBRD-ի, ինչպես նաև Ծրագրի շահառու համայնքապետարանների և Բանկի միջև ստորագրվել են «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման» ծրագրի վարկային և իրականացման ու աջակցության համաձայնագրերը, որով չեղարկվել է ՀՀ Կոտայքի մարզի յոթ համայնքների (Աբովյան, Բյուրեղավան, Եղվարդ, Ծաղկաձոր, Հրազդան, Նոր Հաճն, Չարենցավան) և ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի 2014թ. դեկտեմբերի 19-ին կնքված համաձայնագրերը՝ ծրագիրը ընդլայնելու և ՀՀ Գեղարքունիքի մարզի մնացած համայնքները ծրագրում ներառելու նկատառումով⁶⁵:

2016թ-ին շարունակվել է իրականացվել Համաշխարհային բանկի (ՀԲ) վարկային միջոցների ֆինանսավորմամբ իրականացվող **Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման (ՄՆՏՁ)** ծրագիրը (աղբյուրը՝ www.atdf.am), որի վարկային համաձայնագիրը կնքվել է 2015թ. ապրիլի 8-ին: ՄՆՏՁ ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 42.9 մլն ԱՄՆ դոլար: Ծրագիրը բաղկացած է 2 հիմնական մասերից՝

Բաղադրիչ 1. Աջակցություն կարիքավոր համայնքներին (ընդհանուր արժեքը՝ 24.3 մլն դոլար, որից ՀԲ-ի ֆինանսավորումը՝ 17.6 մլն դոլար, ՀՀ կառավարության և այլ աղբյուրներից ներդրումներ՝ 6.7 մլն դոլար), և

⁶⁴Նույն տեղում:

⁶⁵ <http://mtad.am/hy/news/item/2016/04/19/mtad17/>

Բաղադրիչ 2. Աջակցություն միջհամայնքային զարգացման ենթածրագրերին (արժեքը՝ 13.5 մլն դոլար, որից ՀԲ-ի ֆինանսավորումը՝ 10.1 մլն դոլար, ՀՀ կառավարության և այլ աղբյուրներից ներդրումներ՝ 3.4 մլն դոլար):

ՄՆՏԾ-ի 1-ին բաղադրիչով նախատեսված միջոցները բաշխվելու են հետևյալ ուղղություններով՝

ա) սոցիալական ենթակառուցվածքի կառուցման, վերականգնման և վերանորոգման աշխատանքների իրականացում և դրանց կահավորում,

բ) համայնքային ենթակառուցվածքների (խմելու ջրի, ոռոգման համակարգերի և օժանդակ ճանապարհների) վերականգնում, վերանորոգում և վերակառուցում,

գ) սանիտարական և շրջակա միջավայրի պահպանության ենթակառուցվածքների (ջրահեռացման և հեղեղատար համակարգերի, հանգստյան գոտիների) վերանորոգում, վերակառուցում, կառուցում և շրջակա միջավայրի բարելավում և վերականգնում՝ ծառատունկի, աղբի հավաքման ու աղբահանման միջոցով:

ՄՆՏԾ-ի 1-ին բաղադրիչի շրջանակներում իրականացվում են անապահով համայնքների առաջնային հիմնական կարիքների բավարարմանն ուղղված միկրոծրագրեր՝ համայնքների կողմից ներկայացրած հայտերի ու միկրոծրագրերի առաջարկների և դրանց երկաստիճան փորձաքննության հիման վրա: Նախատեսվում է իրականացնել մոտ 120 միկրոծրագրեր: Մինչև 2016թ-ը իրականացվել են 20 միկրոծրագրեր, որոնց շինարարական արժեքը կազմել է 1,4 մլրդ դրամ:

ՄՆՏԾ-ի 2-րդ բաղադրիչով ֆինանսավորում են միջհամայնքային փոխհարաբերությունների ամրապնդմանը և համայնքների կամ դրանց խմբերի միջնաժամկետ համալիր սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված բաղադրյալ ծրագրեր, որոնց շրջանակներում իրականացվում են ենթածրագրեր՝ ներկայացված տվյալ տարածքի (խոշորացվող համայնքների, միջհամայնքային միությունների և համայնքների խմբերի) կողմից: Ենթածրագրերը ընդգրկում են՝

ա) տեղական նշանակության բիզնես ծրագրեր (գյուղմթերքի պահպանում և վերամշակում, նոր տեխնոլոգիաների վրա հիմնված այգիներ, տնկարաններ, ջերմոցներ և այլն, կաթի հավաքման կետեր և վերամշակման արտադրամասեր), և

բ) տարածաշրջանային աշխատանքային շուկաների զարգացման ծրագրեր (մասնագիտական վերապատրաստման և հմտությունների զարգացման կենտրոններ, բիզնես-ինկուբատորներ և այլն):

2016թ-ի ընթացքում ՀՏՀՀ-ի կողմից իրականացվել են հետևյալ ծավալի աշխատանքներ.

- ՄՆՏԶ Ծրագրի վարկային միջոցներից ստացվել է 3.07 մլրդ դրամ (համարժեք 6.33 մլն ԱՄՆ դոլարին), ծախսվել է 2.97 մլրդ դրամ (6.18 մլն ԱՄՆ դոլար),

- Ասիական զարգացման բանկից ստացվել է շուրջ 1.79 մլրդ դրամ (3.69 մլն դոլար), ծախսերը կազմել են 192.34 մլն դրամ կամ 400.18 հազար դոլար,

- ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհի հատուկ հաշիվը լրացվել է 135.94 մլն դրամին համարժեք 282.6 հազար դոլար գումարով, ծախսերը կազմել են 134.94 մլն դրամ կամ 280.5 հազար դոլար,

- ՀՀ կառավարության համաֆինանսավորման գծով ընդամենը ստացվել է 1,101.8 մլն դրամ (2.29 մլն դոլար), որն ամբողջությամբ ծախսվել է,

- Համայնքների դրամական ներդրումների հաշվին ստացվել է 366.45 մլն դրամ կամ 760 հազար դոլար, և կատարված աշխատանքների դիմաց վճարվել է 207.43 մլն դրամ կամ 433.64 հազար դոլար:

2016թ-ին շարունակվել է նաև **Հայաստանում ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ իրականացվող «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (ՀԱՄԱՏԵՂ) հնգամյա ծրագիրը**, որը պաշտոնապես մեկնարկել է 2014թ. հոկտեմբեր ամսին: Ծրագիրն իրականացնում է Համայնքների ֆինանսիստների միավորումը (ՀՖՄ), Տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոնի (ՏՀԶՎԿ), Երևանի մամուլի ակումբի (ԵՄԱ), Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի (ԺԱԱ), Եվրասիա համագործակցություն հիմնադրամի (ԵՀՀ) և Հետազոտական ռեսուրսների Կովկասյան կենտրոնի (ՀՌԿԿ) հետ միասին:

ՀԱՄԱՏԵՂ ծրագիրը, ՏԻ ոլորտում նախատեսված բարեփոխումներին զուգընթաց, հանրային լայնածավալ և արդյունավետ ներգրավման գործիք է, որի միջոցով քաղաքացիները գիտելիք, հմտություններ և հնարավորություն են ստանում ակտիվորեն մասնակցելու իրենց համայնքների կառավարման պլանավորման, իրականացման և վերահսկման գործընթացներին:

Բովանդակային առումով ծրագիրը կարելի է բաժանել չորս հիմնական բաղադրիչի՝

ա) կայունացնել և հզորացնել ՏԻ համակարգի և ապակենտրոնացման բարեփոխումների իրականացման ընթացքում քաղաքացիների մասնակցությանը և շահերի ներկայացմանն ուղղված քաղաքացիական հասարակության կարողությունները,

բ) ուժեղացնել քաղաքացիական հասարակության կարողությունները՝ կենտրոնական և տեղական իշխանությունների աշխատանքը և ապակենտրոնացման բարեփոխումների ընթացքը դիտարկելու նպատակով,

գ) բարձրացնել քաղաքացիների համար ապակենտրոնացման բարեփոխումների մասին անկախ և վստահելի տեղեկատվության հասանելիության մակարդակը,

դ) բարելավել քաղաքացիական հասարակության գործունեության միջավայրը՝ ապակենտրոնացման բարեփոխումներին մասնակցության համատեքստում:

Աշխարհագրորեն և տիպաբանորեն ծրագիրը նույնպես միատարր չէ և ներառում է համայնքների երկու խումբ: Առաջին խումբն իր մեջ ընդգրկում է 30 քաղաքային և խոշոր գյուղական համայնքներ, իսկ երկրորդը՝ 13 բազմաբնակավայր համայնքներ, որոնք ձևավորվել են համայնքների խոշորացման 2015-16թթ. ծրագրի իրականացման արդյունքում: Ընտրված բոլոր համայնքներում իրականացվում են բազմատեսակ գործողություններ, ներառյալ դասընթացներ համայնքների աշխատակիցների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար, մշտադիտարկման և հանրային մասնակցության փոքր դրամաշնորհային ծրագրեր, ՀՀԶԾ-երի և համայնքային բյուջեների մասնակցային մշակումներ և քննարկումներ, աջակցություն տեղական քաղաքացիական նախաձեռնություններին և այլն:

«ՀԱՄԱՏԵՂ» ծրագիրը մեծ ուշադրություն է դարձնում նաև ՏԻ ոլորտում տեղեկատվական համակարգի զարգացմանը: Այս նպատակով բարելավվում է առկա տե-

ղեկատվական համակարգը, իրականացվում են էլեկտրոնային կառավարմանը վերաբերող մի շարք նախաձեռնություններ, ինչպես նաև միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում տեղայնացվում են առավել արդյունավետ գործող տեղեկատվական գործիքները:

Միջազգային կազմակերպությունների գործունեության համակարգվածության և միասնականության գնահատում

«ՏՀ համակարգի զարգացման փորձը ցույց է տալիս, որ համակարգի կատարելագործմանն ուղղված իրական քայլերի նախաձեռնող կողմը հաճախ միջազգային կազմակերպությունները կամ տեղական հասարակական կազմակերպություններն են, որոնք ֆինանսավորվում են միջազգային աղբյուրներից: Իրենց առաքելություններն իրականացնելիս նրանք սերտորեն համագործակցում են «Վ կառավարության, ՏԻՄ-երի, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, հաճախ նաև՝ միմյանց հետ: Սակայն միայն միջազգային կազմակերպությունների նախաձեռնության, ջանքերի և նրանց կողմից իրականացվող ծրագրերի արդյունքում ՏՀ համակարգի իրական զարգացումը անհնար է: Ինչպես «Վ, այնպես էլ բոլոր երկրների ՏՀ համակարգերում չափազանց էական է պետության, մասնավորապես՝ կենտրոնական իշխանության դերը: Պետական կառավարման մարմիններն անմիջապես պատասխանատու են տվյալ երկրի օրենսդրության ձևավորման համար, որում, անշուշտ, պետք է արտացոլված լինեն նաև ՏՀ համակարգը կարգավորող դրույթներ: Առանց հստակ կանոնների, ընթացակարգերի և քաղաքականության՝ ՏՀ համակարգը չի կարող արդյունավետորեն գործել: Բայց, միևնույն ժամանակ, ճիշտ է նաև հակառակ պնդումն առ այն, որ առանց իրական խթանների և գործնական քայլերի՝ օրենքները, կանոնները և ընթացակարգերը ոչինչ են:

Ներկայացված ծրագրերը, իրենց ամբողջ արդյունավետությամբ հանդերձ, որոշ դեպքերում կտրված են լինում համայնքների կառավարման մարմինների փաստացի գործունեությունից, և, ըստ էության, չեն ենթադրում վերջիններիս շահագրգիռ ներգրավվածությունը ՏՀ զարգացման գործում: Բացի դրանից, նմանօրինակ ծրագրերին համայնքների ղեկավարները հաճախ խիստ թերահավատորեն են մոտենում, իսկ ծրագրի ավարտից հետո պարզապես վերադառնում են իրենց բնականոն պահպանողական գործունեությանը:

7. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ

7.1. Համայնքի կողմից մատուցվող հանրային բնույթի ծառայություններ

2016 թվականի ընթացքում համայնքի կողմից բնակիչներին մատուցվող հանրային բնույթի ծառայությունների ոլորտում տեղի են ունեցել մի շարք փոփոխություններ, որոնք ներկայացված են ստորև՝ ըստ ՏԻՄ-երի գործունեության առանձին ոլորտների:

Կանաչապատում և բարեկարգում

2016 թվականին Երևանում կառուցվել, բարեկարգվել և կահավորվել է 340 բակային տարածք, նկարագրողվել է 256 բակային տարածք, տեղադրվել են 107 մանկական խաղեր և 315 մարզասարքեր, կառուցվել է մինի ֆուտբոլի արհեստական խոտածածկով 9 դաշտ⁶⁶:

Նույն տարում սալիկապատվել է 3825 քմ մայթ և նորոգվել 1316 գմ եզրաքար, վերանորոգվել և գունազարդվել է 26 կամարանցում, տեղադրվել են փողոցների նորառճ 15 ուղենիշներ⁶⁷:

2016թ-ին մայրաքաղաքում տնկվել է 45.000 ծառ և թուփ, ծաղկային գեղարվեստական կոմպոզիցիաների թիվն ավելացել է 115-ով: Երևանում 2016թ-ի ընթացքում կանաչ տարածքներն ընդհանուր առմամբ ավելացել են 6.8 հեկտարով⁶⁸:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական զարգացման նախարարության և Ավստրիայի Զարգացման գործակալության համատեղ ֆինանսավորմամբ իրականացվող «Հողերի էրոզիայի ինտեգրացված վերահսկողություն Հարավային Կովկասի լեռնային տարածքներում» ծրագրի շրջանակներում Շիրակի մարզի Սարալանջ և Փոքր Մանթաշ համայնքներում իրականացվել է էրոզիայի դեմ պայքարի միջոցառումներ՝ անտառապատման միջոցով⁶⁹:

«Է-Թի-Փի» բարեգործական հիմնադրամի «Հայաստան ծառատունկ» ծրագրի հետ համագործակցության շրջանակներում իրականացվել և ընթացքի մեջ են համայնքային անտառների հիմնման աշխատանքները: 2016թ-ի ընթացքում Գոգհովիտ, Բենիամին, Գտաշեն, Վահրամաբերդ, Քեթի, Շիրակավան, Մարալիկ և Բավրա համայնքներում իրականացվել է համայնքային անտառների հիմնում՝ շուրջ 12 հա տարածքի վրա⁷⁰:

⁶⁶ Երևանի քաղաքապետարանի 2016թ. տարեկան հաշվետվություն, «Մենք հաշվետու ենք մեր համաքաղաքացիներին», Երևան 2016

⁶⁷ Նույն տեղում

⁶⁸ Նույն տեղում

⁶⁹ <http://shirak.mtad.am/files/docs/24359.pdf>, Հաշվետվություն Շիրակի մարզպետի կողմից 2016 թվականին կատարված աշխատանքների վերաբերյալ

⁷⁰ Նույնը

«Է-Թի-Փի»-ի անտառվերականգնման աշխատանքների համար ժամանակավոր աշխատանքով են ապահովվել 50 գյուղաբնակներ, որոնց օգնությամբ Լոռու մարզի Կողես համայնքում հիմնվող անտառում տնկվել է լրացուցիչ 37,842 ծառ: «Է-Թի-Փի»-ի կողմից ստեղծված այս անտառն արդեն ունի 90,000 ծառ⁷¹:

Աղբահանություն և սանիտարական մաքրում

2016թ-ի ընթացքում կարգավորման իր վերջնակետին հասավ միջազգային օպերատորի՝ «Սանիթեք» ընկերության կողմից Երևանի բոլոր վարչական շրջաններում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցումը: Միջազգային որակի աղբահանությունը, ամբողջապես նորացված տեխնիկա-սարքավորումները, ինչպես նաև Երևանի ողջ տարածքում տեղադրված եվրոպական արտադրության աղբամանները բոլորովին նոր տեսք հաղորդեցին քաղաքին և հարմարավետություն ապահովեցին մայրաքաղաքի բնակիչներին⁷²:

Հայ-չեխական «Գրինէկո-Կաս» ընկերության կողմից նախապատրաստվում է Արմավիր քաղաքում աղբի վերամշակման գործարանի և ջերմոցային տնտեսության կառուցումը: Այդ նպատակով ընկերությունը Արմավիր քաղաքում սեփականության իրավունքով ձեռք է բերել 15հա հողատարածք⁷³:

Գյումրու քաղաքապետարանի կոմունալ ծառայության կողմից 2016թ. ձեռք է բերվել 1 փոշեկուլ-վազող մասնագիտացված մեքենա: Քաղաքի տարածքից կենցաղային աղբը հեռացվում է 15 հատուկ աղբատար և 7 բեռնատար մեքենաների միջոցով, որոնք մինչև աղբավայր մուտք գործելը անցնում են աղբի նախնական զննման և տեսակավորման տեղամասով, որտեղ «Քլին Լենդ» և «Մաքուր քաղաք» ՍՊԸ-ների կողմից կատարվում է պլաստիկ տարաների և այլ առարկաների օգտահանում: ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից քաղաքի կոմունալ տնտեսությանը տրամադրվել են պլաստիկ տարաների առանձնացման արկղեր, որոնք տեղադրվել են քաղաքի բոլոր աղբարկղերի հարևանությամբ: Կուտակված պլաստիկ տարաները ենթարկվում են նախնական հակավորման և ուղարկվում վերամշակման⁷⁴:

Նույնատիպ աշխատանքներ են իրականացվում նաև Ախուրյան համայնքում «Ուրբան կայուն զարգացման» հիմնադրամի աջակցությամբ⁷⁵:

2016թ-ի ընթացքում ակտիվ բանակցություններ են վարվել ՀՀ կառավարության և Գերմանական զարգացման բանկի (KfW) հետ ՀՀ Լոռու մարզի համայնքների և

⁷¹ <http://www.aravot.am/2016/05/05/688341/>,

⁷² Երևանի քաղաքապետարանի 2016թ. տարեկան հաշվետվություն, «Մենք հաշվետու ենք մեր համաքաղաքացիներին», Երևան 2016

⁷³ <http://armavir.mtad.am/files/docs/23833.pdf> ՀՀ Արմավիրի մարզպետի 2016 թվականի գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին

⁷⁴ <http://shirak.mtad.am/files/docs/24359.pdf>, Հաշվետվություն Շիրակի մարզպետի կողմից 2016 թվականին կատարված աշխատանքների վերաբերյալ

⁷⁵ Նույն տեղում

Տավուշի մարզի Դիլիջան համայնքի աղբահանության զարգացման և աղբավայրի կառուցման ծրագրի իրականացման շուրջ⁷⁶:

2016թ-ի դրությամբ ՀՀ Տավուշի մարզում պաշտոնապես աղբավայրեր են շահագործվում Իջևան, Բերդ, Նոյեմբերյան և Այրում համայնքների կողմից⁷⁷:

Բնակելի և ոչ բնակելի տարածքների պահպանում

Երևան քաղաքում 2016թ-ին վերանորոգվել է 774 շենքերի շուրջ 77000 քմ մակերեսով հարթ տանիք, մասնակի նորոգվել է 1111 շենքերի շուրջ 49000 քմ մակերեսով թեք տանիք, ամբողջովին հիմնանորոգվել է 12 շենքի 11094 քմ թեք տանիք, վերանորոգվել է բազմաբնակարան 541 շենքերի 924 շքամուտք: Բազմաբնակարան շենքերի վթարային պատշգամբների փլուզումները կանխելու նպատակով նորոգվել և ամրացվել է մայրաքաղաքի 57 շենքի 138 պատշգամբ⁷⁸:

Արաքսավան համայնքում վերանորոգվել են 3 բազմաբնակարան շենքերի տանիքներ⁷⁹: 2016թ-ի դրությամբ, համատիրություններ են գործում Արարատի մարզի Արարատ և Արտաշատ քաղաքներում:

ՀՀ կառավարության որոշումներով հատկացված միջոցներով իրականացվել են Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի մանկապարտեզի շենքի տանիքի հիմնանորոգում՝ 32 միլիոն 50 հազար դրամ գումարի չափով, Գավառ քաղաքի կենտրոնական հրապարակի վերակառուցում՝ 19 միլիոն 800 հազար դրամ գումարի չափով⁸⁰: Վահանի համայնքի հանդիսությունների սրահի վերանորոգման համար ՀՀ կառավարության որոշմամբ հատկացվել է 5 միլիոն 820 հազար դրամ:

2016թ-ին շինարարական աշխատանքներ են սկսվել Ալավերդի և Սպիտակ քաղաքներում նոր մանկապարտեզի շենքերի կառուցման համար: Այդ աշխատանքներն իրականացվում են «Տաշիր» բարեգործական հիմնադրամի շուրջ 1,0 մլրդ. դրամի ֆինանսավորմամբ⁸¹:

ՀՀ կառավարության 26.05.2016 թիվ 527-Ն որոշմամբ ՀՀ Լոռու մարզպետարանին հատկացվել է 23.5 մլն դրամ, որից Թումանյան համայնքի Թումանյան քաղաքի

⁷⁶ <http://www.mtad.am/files/docs/1567.pdf>, ՀՀ ՏԿՁՆ-ի 2016 թվականի ընթացքում կատարած հիմնական աշխատանքների արդյունքների վերաբերյալ հաշվետվություն

⁷⁷ <http://tavush.mtad.am/reports/>, Հաշվետվություն Տավուշի մարզում 2016թ. կատարած արդյունքների և սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին

⁷⁸ Երևանի քաղաքապետարանի 2016թ. տարեկան հաշվետվություն, «Մենք հաշվետու ենք մեր համաքաղաքացիներին», Երևան 2016

⁷⁹ <http://ararat.mtad.am/reports/>, Արարատի մարզի 2016 թվականի սոցիալ-տնտեսական վիճակի մասին հաշվետվություն

⁸⁰ <http://gegharkunik.mtad.am/files/docs/24362.pdf>, ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2016 թվականի տարեկան աշխատանքային հաշվետվությունը

⁸¹ <http://lori.mtad.am/files/docs/24987.pdf>, ՀՀ Լոռու մարզպետի 2016 թվականի աշխատանքային գործունեության հաշվետվություն

մանկապարտեզի շենքի վերանորոգման համար հատկացվել է 12 մլն. դրամ, իսկ քաղաքի 3-րդ փողոցի Նոր Միկրոշրջանի N4 բազմաբնակարան շենքի տանիքի վերանորոգման համար հատկացվել է 11.5 մլն.դրամ⁸²:

«Հ կառավարության կողմից 16.0 մլն. դրամ է հատկացվել Ալավերդի, Շահումյան, Եղեգնուտ, Անտառամուտ, Դեբեդ, Թումանյան համայնքներին հորդառատ անձրևներից և կարկուտից վնասված ճանապարհների վերականգնման համար⁸³:

Ոսկևան համայնքում ավարտվել են մշակույթի տան մասնակի վերանորոգման աշխատանքները, որոնք նպատակ ունեին բարձրացնելու մշակույթի տան էներգաարդյունավետությունը⁸⁴:

2016թ-ին 50.0 մլն. դրամով իրականացվել են Շենիկ համայնքի մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքները⁸⁵: Իրականացվել են նաև Փարաքար համայնքի մանկապարտեզի վերանորոգման աշխատանքները, Արմավիր համայնքի թիվ 11 մանկապարտեզի շենքի տանիքի և Ոսկեհատ համայնքի մանկապարտեզի շենքի տանիքի վերանորոգման աշխատանքները՝ մոտ 97.0 մլն. դրամ ծավալով, մոտ 20.0 մլն. դրամ էլ տրամադրվել է Վաղարշապատ համայնքի մարզադպրոցի տարածքում ֆուտբոլի մարզադաշտի և վազբուլու կառուցման համար:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից հատկացված միջոցներով սկսվել է իրականացվել Կապանի արվեստի դպրոցի վերակառուցման աշխատանքները՝ 13.4 մլն. դրամի չափով⁸⁶: Մեղրի համայնքում բնակելի շենքերի տարածքների ասֆալտբետոնե ծածկի կառուցման համար կատարվել են 32.2 մլն. դրամի աշխատանքներ⁸⁷:

Զրամատակարարում և ջրահեռացում

2016թ-ի դրությամբ Երևան քաղաքի, «Հ 41 այլ քաղաքների և 276 գյուղական համայնքների (այդ թվում՝ 313 գյուղական բնակավայրերի) ջրային համակարգերի սպասարկումը իրականացնում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն:

Երևանում վերանորոգվել է բնակելի շենքերի ջրամատակարարման և ջրահեռացման 17,082 գծմ երկարությամբ ներքին ցանց: Մայրաքաղաքում, Ֆրանսիայի կառավարության կողմից տրամադրված վարկային ծրագրի շրջանակներում, ամբողջությամբ արդիականացվել է 23 փողոցների 5.2 կմ երկարությամբ կոյուղու ցանցը, կառուցվել է 94 կմ նոր ջրագիծ, իրականացվել են 6344 անհատական ջրաչափական

⁸² Նույն տեղում

⁸³ Նույն տեղում

⁸⁴ <http://www.mtad.am/files/docs/1567.pdf>, «Հ ՏԿԶՆ-ի 2016 թվականի ընթացքում կատարած հիմնական աշխատանքների արդյունքների վերաբերյալ հաշվետվություն

⁸⁵ <http://armavir.mtad.am/files/docs/23833.pdf>, «Հ Արմավիրի մարզպետի 2016 թվականի գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին

⁸⁶ <http://syunik.mtad.am/files/docs/24367.pdf>, Հաշվետվություն «Հ Սյունիքի մարզպետի 2016 թվականի գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին

⁸⁷ Նույն տեղում

հանգույցների կառուցման աշխատանքներ: Վերակառուցվել է «Աէրացիա» կեղտաջրերի մաքրման կայանը՝ ապահովելով առաջնային մեխանիկական մաքրումը և տիղմի մշակումը: Ներդրվել է ջրամատակարարման ամբողջ ցանցի հեռակառավարման ՍԿԱԴԱ համակարգ, որի արդյունքում բարելավվելու է խմելու ջրի հոսքերի կառավարման և մատակարարման արդյունավետությունը և անվտանգությունը⁸⁸:

ՀՀ Արարատի մարզի 21 համայնքներում իրականացվել է 90.5 կմ երկարությամբ և 175 մլն. դրամ ընդհանուր արժողությամբ դրենաժների մաքրման աշխատանքներ⁸⁹:

ՎՋԵԲ-ի հետ համագործակցության ծրագրի շրջանակներում ավարտվել են Գավառի, Մարտունու, Վարդենիսի մաքրման կայանների, Սևան, Ջերմուկ, Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքների կոյուղագծերի շինարարության և վերականգնման աշխատանքները, որոնց արդյունքում կառուցվել է 22 կմ երկարությամբ կոյուղագիծ, ինչպես նաև շահագործման են հանձնվել Գավառ և Ջերմուկ քաղաքների մաքրման կայանները, որտեղ կատարվում է միայն մեխանիկական մաքրում⁹⁰:

ԱՄՆ ՄՁԳ-ի ֆինանսավորմամբ «Հայաստանի Ֆուլեր տնաշինական կենտրոն» ԲՀԿ-ի և «Հեյֆեր Փրոջեքթ Ինթերնեյշնլ» կազմակերպության կողմից ճոճկան համայնքում իրականացվել է 1.220 մ երկարությամբ ոռոգման ջրագծի վերականգնողական աշխատանքներ⁹¹:

Դիլիջան և Բերդ քաղաքներում ջրամատակարարումն իրականացվում է բաց աղբյուրներից մաքրման կայանների միջոցով, իսկ Իջևան, Նոյեմբերյան և Այրում քաղաքներում՝ կապտաժներից, ինքնահոս և մեխանիկական եղանակներով՝ համապատասխանաբար 85% և 15% հարաբերությամբ⁹²:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից հատկացված միջոցներով սկսվել է Գորիս համայնքի Ակներ և Որոտան բնակավայրերի ջրընդունիչների և ջրատարների կառուցման աշխատանքները՝ 8.1 մլն. դրամի չափով⁹³:

⁸⁸ Երևանի քաղաքապետարանի 2016թ. տարեկան հաշվետվություն, «Մենք հաշվետու ենք մեր համաքաղաքացիներին», Երևան 2016

⁸⁹ <http://ararat.mtad.am/reports/>, ՀՀ Արարատի մարզի 2016 թվականի սոցիալ-տնտեսական վիճակի մասին հաշվետվություն

⁹⁰ <http://gegharkunik.mtad.am/files/docs/24362.pdf>, ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2016 թվականի տարեկան աշխատանքային հաշվետվությունը

⁹¹ <http://lori.mtad.am/files/docs/24987.pdf>, ՀՀ Լոռու մարզպետի 2016 թվականի աշխատանքային գործունեության հաշվետվություն

⁹² <http://tavush.mtad.am/reports/>, Հաշվետվություն ՀՀ Տավուշի մարզում 2016թ. կատարած արդյունքների և սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին

⁹³ <http://syunik.mtad.am/files/docs/24367.pdf>, Հաշվետվություն ՀՀ Սյունիքի մարզպետի 2016 թվականի գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին

Ջեռուցում

Չնայած այն հանգամանքին, որ 2016 թվականի ընթացքում համայնքներում կենտրոնացված ջեռուցում գրեթե չի իրականացվել, այնուամենայնիվ 2016թ-ի վերջում ընդունված «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ նոր խմբագրությամբ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, համայնքը կարող է տեղական վճար սահմանել կենտրոնացված ջեռուցման համար:

Գերեզմանատների պահպանում

Համաձայն 2015 թվականի ապրիլին «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխության և «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքի՝ 2016 թվականին ՀՀ կառավարությունը սահմանեց մասնավոր գերեզմանատների շահագործման գործունեության իրականացման թույլտվություն ստանալու կարգը, որը տրամադրվելու է համայնքի ղեկավարի կողմից՝ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին⁹⁴: Իսկ ՀՀ ՏԿԶ նախարարի 2016թ. օգոստոսի 17-ի նախարարի N 11-Ն հրամանով սահմանվեց գերեզմանատեղերի հաշվառման և հուղարկավորությունների գրանցման մատյանի տիպային ձևը⁹⁵:

2016թ-ի ընթացքում գերեզմանատների կազմակերպման և գերեզմանատեղերի հատկացման հարցը շարունակել է մնալ արդիական:

Հասարակական տրանսպորտ և ճանապարհաշինություն

2016թ-ի դրությամբ ներհամայնքային հասարակական տրանսպորտ է գործել թվով 18՝ Երևան, Վանաձոր, Գյումրի, Ալավերդի Սպիտակ, Իջևան, Դիլիջան, Արմավիր, Հրազդան, Աբովյան, Եղվարդ, Գավառ, Սևան, Աշտարակ, Ջերմուկ, Սիսիան, Գորիս, Կապան համայնքներում: 2016 թվականին կազմակերպվել և անցկացվել է Արմավիր համայնքի ներքաղաքային N6 և N9 միկրոավտոբուսային 2 երթուղիների մրցույթները⁹⁶:

2016թ-ին Երևանում շահագործման հանձնվեց Արշակունյաց պողոտա-Շիրակի փողոց-Արտաշատի խճուղի 5 կմ երկարությամբ և 24-28 մետր լայնությամբ ճանապարհը: Նորակառույց ճանապարհահատվածը Ասիական զարգացման բանկի աջակցությամբ 2014թ-ին մեկնարկած՝ Երևան քաղաքի շրջանցիկ ճանապարհի կառուցման

⁹⁴ ՀՀ կառավարության 17 մարտի 2016 թվականի N 321-Ն որոշում, «Մասնավոր գերեզմանատների շահագործման գործունեության իրականացման թույլտվություն ստանալու կարգը սահմանելու մասին» <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=104615>

⁹⁵ ՀՀ Տարածքային Կառավարման և զարգացման նախարարի հրաման N11, 17 օգոստոսի 2016 թվական, «Գերեզմանների հաշվառման և հուղարկավորությունների գրանցման մատյանի տիպային ձևը հաստատելու մասին» <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=108134>

⁹⁶ <http://armavir.mtd.am/files/docs/23833.pdf>, ՀՀ Արմավիրի մարզպետի 2016 թվականի գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին

համալիր ծրագրի մաս է կազմում: Ճանապարհահատվածը նախագծվել և կառուցվել է միջազգային չափորոշիչներին համապատասխան, ճանապարհի երթևեկելի հատվածից դուրս են բերվել կոմունալ ենթակառուցվածքները: Ճանապարհի անընդհատ երթևեկությունն ապահովում է Արտաշատի խճուղու երկաթուղային գծանցի վրայով կառուցված 270 մ երկարությամբ ուղեանցը և Շիրակի փողոց-Արշակունյաց պողոտա հատման մասի շրջանաձև երթևեկությամբ 2 ուղեանցերով ճանապարհը: Ճանապարհն ունի 4 երթևեկելի գոտի, լրացուցիչ երթևեկելի գոտի և սպասարկման ճանապարհ՝ հարակից տարածքի բնակիչների համար⁹⁷:

2016թ-ին սկսվել են շրջանցիկ ճանապարհի՝ Շիրակի փողոցից դեպի Արգավան-դի հատված տանող ճանապարհի շինարարական աշխատանքները: Հրազդան գետի վրա նախատեսված է կառուցել 252 մ երկարությամբ կամուրջ, որը կկրի «Էրեբունի-Երևան 2800» անունը և կնվիրվի Երևանի հիմնադրման 2800-ամյակին⁹⁸: Ասիական զարգացման բանկի աջակցությամբ ներգրավվել է միջազգային փորձառու խորհրդատու, որը պետք է մշակի Երևան քաղաքի տրանսպորտի նոր երթուղային ցանց՝ հնարավորինս ապահովելով կրկնությունների բացառում և արդյունավետություն:

«Արանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության տրամադրած միջոցներով իրականացվել են ՀՀ Արարատի մարզի Ջրաշեն համայնքի միջհամայնքային և ներհամայնքային ճանապարհների վերանորոգման աշխատանքները, Արմաշ համայնքի գյուղամիջան կենտրոնական ճանապարհի ասֆալտապատման աշխատանքները, Վ. Արտաշատ համայնքի դպրոց տանող ճանապարհի հիմնանորոգման աշխատանքները և Արտաշատ համայնքի Ներսիսյան փողոցի ասֆալտապատման աշխատանքները⁹⁹»:

Հորդառատ անձրևներից տուժած ՀՀ Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուր համայնքի ներհամայնքային նշանակության ճանապարհների վերանորոգման նպատակով ՀՀ պետական բյուջեից համայնքին հատկացվել է 5 միլիոն դրամի կապիտալ սուբվենցիա¹⁰⁰:

2016թ-ին Իջևանի համայնքապետարանի պատվերով 2 փուլով իրականացվում է համայնքի Մետաղագործների թաղամաս տանող ճանապարհի ասֆալտապատման աշխատանքները՝ ընդհանուր 36.0 մլն. դրամ պայմանագրային արժեքով: Իսկ Դիլիջանի համայնքապետարանի պատվերով իրականացվել են համայնքի Հովք, Թեղուտ, Գոշ, Խաչարձան, Աղավնավանք, Հաղարծին բնակավայրերի համայնքային նշանակության ճանապարհների ասֆալտապատման, վերանորոգման, մայթերի վերանորոգման, հենապատերի կառուցման, արտաքին ջրահեռացման համակարգերի կա-

⁹⁷ 2016 Երևանի քաղաքապետարանի տարեկան հաշվետվություն, «Մենք հաշվետու ենք մեր համաքաղաքացիներին», Երևան 2016

⁹⁸ Նույն տեղում

⁹⁹ <http://ararat.mtad.am/reports/>, Արարատի մարզի 2016 թվականի սոցիալ-տնտեսական վիճակի մասին հաշվետվություն

¹⁰⁰ <http://gegarkunik.mtad.am/files/docs/24362.pdf>, ՀՀ Գեղարքունիքի մարզի 2016 թվականի տարեկան աշխատանքային հաշվետվությունը:

ռուցման, հասարակական տրանսպորտի կանգառների արդիականացման աշխատանքներ՝ ընդհանուր 36.684 մլն. դրամ պայմանագրային արժեքով: Աշխատանքներն իրականացրել են կապալառու մի քանի շինարարական կազմակերպություններ¹⁰¹:

Կրթություն, մշակույթ և երիտասարդության հարցեր

Համաձայն յուրաքանչյուր տարի անցկացվող «Տարվա լավագույն համայնք» ամենամյա մրցանակաբաշխության հրապարակված արդյունքների՝ Կապանը ճանաչվել է «Մշակութային լավագույն համայնք 2016»¹⁰²:

«Երևանյան ամառ 2016» եռամսյա միջոցառումների ծրագրի շրջանակում Երևանի քաղաքապետարանի ենթակայության մշակութային կրթօջախները՝ երաժշտական և արվեստի դպրոցները, մշակութային տները, մանկապատանեկան ստեղծագործության կենտրոնները բացօթյա բաց դասեր են անցկացրել: Մասնակից երեխաները կազմակերպության մուտքի մոտ մայրաքաղաքի հյուրերին և բնակիչներին բաց դասի միջոցով ներկայացրել են պարային գեղեցիկ կատարումներ, անցկացվել են կերպարվեստի, թատերական բեմադրությունների, երաժշտական և այլ բաց դասեր¹⁰³:

Թարգմանչաց տոնի առթիվ Երևանի քաղաքապետարանի ճեմասրահում բացվել է «Ընթերցող Երևան» խորագրով գրքի ցուցահանդես-վաճառք՝ մասնակցությամբ հրատարակիչների ազգային ասոցիացիայի և գրախանութների, իսկ երեկոյան շարունակվել է գրական բոհեմ համերգ-երեկոյով¹⁰⁴:

2016թ-ին երևանաբնակ 30295 երեխաների համար մայրաքաղաքի 160 մանկապարտեզներում ապահովվել է անվճար կրթություն, 168 երեխայի ներառական կրթությունը 8 կենտրոններում, և սոցիալապես անապահով ընտանիքների շուրջ 80 երեխայի կրթություն՝ գիշերակացով: Հիմնանորոգվել է 4 և մասնակի նորոգվել 52 նախադպրոցական կրթական հաստատություն, տրամադրվել է 8 744 միավոր նոր գույք¹⁰⁵:

Մայրաքաղաքի երեխաների արտադպրոցական դաստիարակությունը կազմակերպում են 26 երաժշտական, արվեստի և կերպարվեստի դպրոցներ, 16 մշակութային տներ, մշակույթի, ստեղծագործության և գեղագիտական կենտրոններ, «Հայաստանի փոքրիկ երգիչներ» և Յու. Բախշյանի անվ. մանկական ֆիլիարմոնիաները, «Երևան» փողային նվագախումբը, ինչպես նաև 12 շախմատի դպրոցներ և 28 մարզական այլ կազմակերպություններ: Մայրաքաղաքում 2016թ-ին հիմնվել է շախմատի 2 դպրոց՝ դպրոցների ընդհանուր թիվը Երևանում հասցնելով 12-ի, իսկ երաժշտական դպրոցներին տրամադրվել է 18 տեսակի 154 երաժշտական գործիք: Երևանի 19 գրադարան-

¹⁰¹ <http://tavush.mtad.am/reports/>. Հաշվետվություն Տավուշի մազում 2016թ. կատարած արդյունքների և սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին

¹⁰² <http://syunikonline.am/19993.html#sthash.wSIIIG9DW.dpuf>

¹⁰³ <https://www.yerevan.am/am/culture/>

¹⁰⁴ Նույն տեղում

¹⁰⁵ 2016 Երևանի քաղաքապետարանի տարեկան հաշվետվություն, «Մենք հաշվետու ենք մեր համաքաղաքացիներին», Երևան 2016

ների գրքային ֆոնդը հարստացվել է շուրջ 15000 գրքերով: Գրադարանները հասանելի են նաև առանձնահատուկ կարիքներ ունեցող քաղաքացիների համար. կիրառվում են «ԱՐԵՎ» և «Ոսկե շղթա 1,2,3» ծրագրերը՝ տեսողական և լսողական խնդիրներ ունեցողների համար:

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող Հր. Ղափլանյանի անվ. դրամատիկական, Պատանի հանդիսատեսի և Մ. Մկրտչյանի անվ. արտիստական թատրոններում 2016թ-ին բեմադրվել է 278 ներկայացում, թատրոններն ունեցել են 53158 հանդիսատես: Ընդհանուր առմամբ, մայրաքաղաքում 2016թ-ի ընթացքում կազմակերպվել է մարզամշակութային ավելի քան 86 միջոցառում:

«Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնը տեղի է ունեցել Երևանում 13-րդ տարին անընդմեջ: Կինոփառատոնը նշանավորվել է բրիտանացի դերասանուհի, համաշխարհային կինեմատոգրաֆի աստղ Ժակլին Բիսետի Երևան ժամանմամբ, ով ներկա է գտնվել փառատոնին պատվավոր հյուրի կարգավիճակում: Փառատոնի շրջանակում ցուցադրվել է 135 ֆիլմ¹⁰⁶:

Գավառի արվեստի դպրոցում Գեղարքունյաց թեմի աջակցությամբ նշվել է «Համբարձման տոնը»¹⁰⁷:

Հայաստանի կինոգործիչների միության կողմից հայտարարված «Կինոաշունի» շրջանակներում Սևան, Ծովագարդ, Վարդենիկ և Ճամբարակ համայնքներում կազմակերպել և անցկացրել են հայկական ֆիլմերի, իսկ Գավառի մշակույթի տանը՝ Մալյանի անվան թատրոնի կողմից ցուցադրված ներկայացման անվճար դիտումներ: ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ Սևան և Լճաշեն համայնքներում կազմակերպվել է Երևանի պետական կամերային թատրոնի հյուրախաղերը: «Իմ Հայաստան» համահայկական փառատոնի շրջանակներում Գավառ քաղաքի Ֆ. Դովլաթյանի անվան մշակույթի պալատում անցկացվել են Արգենտինայի «Նաիրի» պարային խմբի՝ հայ և արտասահմանցի դուդուկահարների մասնակցությամբ համերգներ¹⁰⁸:

«Պետական աջակցություն մշակութային միջոցառումներին» ծրագրի շրջանակներում կազմակերպվել է «Վարդավառ» հանդիսություն Գյուլագարակ համայնքի «Հեքիաթ» հանգստյան գոտու տարածքում¹⁰⁹:

2016թ-ի սեպտեմբերին Խորովածի ավանդական 8-րդ փառատոնը անցկացվեց Ախթալա քաղաքում: Փառատոնի շրջանակում գործում էր շուրջ 30 տաղավար: Փառատոնն աննախադեպ էր ինչպես մասնակիցների, այնպես էլ հյուրերի թվով: Փառատոնի շրջանակում կազմակերպվեց հագեցած և հետաքրքիր ծրագիր¹¹⁰:

Դսեղ համայնքում տեղի ունեցավ ավանդական «Թումանյանական օրը»: Ամեն տարի հոկտեմբերի սկզբին Դսեղում են հավաքվում հեռու-մոտիկ բնակավայրերից՝

¹⁰⁶ <http://newsarmenia.am/am/news/culture/>, 2016 թ-ի առավել նշանակալի 10 մշակութային

իրադարձություններն ըստ ԱՄԻ «Նովոստի-Արմենիա»-ի

¹⁰⁷ <http://gegharkunik.mtad.am/files/docs/24362.pdf>, ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2016 թվականի տարեկան աշխատանքային հաշվետվությունը

¹⁰⁸ Նույն տեղում

¹⁰⁹ <http://lori.mtad.am/files/docs/24987.pdf>, ՀՀ Լոռու մարզպետի 2016 թվականի աշխատանքային գործունեության հաշվետվություն

¹¹⁰ http://newsarmenia.am/am/news/society/hami_ton_akhtalayum_hayastanum/

Վանաձորից, Ալավերդուց, մայրաքաղաքից, ևս մեկ անգամ հաղորդակցվելու թումանյանական աշխարհի հետ: Միջոցառմանը մասնակցում էր և ներկաներին դիմեց ՀՀ մշակույթի նորանշանակ նախարար Արմեն Ամիրյանը, ընդգծելով, որ թումանյանական արժեքները միշտ ուղեկցելու են մեր ժողովրդին¹¹¹:

ԼԴՀ «Մենք ենք մեր սարերը» երգի-պարի համույթի համերգները անցկացվել են Վանաձոր, Տաշիր, Ստեփանավան, Ալավերդի համայնքներում: Իրականացվեց «Իմ Հայաստան» համահայկական փառատոնի կազմակերպումը Վանաձորի Շ. Ազնավուրի անվան մշակույթի պալատում և էդ. Կզարթյանի անվան երաժշտական դպրոցի համերգասրահում¹¹²: Հոկտեմբերի 1-ին Վանաձորի Գուսան Ջաքարյանի անվան մշակույթի տան սաների ուժերով կայացավ Տոնական համերգ Տարեցների տան և թաղամասի տարեցների համար: Նույն շաբաթվա ընթացքում տարեցների համար տոնական միջոցառումներ կայացան նաև Վանաձորի թիվ 1 և 2 մշակույթի տներում:

«Նախաբեմ» կրթամշակութային ասոցիացիայի կողմից կազմակերպված «Նռան հատիկը» մանկապատանեկան թատերախմբերի ամենամյա փառատոնում Հրազդանի «Արտավազդ» երիտասարդական կենտրոնի թատերախումբը արժանացել է դափնեկրի կոչմանը: Եղվարդ և Բյուրեղավան քաղաքներում բացվել են Հայաստանի շախմատի ակադեմիայի մասնաճյուղեր¹¹³:

2016թ. հունիսի 5-ին Գյումրիում անց է կացվել «Հնչիր շեփոր հաղթական» նշանաբանով փառատոն, որին մասնակցել է 20 փողային նվագախումբ, իսկ օգոստոսի 7-ին «Իմ Հայաստան» համահայկական փառատոնի «Երգչախմբային արվեստի օրեր» միջոցառման շրջանակներում Գյումրու Ա. Բրուտյանի անվան թիվ 4 երաժշտական դպրոցում համերգով հանդես է եկել սփյուռքից ժամանած 7 երգչախումբ¹¹⁴:

2016թ-ից Քոաֆ հիմնադրամի և Վարդաքարի համայնքապետարանի համաֆինանսավորմամբ իրականացվում է «Փրկեցեք երեխաներին» ծրագիրը: Ծրագրի բաղկացուցիչ մաս է կազմում նաև համայնքում բրուտագործության և փայտագործության խմբակների բացումը, որը նախատեսված է իրականացնել մինչև 2020 թվականը¹¹⁵:

2016թ-ին ՀՀ Տավուշի մարզում տեղի ունեցած համայնքային միջոցառումներից հիշատակման է արժանի Դիլիջանում կայացած գորգերի փառատոնը, Բերդի մերդի փառատոնը, ինչպես նաև Ենոքավանում մեկնարկած Հայթույս փառատոնը, որոնց մասնակցում էին հանրապետության ավելի քան 300 արտադրողներ ու գործարարներ¹¹⁶:

¹¹¹ <http://orer.eu/hy/>

¹¹² <http://lori.mtad.am/files/docs/24987.pdf>, ՀՀ Լոռու մարզպետի 2016 թվականի աշխատանքային գործունեության հաշվետվություն

¹¹³ <http://kotayk.mtad.am/files/docs/23802.pdf>, ՀՀ Կոտայքի մարզպետի հաշվետվությունը 2016 թվականի գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին

¹¹⁴ <http://shirak.mtad.am/files/docs/24359.pdf>, Հաշվետվություն Շիրակի մարզպետի կողմից 2016 թվականի կատարված աշխատանքների վերաբերյալ

¹¹⁵ Նույն տեղում

¹¹⁶ <http://tavush.mtad.am/reports/>, Հաշվետվություն Տավուշի մարզում 2016թ. կատարած արդյունքների և սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին

Առողջապահություն

2016թ-ի տարեսկզբի դրությամբ, բացի Երևան քաղաքից, ՀՀ մարզերում գործել են 97 համայնքային ենթակայության բժշկական ամբուլատորիաներ: Սյունիքի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Շիրակի մարզերում բոլոր բժշկական ամբուլատորիաները ունեցել են մարզային ենթակայություն:

2016թ-ին Համաշխարհային բանկի աջակցությամբ շահագործման հանձնվեցին «Մխչյանի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի և «Լանջազատի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի նորակառույց շենքերը: Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի աջակցությամբ հիմնանորոգվել է «Նորաշենի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի շենքը՝ 37.5 մլն դրամ արժեքով¹¹⁷:

2016թ-ին վերանորոգվել է Երևան քաղաքի ենթակայության 14 պոլիկլինիկա և ձեռք է բերվել 55 միավոր բժշկական սարքավորումներ: Մայրաքաղաքում ամբողջությամբ լուծվել է պոլիկլինիկաների ջեռուցման խնդիրը: Համայնք-մասնավոր համագործակցության շրջանակներում Երևանի Կ. Եսայանի անվան պոլիկլինիկան ամբողջությամբ հիմնանորոգվել է և արդիականացվել: Համայնքային բյուջեի միջոցներով ամբողջությամբ հիմնանորոգվել և վերազինվել է «Քանաքեռ-Ձեյթուն» ծննդատունը: Մայրաքաղաքում ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատությունների վերազինումը նպաստել է ինչպես մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը, այնպես էլ այդ հաստատություններ հաճախումների ավելացմանը: 2016թ-ին Երևանի քաղաքապետարանի ենթակայության պոլիկլինիկաներում գրանցվել է շուրջ 1.800.000 հաճախում¹¹⁸:

«Հայաստանի մանուկներ հիմնադրամ» բարեգործական կազմակերպության կողմից Լոռու մարզի Թումանյան, Դեղ, Քարինջ, Մարց, Դեբեդ, Ձորագյուղ, Մեծ Այրում, Աբրի, Արևածագ, Վահագնի համայնքներում և բնակավայրերում իրականացվել են առողջապահական ծրագրեր՝ 12.350.000 դրամ արժեքով¹¹⁹:

¹¹⁷ <http://ararat.mtad.am/reports/>, Արարատի մարզի 2016 թվականի սոցիալ-տնտեսական վիճակի մասին հաշվետվություն

¹¹⁸ 2016 Երևանի քաղաքապետարանի տարեկան հաշվետվություն, «Մենք հաշվետու ենք մեր համաքաղաքացիներին», Երևան, 2016

¹¹⁹ <http://lori.mtad.am/files/docs/24987.pdf>, ՀՀ Լոռու մարզպետի 2016 թվականի աշխատանքային գործունեության հաշվետվություն

ՏԻՄ-երի կողմից համայնքային ծառայությունների մատուցման վճարներ սահմանելու իրավասությունը

2016թ. դեկտեմբերի 16-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքը շարադրվեց նոր խմբագրությամբ¹²⁰։ ըստ էության ընդունվեց նոր օրենք: «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների և լրացումների իրականացումը սպասելի էր՝ կապված տեղական տուրքերի և վճարների բնագավառում առկա որոշ փոփոխությունների անհրաժեշտության հետ:

Եթե նախկին «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով տեղական վճարը ձևակերպված էր որպես «ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար», ապա նոր շարադրված օրենքով այն սահմանվել է ուղղակիորեն «տեղական վճար» ձևակերպմամբ: Իսկ վերջինս ենթադրում է, որ ՏԻՄ-երը կարող են գանձել տվյալ ծառայության մատուցման համար ծախսվող գումարից ավելի կամ պակաս գումար: Այսինքն՝ բնակիչը չի փոխհատուցելու միայն տվյալ ծառայության մատուցման համար ՏԻՄ-երի կողմից ծախսվող գումարը, այլ վճարելու է տեղական վճար, որը կարող է ավելի կամ պակաս լինել փոխհատուցման գումարից:

Նոր շարադրված օրենքով վերացվեց նախկին օրենքի բացը՝ տեղական տուրքերի տեսակների մեջ որպես առանձին տուրքի տեսակ սահմանելով համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և մատուցման թույլտվության համար:

Փոփոխություններ են կատարվել նաև տեղական վճարների տեսակներում՝ դրանց թիվը 6-ից դարձնելով 18, որոնցից 2-ը նախկին օրենքում տվյալ գործունեության թույլտվության համար ձևակերպված էր որպես տեղական տուրք, իսկ նոր օրենքում՝ որպես տեղական վճար: Միևնույն ժամանակ, համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտը ձևակերպելու համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար մատուցած ծառայությունների դիմաց նախկին օրենքում սահմանվում էր տեղական վճարի մեկ տեսակ, իսկ նոր շարադրված օրենքում՝ տեղական վճարի երեք տարբեր տեսակներ:

Տեղական վճարների ցանկում ավելացել են տեղական վճարի տեսակներ համայնքային ենթակայության նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության հաստատությունների ծառայություններից օգտվողների համար, համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար:

¹²⁰ <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=110568>, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին, ՀՕ-234-Ն, 16.12.2016

7.2. Համայնքային (հանրային բնույթի) ծառայությունների կառավարում

2016թ-ին համայնքների կողմից մատուցվող ծառայությունների վրա կատարվող ծախսերը, 2015թ-ի հետ համեմատությամբ, նվազել են մոտ 5.02 մլրդ. դրամով, որը 2015 թ-ի նույն ցուցանիշից¹²¹ պակաս է 4.0%-ով: Կարելի է փաստել, որ 2016թ-ի ընթացքում ՀՀ համայնքների բնակիչները 5.02 մլրդ դրամով կամ 4.0%-ով պակաս համայնքային ծառայություններ են ստացել, քան 2015թ-ին:

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների վրա կատարվող ծախսերը ՀՀ համայնքների 2016թ-ի ամփոփ բյուջեում նվազել են մոտ 133 մլն. դրամով: Սակայն Երևան քաղաքի 2016թ-ի բյուջեում ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը, 2015թ-ի հետ համեմատությամբ, ավելացել են մոտ 49 մլն. դրամով: Դա նշանակում է, որ ՀՀ մնացած բոլոր համայնքների (բացառությամբ Երևանի) ամփոփ բյուջեում ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը նվազել են մոտ 182 մլն. դրամով:

2016թ-ին համայնքներում ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը կազմել են համայնքների կողմից մատուցվող համայնքային ծառայությունների վրա կատարվող ծախսերի 23.5%-ը, մինչդեռ 2015թ-ին այդ ցուցանիշը կազմել է 22.7%-ը, այսինքն ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ աճել է 0.8 տոկոսային կետով:

2016թ-ին Երևան քաղաքի բյուջեում ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերը կազմել են համայնքների կողմից մատուցվող համայնքային ծառայությունների 11%-ը, իսկ ՀՀ մնացած համայնքների (բացառությամբ Երևանի) ամփոփ բյուջեում՝ 39.5%-ը: Հատկանշական է, որ Երևանի բյուջեում ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերը համայնքի կողմից մատուցվող համայնքային ծառայությունների ծախսերի մեջ իր մեծությամբ զբաղեցնում է 3-րդ տեղը, իսկ ՀՀ մնացած համայնքներում միասին վերցրած՝ 1-ին տեղը: Պետք է նկատել նաև, որ Երևանում համայնքի կողմից մատուցվող ծառայությունների ընդհանուր արժեքը 2016թ-ին նվազել է մոտավորապես 5.9 մլրդ. դրամով կամ 7.9%-ով:

2016թ-ին համայնքների կողմից մատուցվող ծառայությունների մեջ ամենամեծ տեսակարար կշիռը շարունակում է մնալ համայնքների կողմից մատուցվող կրթական ծառայությունները, որը մեծամասամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ Երևան քաղաքում հիմնական և միջնակարգ կրթությունը հանդիսանում են պետության կողմից պատվիրակված լիազորություն համայնքի համար և հանդես է գալիս որպես կրթական ծախսեր Երևան քաղաքի բյուջեում: ՀՀ համայնքների մեծ մասը մատուցում են նախադպրոցական կրթության ծառայություն, որի ծախսերը բավական մեծ տեղ են զբաղեցնում համայնքների բյուջեներում: 2016թ-ին համայնքների կողմից մատուցվող կրթական ծախսերը կազմել են համայնքների կողմից մատուցվող համայնքային ծա-

¹²¹ «Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2015թ.), Գիրք 8, Զեկույց, ՀՖՄ ՀԿ, Երևան 2016

ռայությունների 32.8%-ը՝ նախորդ տարվա 30.3%-ի համեմատ: Համայնքի կողմից մատուցվող համայնքային ծառայությունների մեջ մեծությամբ երկրորդը բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների վրա կատարվող ծախսերն են, որոնք 2016թ-ին կազմել են 16.7 մլրդ. դրամ կամ համայնքի կողմից մատուցվող համայնքային ծառայությունների 13.5%-ը: Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների վրա կատարվող ծախսերի 71.8%-ը կամ 12 մլրդ. դրամը կատարվում է մայրաքաղաքում:

2016թ-ին համայնքային ծառայությունների բոլոր ծախսերի և ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերի հարաբերակցությունը կազմել է 4.25 (Աղյուսակ 25), իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը կազմել է 3.40:

Նույն ցուցանիշը միայն Երևան քաղաքի համար կազմում է 9.10, այսինքն՝ կարելի է փաստել, որ Երևանի բյուջեի ծախսերի մոտ 1/10-րդ մասը ծախսվում է աշխատակազմի վարչական ապարատի պահպանման համար, մինչդեռ մնացած համայնքներում՝ առանց Երևան քաղաքի, այդ ցուցանիշը կազմում է 2.52, որը նշանակում է, որ համայնքի աշխատակազմի վարչական ապարատի մեկ միավոր կատարված ծախսերի դիմաց համայնքի աշխատակազմը մատուցում է 2.52 միավոր համայնքային ծառայություն, որն արդյունավետ համարել չի կարելի: Սակայն, պետք է նաև փաստել, որ, 2015թ-ի հետ համեմատած, այս ցուցանիշը դրսևորել է աճի միտում՝ 1.47-ից հասնելով 2.52-ի, որին մեծապես նպաստել է նաև համայնքների խոշորացումը:

Աղյուսակ 25. Համայնքների բյուջեներում ՏԻՄ-երի կողմից մատուցվող համայնքային ծառայությունների և ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերի հարաբերակցությունը (2016թ.)

2016 թվական							
Հ/հ	Ծախսերը (ըստ ոլորտների)	Ընդամենը համայնքներ ¹²²		Երևան քաղաք ¹²³		Ընդամենը համայնքներ՝ առանց Երևանի	
		Գումար	%	Գումար	%	Գումար	%
1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	29,148,093.2	23.5%	7,623,841.8	11.0%	21,524,251.4	39.5%
2	Տնտեսական հարաբերություններ	13,691,866.2	11.1%	9,773,771.7	14.1%	3,918,094.5	7.2%
3	Շրջակա միջավայրի պաշտպանություն	11,468,199.6	9.3%	7,609,709.8	11.0%	3,858,489.8	7.1%
4	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	16,740,053.5	13.5%	12,096,944.0	17.4%	4,643,109.5	8.5%
5	Առողջապահություն	432,052.5	0.3%	386,880.5	0.6%	45,172.0	0.1%
6	Հանգիստ, մշակույթ և կրոն	7,860,291.5	6.3%	2,857,125.3	4.1%	5,003,166.2	9.2%
7	Կրթություն	40,651,871.6	32.8%	27,307,781.1	39.3%	13,344,090.5	24.5%
8	Սոցիալական պաշտպանություն	3,899,812.6	3.1%	1,789,622.1	2.6%	2,110,190.5	3.9%
	ԸՆԴԱՄԵՆԸ	123,892,240.8	100.0%	69,445,676.3	100.0%	54,446,564.5	100.0%
	Համայնքային ծառայությունների ծախսերի և ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերի հարաբերակցությունը	4.25		9.10		2.52	

¹²² <http://minfin.am/minfin.am/index.php?cat=78&lang=1>

¹²³ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=112368>, 17 մարտ 2017թ., Երևան քաղաքի ավագանու որոշում N 680-Ն, «Երևան քաղաքի 2016 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին»

8. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌՎԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԻՆԴԵՔՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (2015թ. և 2016թ.)

ՏԻ համակարգի մոնիթորինգը և գնահատումը կարևոր նշանակություն ունեն նրա զարգացման համար: Համաձայն «Տեղական ինքնակառավարումը Հայաստանում» տարեկան զեկույցների պատրաստման մեթոդաբանության, ՏԻ 2016թ. բարեփոխումների մոնիթորինգի և գնահատման համար, նախորդ տարիների նման, հիմք են ընդունվել ՏԻ բնագավառի ՀՀ օրենսդրությունը, ՀՀ կառավարության ծրագրերը, ՏԻՄ-երի գործունեության արդյունքները, միջազգային կազմակերպություններում Հայաստանի ստանձնած պարտավորությունները և այլն: Դրա հետ մեկտեղ, միջազգային պրակտիկայում լայնորեն տարածված է նաև ՏԻ մոնիթորինգի և գնահատման իրականացումը ինդեքսավորման (համաթվի հաշվարկման) մեթոդով՝ ինչպես առանձին համայնքի կամ որոշակի թվով համայնքների խմբի ընդգրկմամբ, այնպես էլ ՏԻ-անը համակարգային կամ ինստիտուցիոնալ մոտեցմամբ: Վերջինիս դեպքում, յուրաքանչյուր տարի հավաքագրվում և ընդհանրացվում է տվյալ երկրի բոլոր համայնքների կամ ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ քանակական ու որակական անհրաժեշտ տեղեկատվությունը և, որոշակի մեթոդաբանության կիրառման միջոցով, հաշվարկվում է այդ երկրում ՏԻ տարեկան ինդեքսը (համաթիվը):

Սույն զեկույցը պատրաստելիս Հայաստանում առաջին անգամ փորձ է արվել ՏԻ բարեփոխումներին տարեկան կտրվածքով տալ նաև թվային գնահատական՝ հաշվարկելով Հայաստանի ՏԻ տարեկան ինդեքս (ՏԻՏԻ) և դրանով հնարավորություն ստեղծելով հետազոտելու ՀՀ ՏԻ բարեփոխումների դինամիկան տարիների ընթացքում և համեմատություններ կատարելու ՏԻ առանձին տարիների բարեփոխումների ընթացքի ու տրված գնահատականների միջև:

Այդ նպատակով, ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ 6 կազմակերպություններից բաղկացած համընկերության (կոնսորցիումի) կողմից իրականացվող «ՀամաՏեղ» ծրագրի շրջանակներում, որպես ՏԻ բարեփոխումների վերաբերյալ տարեկան զեկույցների մշակման մեթոդաբանությանը լրացնող փաստաթուղթ, ՀՖՄ-ի և ՀՌԿԿ-Հայաստանի հիմնադրամի կողմից 2017թ-ին մշակվեց և փորձագիտական քննարկման դրվեց «Հայաստանի ՏԻ բարեփոխումների տարեկան գնահատման և ինդեքսի հաշվարկման մեթոդաբանությունը»¹²⁴՝ հիմնվելով այդ բնագավառում միջազգային որոշակի փորձի վրա և այն հնարավորինս տեղայնացնելով ՀՀ ՏԻ համակարգում:

Համաձայն մշակված մեթոդաբանության՝ ՏԻՏԻ գնահատումը պարունակում է ինչպես քանակական, այնպես էլ որակական մեթոդներով գնահատումներ, որոնք կատարվում են ինչպես տեղեկատվական տարբեր աղբյուրներից ստացված օբյեկտիվ տվյալների հիման վրա, այնպես էլ սուբյեկտիվ կարծիքների ու տեսակետների հիման վրա: Օբյեկտիվ տվյալների աղբյուրներ են հանդիսանում ՀՀ ՏԻ բնագավառի օրենսդրությունը, ՀՀ պաշտոնական վիճակագրությունը, բյուջետային տեղեկատվությունը,

¹²⁴ «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ համացանցային կայք՝ www.cfoa.am

հաշվետվությունները, պաշտոնական համացանցային կայքերը, միջազգային և տեղական կազմակերպությունների համացանցային կայքերը, տվյալների շտեմարանները, հրապարակային զեկույցները և այլն: Օբյեկտիվ տվյալներն իրենց ողջ ծավալով հիմնականում արտացոլված են ՀՖՄ-ի կողմից յուրաքանչյուր տարի պատրաստվող և հրապարակվող ՀՀ ՏԻ համակարգի մոնիթորինգի տարեկան զեկույցներում: Սուբյեկտիվ տվյալները ստացվում են հասարակական ու փորձագիտական հետազոտությունների, վերլուծությունների, հարցումների, մասնագիտական կարծիքների և գնահատումների հիման վրա: ՏԻ համակարգի մոնիթորինգի տարեկան զեկույցների 7 բաժին-հոդվածները պատրաստող ՀՖՄ փորձագիտական խումբը (բաղկացած 7 փորձագետներից), օգտագործելով հավաքագրված տեղեկատվությունը և հիմնվելով գնահատման մշակված մեթոդաբանության վրա, իրականացնում են ՀՀ ՏԻ տարեկան թվային գնահատումը՝ ՏԻՏԻ հաշվարկման միջոցով:

ՏԻՏԻ-ի հաշվարկումը կատարվում է ՏԻ ընդհանրացված 5 բնագավառներում (ուղղություններում)¹²⁵ ըստ 20 գործառույթների և 52 ցուցիչների, որոնց ցանկերը ներկայացված են Հավելված 7-ում: Ցուցիչների թիվը տատանվում է ՏԻ տարբեր գործառույթների համար: Յուրաքանչյուր գործառույթի համար սահմանվում է առնվազն մեկ ցուցիչ: Այդ առումով 2015 և 2016 թվականների ՏԻՏԻ հաշվարկման ժամանակ բացառություն են կազմել սահմանված 3 գործառույթներ («Համայնքի զարգացման ծրագրեր և բյուջե (այլանավորում և բյուջետավարում)», «Միջազգային աջակցություն» և «Համայնքային այլ ծառայություններ»), որոնց համար գնահատման ենթակա ցուցիչներ առայժմ չեն սահմանվել՝ պայմանավորված դրանց գծով տեղեկատվության բացակայության և հավաքագրման դժվարությունների հետ, և, հետևաբար, այդ գործառույթների գնահատում առայժմ չի իրականացվել: Սակայն, դրանք ներառվել են գործառույթների ցանկում՝ հետագա տարիներին համապատասխան ցուցիչներ սահմանելու և ՏԻՏԻ հաշվարկման մեջ դրանց գնահատականները ներառելու միտումով:

Համաձայն մշակված մեթոդաբանության՝ ՏԻՏԻ-ի հաշվարկումն իրենից ներկայացնում է որպես ՀՖՄ փորձագիտական խմբի կողմից հետևյալ հաջորդական քայլերի իրականացման արդյունք՝

- ՏԻ բնագավառների, գործառույթների և ցուցիչների սահմանում,
- ցուցիչների համապատասխանեցում ընտրված սկզբունքներին (որպես այդպիսի սկզբունքներ, մեթոդաբանությունում ընտրվել են «Տեղական մակարդակում նորարարության և պատշաճ ժողովրդավարական կառավարման 12 սկզբունքները¹²⁵⁾,
- ցուցիչների գնահատման չափանիշների սահմանում և հիմնավորում (յուրաքանչյուր ցուցիչի համար սահմանվել և կիրառվել են այդ ցուցիչին բնորոշ գնահատման չափանիշներ, ինչպես նաև տրվել են համապատասխան հիմնավորումներ և մեկնաբանություններ),
- ցուցիչների գնահատում (բոլոր ցուցիչները գնահատվել է 0-10 բալանոց գնահատման սանդղակով՝ կիրառելով ցուցիչների գնահատման չափանիշները),

¹²⁵ CoE, Committee of Ministers (2008), The Strategy for Innovation and Good Governance at local Level.

- գնահատված ցուցիչների արժեքների միջինացում՝ ըստ ՏԻ գործառույթների և բնագավառների:

ՏԻՏԻ գնահատման մանրամասն արդյունքները 2015 և 2016 թվականների համար ներկայացված են Հավելված 7-ում: Իսկ ավելի ընդհանրացված, ըստ բնագավառների՝ ՏԻՏԻ գնահատման արդյունքները բերված են Աղյուսակ 26-ում:

Աղյուսակ 26. ՏԻՏԻ գնահատման արդյունքները՝ ըստ ՏԻ բնագավառների (2015թ. և 2016թ.)

Հհ	ՏԻ բնագավառը	Ցուցիչների քանակը	2015թ. միջին գնահատականը (0-10 բալ)	2016թ. միջին գնահատականը (0-10 բալ)
1	ՏԻ բարեփոխումներ	10	4.7	4.9
2	Համայնքի սեփականություն, զարգացման ծրագրեր և ֆինանսներ	18	4.1	3.8
3	Տեղական ժողովրդավարություն	8	3.9	4.0
4	Համայնքի կառավարում	4	5.8	4.8
5	Համայնքային (հանրային բնույթի) ծառայությունների մատուցում	12	3.5	3.7
	ՏԻ բնագավառների գնահատականների միջինը (ՏԻՏԻ)	52	4.40	4.24

Վերլուծելով Հավելված 7-ում բերված և Աղյուսակ 26-ում ամփոփված տեղեկատվությունը՝ ստորև ներկայացվում են ՏԻ առանձին բնագավառների (ուղղությունների) գնահատման արդյունքները 2015 և 2016 թվականների համար:

«ՏԻ բարեփոխումներ» բնագավառում սահմանվել են 4 գործառույթներ և 10 ցուցիչներ, որոնց գնահատման արդյունքում 2015թ. միջին գնահատականը կազմել է 4.7 բալ, իսկ 2016թ. միջին գնահատականը՝ 4.9 բալ: 2016թ-ին բնագավառի միջին գնահատականի 0.2 բալ չափով աճը պայմանավորված է ՏԻ եվրոպական խարտիային ՏԻ բնագավառի ՀՀ օրենսդրության համապատասխանության, ՏԻ բնագավառում ՀՀ կառավարության հեռանկարային և միջնաժամկետ ծրագրերով նախատեսված պարտավորությունների իրականացման և եվրոպայի խորհրդի, ԵԽ Տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի առջև Հայաստանի ստանձնած պարտավորությունների իրականացման մակարդակների որոշ չափով բարձրացմամբ, իսկ 2016թ-ին իրականացված վարչատարածքային բարեփոխումները նկատելի ազդեցություն չեն ունեցել բնագավառի միջին գնահատականի վրա:

«Համայնքի սեփականություն, զարգացման ծրագրեր և ֆինանսներ» բնագավառում սահմանվել են 5 գործառույթներ և 18 ցուցիչներ, որոնց գնահատման արդյունքում 2015թ. միջին գնահատականը կազմել է 4.1 բալ, իսկ 2016թ. միջին գնահատականը՝ 3.8 բալ: 2016թ-ին բնագավառի միջին գնահատականի 0.3 բալ չափով նվազումը պայմանավորված է հիմնականում երկու հանգամանքներով՝ 1) նվազել են ՀՀ

համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների ինչպես եկամուտների, այնպես էլ ծախսերի հանրագումարների փաստացի կատարման տոկոսները հաստատված պլանների նկատմամբ, և 2) կտրուկ նվազել են ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների ոչ ֆինանսական ակտիվների գծով եկամուտների և ծախսերի տեսակարար կշիռները համապատասխանաբար ընդհանուր եկամուտներում և ծախսերում: Այս բնագավառում մնացած ցուցանիշների գնահատման արդյունքները 2015 և 2016 թվականների համար մոտավորապես նույնն են:

«Տեղական ժողովրդավարություն» բնագավառում սահմանվել են 3 գործառույթներ և 8 ցուցիչներ, որոնց գնահատման արդյունքում 2015թ. միջին գնահատականը կազմել է 3.9 բալ, իսկ 2016թ. միջին գնահատականը՝ 4.0 բալ: 2016թ-ին բնագավառի միջին գնահատականի 0.1 բալ չափով աճը պայմանավորված է ՀՀ բնակչության ընդհանուր թվում այն համայնքների բնակիչների ընդհանուր թվի տեսակարար կշռի մեծացմամբ, որտեղ համայնքի ավագանու ընտրություններն անց են կացվում համամասնական ընտրակարգով (2016թ-ին այս ուղղությամբ Երևանին ավելացել են Գյումրի և Վանաձոր համայնքները): Այս բնագավառում մնացած ցուցանիշների գնահատման արդյունքները 2015 և 2016 թվականների համար նկատելիորեն չեն տարբերվում:

«Համայնքի կառավարում» բնագավառում սահմանվել են 3 գործառույթներ և 4 ցուցիչներ, որոնց գնահատման արդյունքում 2015թ. միջին գնահատականը կազմել է 5.8 բալ, իսկ 2016թ. միջին գնահատականը՝ 4.8 բալ: 2016թ-ին բնագավառի միջին գնահատականի 1.0 բալ չափով զգալի նվազումը պայմանավորված է հիմնականում երկու հանգամանքներով՝ 1) նվազել է համայնքների (առանց Երևանի) աշխատակազմերում համայնքային ծառայության հաստատված պաշտոնների թվի տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվի մեջ, և, հատկապես, 2) մոտ կրկնակի անգամ նվազել է տվյալ տարվա ընթացքում վերապատրաստված համայնքային ծառայողների (ներառյալ Երևանի) տեսակարար կշիռը նրանց ընդհանուր թվի մեջ (2015թ.՝ 1268 համայնքային ծառայող կամ 20.9%, 2016թ.՝ 693 համայնքային ծառայող կամ 10.7%): Այս բնագավառում մնացած ցուցիչների գնահատման արդյունքները 2015 և 2016 թվականների համար մոտավորապես նույնն են:

«Համայնքային (հանրային բնույթի) ծառայությունների մատուցում» բնագավառում սահմանվել են 4 գործառույթներ և 12 ցուցիչներ, որոնց գնահատման արդյունքում 2015թ. միջին գնահատականը կազմել է 3.5 բալ, իսկ 2016թ. միջին գնահատականը՝ 3.7 բալ: 2016թ-ին բնագավառի միջին գնահատականի 0.2 բալ չափով աճը պայմանավորված է հիմնականում երկու հանգամանքներով՝ 1) աճել է համայնքի գլխավոր հատակագիծ ունեցող համայնքների տեսակարար կշիռը համայնքների ընդհանուր թվի մեջ (2015թ.՝ 87 համայնք կամ 9.5%, 2016թ.՝ 96 համայնք կամ 10.7%), և 2) աճել է ներհամայնքային փողոցային լուսավորության ծառայություն մատուցող համայնքների տեսակարար կշիռը համայնքների ընդհանուր թվի մեջ (2015թ.՝ 608 համայնք կամ 66.4%, 2016թ.՝ 632 համայնք կամ 70.5%): Այս բնագավառում մնացած ցուցանիշների գնահատման արդյունքները 2015 և 2016 թվականների համար նկատելիորեն չեն տարբերվում:

Ամփոփելով, ՏԻ բոլոր 5 բնագավառներում միասին վերցրած՝ ընդհանուր առմամբ, սահմանվել են 20 գործառույթներ և 52 ցուցիչներ, որոնց գնահատման արդյունքում 2015թ. ՏԻՏԻ-ն կազմել է 4.40 բալ, իսկ 2016թ. ՏԻՏԻ-ն՝ 4.24 բալ: 2016թ-ին ՏԻՏԻ-ի 0.16 բալ չափով նվազումը պայմանավորված է հիմնականում 2 բնագավառներում ցուցիչների 2016թ. միջին գնահատականների որոշակի չափով նվազմամբ՝ 2015թ-ի համեմատ: Այդ բնագավառներն են՝ «Համայնքի սեփականություն, զարգացման ծրագրեր և ֆինանսներ» և «Համայնքի կառավարում» (տե՛ս Հավելված 7 և Աղյուսակ 26): Մնացյալ 3 բնագավառներում ցուցիչների 2016թ. գնահատականների միջինները՝ 2015թ-ի համեմատ, ընդհակառակը, աննշան չափով աճել են:

ԵՃՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եզրակացություններ

2016թ. Հայաստանի ՏԻ համակարգում գրանցված առաջընթացը հիմնականում վերաբերում է խորը և համապարփակ օրենսդրական նախաձեռնություններին և բարեփոխումներին, ինչպես նաև համայնքների խոշորացման գործընթացի շարունակականությանը: 2015թ. սահմանադրական փոփոխություններով նախատեսված օրենսդրական խոշորածավալ փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՏԻ ոլորտը կարգավորող հիմնական իրավական ակտերում: Տարվա ընթացքում ընդունվեցին «Ֆինանսական համահարթեցման մասին», «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքները:

Առկա պետական ծրագրային փաստաթղթերի շարքը համալրվեց ՀՀ կառավարության 2016թ. ծրագրով, որով մի քանի հիմնական կետերով նախատեսվեցին ՏԻ համակարգում գործողությունների իրականացման ժամանակացույցեր և ծրագրեր: Չնայած այս հանգամանքին՝ այդ կետերով սահմանված գործողությունները 2016թ. ընթացքում կամ չեն իրականացվել, կամ էլ իրականացվել են մասնակիորեն:

Չնայած ՏԻ եվրոպական խարտիայի 9.3-րդ հոդվածի պահանջներին՝ 2016թ-ին պահպանվել է ՀՀ օրենսդրությունում առկա հակասությունը, այն է՝ տեղական հարկեր համարվող գույքահարկի և հողի հարկի դրույքաչափերը շարունակել են սահմանված մնալ օրենքով, մինչդեռ դրանց սահմանման իրավունքը օրենքով նախատեսված շրջանակներում պետք է վերապահվեր ՏԻՄ-երին: Այնուամենայնիվ, 2016թ-ին ընդունված ՀՀ նոր հարկային օրենսգիրքը ՏԻՄ-երին հնարավորություն է տալիս 10%-ով բարձրացնելու անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների հարկի հաշվարկման՝ օրենսգրքով սահմանված դրույքաչափերը: ՀՀ հարկային օրենսգիրքն ամբողջությամբ ուժի մեջ կմտնի 2018թ. հունվարի 1-ից:

2016թ-ին Հայաստանի վարչատարածքային բաժանման մեջ կատարվել են խոշորածավալ փոփոխություններ, մասնավորապես՝ ՀՀ թվով 7 մարզերում ընդգրկված շուրջ 118 համայնքներ միավորվեցին թվով 15 նոր բազմաբնակավայր համայնքներում:

Միջհամայնքային համագործակցության զարգացման առումով փոփոխություններ չեն գրանցվել: Ինչպես և նախորդ տարիներին, այնպես էլ 2016թ-ին միջհամայնքային միավորումներ չեն ստեղծվել:

2016թ. փոփոխություն կատարվեց ՏԻՄ-երի ընտրությունների ժամկետի մասով. ՀՀ Սահմանադրությանը համահունչ՝ ՀՀ ընտրական օրենսգիրքը սահմանեց, որ ՏԻՄ-երը ընտրվում են հինգ տարի ժամկետով:

ՀՀ-ում բնակչության թվաքանակը շարունակում է նվազել: 2017թ-ի հունվարի մեկի դրությամբ, բնակչության թիվը նվազել է 12.5 հազար մարդով՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ:

2016թ-ին ՀՀ-ում շարունակվել են իրականացվել ՏԻ և վարչատարածքային բարեփոխումները (համայնքերի խոշորացումը), որոնց մեկնարկը տրվել էր 2015թ-ին: Պետական քաղաքականության արդյունքում օրենքով սահմանվել են խոշորացվող համայնքների «փնջեր», որոնք միավորվեցին ընդհանուր թվով 18 բազմաբնակավայր համայնքների կազմում: Այդ փնջերը կազմելու տրամաբանությունը այդպես էլ հասանելի չդարձավ լայն հասարակությանը: Խոշորացվող փնջերի վերաբերյալ տեղեկությունները հասանելի են դարձել միայն «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխությունների և լրացումների վերաբերյալ օրենսդրական նախագիծը հրապարակելուց հետո: 2016թ-ին տեղական հանրաքվեներ չեն անցկացվել, որը ՀՀ Սահմանադրությունից համապատասխան դրույթը հանելու արդյունք է:

Օրենսդրության փոփոխությամբ վերացվեց նվազագույնը 100 բնակիչ ունեցող բնակավայրի համար վարչական ղեկավար ունենալու սահմանափակումը և ներկայումս բազմաբնակավայր համայնքի բոլոր բնակավայրերը (բացառությամբ համայնքի կենտրոն բնակավայրի) պետք է ունենան մեկական վարչական ղեկավարներ՝ անկախ դրանց բնակչության թվից:

2016թ-ին իրականացված համայնքների խոշորացման գործընթացում տեղ գտած մոտեցումները թույլ են տալիս եզրակացնել, որ խոշորացվող համայնքների փնջերի ձևավորման հարցում որոշակի բացթողումներ կան, որոնք չեն տեղավորվում ընդհանուր տրամաբանության մեջ (օրինակ, Տավուշի մարզի Կողբ համայնքը, Շիրակի մարզի համայնքների խոշորացված 4 փնջերը):

Այդուհանդերձ, իրականացված վարչատարածքային բարեփոխումներից հետո էլ ՀՀ-ն շարունակում է մնալ որպես խիստ մասնատված համայնքային բաժանմամբ երկիր: Այդ են վկայում համապատասխան վերլուծությունների ու համեմատությունների արդյունքները՝ եվրոպական երկրների նույն ցուցանիշները դիտարկելիս:

2016թ-ին միջհամայնքային համագործակցության կայացմանն ուղղված որոշակի դրական միտում է նկատվել: ՀՀ Սահմանադրության փոփոխությունների արդյունքում առանձին հոդվածով հստակորեն սահմանվեց միջհամայնքային միավորումների հասկացությունը և վերջինիս վերաբերյալ ամրագրվեցին մի շարք հիմնարար դրույթներ: Հիմք ընդունելով վերջինները՝ պատրաստվեց և շրջանառության մեջ դրվեց «Միջհամայնքային միավորումների մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը, սակայն, դեռևս վերջնական, ընդունված օրենքի տեսք չի ստացել, և այդ պատճառով 2016թ-ի ընթացքում միջհամայնքային միավորումներ չեն ստեղծվել:

Ըստ էության, մինչև այժմ ՀՀ օրենսդրությունն առանձնապես մեծ խոչընդոտներ չի ստեղծել համայնքների համար՝ սեփական նախաձեռնությամբ միավորվելու և համատեղ որևէ գործունեություն ծավալելու համար: Ինդիքը համայնքային իշխանությունների մոտ ցանկության բացակայությունն է՝ միավորվելու և համագործակցելու, ինչի համար պատճառ կարող են հանդիսանալ փոխադարձ անվստահությունը և անհրաժեշտ վերահսկողության անհնարինությունը: Նոր օրենքի նախագիծը ևս չի լուծում այս խնդիրները և իր մեջ չի պարունակում համապատասխան խթանող տարրեր, որոնք կմոտիվացնեն համայնքային իշխանություններին՝ ծավալելու միջհամայնքային փոխշահավետ համագործակցություն:

Պատկերը, սակայն, այլ կարող է լինել օրենքով ստեղծվող և պետության կողմից պատվիրակված լիազորություններ իրականացնող միջհամայնքային միավորումների դեպքում: Տարիներ շարունակ կենտրոնական իշխանությունը լիազորությունների ապակենտրոնացման (ՏԻՄ-երին նոր լիազորություններ տրամադրելու) գործընթացի դանդաղ լինելն «արդարացրել» է համայնքների ինստիտուցիոնալ թույլ կարողություններով և նոր լիազորություններ ստանձնելու նրանց անպատրաստությամբ: «Միջհամայնքային միավորումների մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ, ենթադրաբար, կստեղծվեն համապատասխան նպաստավոր պայմաններ, որպեսզի կենտրոնական իշխանությունը, իր իսկ նախաձեռնությամբ, պետական կառավարման մարմիններին վերապահված որոշ լիազորություններ արդյունավետ իրականացնելու նպատակով, համայնքների որոշակի տիրույթում օրենքով ստեղծի միջհամայնքային միավորում և այդ լիազորությունները պատվիրակի նրան՝ այդպիսով էլ ավելի մոտեցնելով հանրային որոշ ծառայությունների հասանելիությունը բնակիչներին:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ կենտրոնական իշխանությունների համար կարճես թե վերանում են այն «անհաղթահարելի խոչընդոտները», որոնք տևական ժամանակ նրանց հետ էին պահում Հայաստանում ապակենտրոնացման գործընթացը շարունակելու և դրան ավելի մեծ թափ հաղորդելու համար:

Միջհամայնքային համագործակցության ոլորտում շարունակում են գործել «համայնքների միություններ» և «միջհամայնքային միավորումներ» իրավաբանական անձանց միությունները: Սակայն, վերջիններիս գործունեությունը աստիճանաբար դադարում է՝ կապված իրականացվող վարչատարածքային բարեփոխումների հետ: Բացի այդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու արդյունքում վերացվել է կազմակերպարավական նման ձևը, հետևաբար նույն այդ միությունները պետք է վերագրանցման գործընթաց անցնեն՝ վերակազմակերպվելով կազմակերպարավական որևէ այլ ձևի:

Միջսահմանային համագործակցության և դրանցում համայնքների ընդգրկվածության մասով հատկանշական որևէ տեղաշարժ չի նկատվել, շարունակել է գործել ԵՄ Արևելյան գործընկերության տարածքային համագործակցության ծրագիրը՝ Հայաստան-Վրաստան գործառնական ծրագրի տեսքով:

2016թ-ից սկսած՝ ՀՀ 3 համայնքներում համայնքի ավագանին ընտրվում է համամասնական ընտրակարգով, իսկ համայնքի ղեկավարը՝ անուղղակի ընտրությունների միջոցով: 2016թ-ին, ինչպես և նախորդ տարիներին, ՏԻՄ-երի ընտրությունները կատարվել են բավականին թույլ մրցակցային միջավայրում, շատ դեպքերում նույնիսկ վերջինիս բացակայության պայմաններում: 2016թ-ին կայացած համայնքի ղեկավարի ուղղակի ընտրությունների արդյունքներով, դարձյալ ընտրված համայնքի ղեկավարների մեծ մասը՝ 63.8%-ը, ՀՀ 4 ներկայացուցիչներ են: Ցածր է եղել նաև 2016թ-ին կայացած ՏԻՄ-երի ընտրություններին բնակիչների մասնակցության մակարդակը: Ընտրողների գրեթե կեսը չի մասնակցել ՏԻՄ-երի ընտրություններին:

2016թ-ին զգալի փոփոխություններ են կատարվել համայնքի ղեկավարի լիազորությունների կազմում, սակայն դժվար է ասել, որ կատարվել է լիազորությունների իրական ապակենտրոնացում:

2016թ-ին ՀՀ 3 համայնքներում (Ալավերդի, Նոյեմբերյան, Սպիտակ) առաջին անգամ հանդես են բերվել համայնքի ավագանու նիստի օրակարգում բնակիչների կողմից հարց ընդգրկելու նախաձեռնություններ:

Անփոփոխ են մնացել Ֆրիդոմ Հաուսի գնահատականները Հայաստանում ժողովրդավարության առաջընթացի վերաբերյալ:

2016թ-ին, ինչպես և նախորդ տարիներին, բնակիչները շարունակել են դիմում-բողոքներ ուղղել մարդու իրավունքների պաշտպանին տարբեր հարցերով:

2016թ-ին ավելացել է համայնքի ավագանու նիստերը և համայնքային նշանակության այլ միջոցառումները առցանց հեռարձակման հնարավորությամբ ապահովված համայնքների թիվը՝ հասնելով 28-ի:

Գյումրի և Վանաձոր համայնքներում ավագանու ընտրությունները իրականացվել են համամասնական ընտրակարգով, իսկ համայնքի ղեկավարինը՝ անուղղակի ընտրություններով: Անցումը համայնքի ղեկավարի անուղղակի ընտրություններին համարում ենք հետընթաց քայլ տեղական ժողովրդավարության ամրապնդման գործում:

Համայնքների ֆինանսական անկախության մակարդակը շարունակում է մնալ ցածր, իսկ սեփականությունը՝ անբավարար և հնացած:

Ինչպես նախորդ տարիներին, 2016թ-ին ևս ՀՀ պետական բյուջեին ամրագրվող հարկատեսակներից և պարտադիր վճարներից համայնքներին մասհանումներ չեն կատարվել:

2016թ-ին համայնքներն առևտրային բանկերից վարկեր չեն ստացել և դեռևս շատ հեռու են մնում վարկային շուկա մուտք գործելու հնարավորությունից:

2016թ-ին ևս համայնքները պարտատոմսեր չեն թողարկել՝ համապատասխան օրենքի բացակայության պատճառով:

Համեմատելով ՏԻՄ-երի լիազորությունների և համայնքների ֆինանսական միջոցների համապատասխանության՝ Հայաստանի և Եվրամիության անդամ երկրների ցուցանիշները՝ տեսնում ենք, որ Հայաստանն առայժմ էականորեն զիջում է Եվրամիության անդամ երկրներին, մասնավորապես՝ երկրի հանրային ծախսերում և ՀՆԱ-ում համայնքների բյուջեների հանրագումարային ծախսերի տեսակարար կշռի, բնակչության մեկ շնչին ընկնող՝ համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի չափերով: Դա նշանակում է, որ 2016թ-ին Հայաստանում իշխանության ապակենտրոնացման աստիճանը շարունակում է մնալ ցածր:

Չնայած այն իրողությանը, որ տարեցտարի զգալիորեն աճել են ՀՀ համայնքների բյուջեների՝ ինչպես եկամտային և ծախսային բացարձակ ցուցանիշները, այնպես էլ դրանց կատարողականները՝ ՀՀ համայնքների մեծամասնությունը դեռևս չի կարողանում ամբողջական ծավալով և լիարժեքորեն իրականացնել օրենքով նրանց վերապահված բոլոր լիազորությունները, հատկապես՝ համայնքային ծառայությունների մատուցման մասով:

2016թ-ին ևս ՀՀ բոլոր համայնքների բյուջեների ընդհանուր եկամուտների/ծախսերի մեջ մոտ 60%-ը կազմում են միայն Երևանի բյուջեի ընդհանուր եկամուտները/ծախսերը: Իսկ բնակչության մեկ շնչին ընկնող՝ ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեների եկամուտները/ծախսերը մոտ 2.7 անգամ ցածր են, քան Երևանի բյուջեի նույն ցուցանիշները:

2016թ-ին ևս, ինչպես նախորդ տարիներին էր, ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեների ըստ գործառական դասակարգման ծախսերի տեսակարար կշիռներն էականորեն տարբերվում են Երևանի բյուջեի ծախսերի տեսակարար կշիռներից ընդհանուր ծախսերում: Օրինակ, ՀՀ համայնքների (առանց Երևանի) 2016թ. բյուջեներում ընդհանուր բնույթի ծառայությունների ծախսերի տեսակարար կշիռն ամենաբարձրն է և կազմում է ընդհանուր ծախսերի մոտ 41.6%-ը, ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեներում՝ 22.4%, իսկ Երևանի բյուջեում՝ ընդամենը 9.7%:

ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների ընթացիկ և կապիտալ ծախսերի հարաբերակցություններն ընդհանուր ծախսերում վերջին 5 տարիներին փոփոխվել են տարբեր համամասնություններով: Եթե 2012-2014թթ. ընթացքում կապիտալ ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում 22.3%-ից նվազել է՝ հասնելով մինչև 21.2%-ի, ապա 2015թ-ին այն կտրուկ նվազել է՝ իջնելով մինչև 12.2%-ի, իսկ 2016թ-ին այն շարունակել է նվազել՝ հասնելով մինչև 9.6%-ի:

Երևանի 2012-2014թթ. բյուջեների ընդհանուր ծախսերում կապիտալ ծախսերի տեսակարար կշիռներն ընդհանուր ծախսերում կազմել են համապատասխանաբար 24.2%, 23.4% և 24.7%, 2015-ին այն կտրուկ նվազել է՝ իջնելով մինչև 10.3%-ի, իսկ 2016-ին այն ավելի է նվազել՝ հասնելով մինչև 6.9%:

2016թ-ին ՀՀ բոլոր համայնքների (առանց Երևանի) համար հաշվարկված՝ ընդհանուր ծախսերում աշխատավարձերի և հավելավճարների տեսակարար կշիռը (34.3%) մոտ 4.6 անգամ բարձր է Երևանի համար հաշվարկված նույն ցուցանիշից (7.4%), որը պայմանավորված է երկու հանգամանքներով՝ ՀՀ համայնքների (առանց Երևանի) ու նրանց ենթակա կազմակերպությունների աշխատակազմերի ուժեղացված լինելով և բյուջետային եկամուտների ընդհանուր սղությամբ:

ՀՀ ՏԻ համակարգի վերլուծությունը ցույց է տալիս, որ համայնքների մեծ մասի մարդկային ռեսուրսների մասնագիտական կարողությունները դեռևս բավարար չեն հանրային ծառայությունները ողջ ծավալով և բավարար որակով մատուցելու համար, իսկ բյուջետային միջոցներն այնքան սուղ են, որ հիմնականում բավարարում են համայնքի աշխատակազմը պահպանելու համար, և միջոցների այսպիսի սղությունը հանգեցնում է մի շարք խորքային խնդիրների:

2016թ-ին համայնքների աշխատակազմերում կառուցվածքային փոփոխությունները հիմնականում կապված են եղել համայնքների խոշորացման և դրա արդյունքում նոր ձևավորված բազմաբնակավայր համայնքներում վարչական ղեկավարի ինստիտուտի ներդրման հետ: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքով սահմանվել է նաև, որ բոլոր բնակավայրերը՝ անկախ բնակիչների թվից, բացառությամբ համայնքի կենտրոնի, պետք է ունենան վարչական ղեկավար: Սակայն, բնականաբար, վարչական ղեկավարը ՏԻ առանձին մարմին չէ, և, հետևաբար, համայնքի ղեկավարը բնակիչների առջև պատասխանատու է բնակավայրի վարչական ղեկավարի գործունեության համար:

Էական փոփոխության չեն ենթարկվել նաև համայնքների ղեկավարների կրթության վերաբերյալ ցուցանիշները: ՏԻ համակարգի ընտրովի մարմիններում գենդերային անհամամասնության և կանանց ցածր տեսակարար կշռի միտումները շարունակվել են և պահպանվել 2016թ-ին:

2016 թվականի ընթացքում շարունակվել է ՀԿՏՀ-ի գործարկումը համայնքներում: 2016թ-ի դեկտեմբեր ամսվա դրությամբ, ՀԿՏՀ-ն շահագործվել է 559 համայնքապետարանում: Քաղաքացիների սպասարկման գրասենյակներ են բացվել 7 համայնքապետարաններում: Դրանց ընդհանուր թիվը հանրապետությունում 21-ն է դարձել, որոնցից 8-ը՝ նոր ձևավորված բազմաբնակավայր համայնքների կենտրոններում:

Խնդիրները դեռևս շատ են համայնքային ծառայության բնագավառում: Այդ խնդիրների շարքին կարելի է դասել համայնքային ծառայության արդյունավետության ցածր մակարդակը, համայնքային ծառայողների ընտրության, ատեստավորման, վերապատրաստման և մասնագիտական առաջխաղացման կառուցակարգերի անկատարությունը, խրախուսման համակարգերի անարդյունավետությունը և այլն: Առանց վերոնշյալ խնդիրների լուծման՝ անհնար կդառնա համակարգի հետագա զարգացումը և կատարելագործումը: Համայնքային ծառայության համակարգի մշտական կատարելագործման անհրաժեշտությունը պայմանավորված է ՏԻ համակարգում ընթացող բարեփոխումներով, ինչպես նաև քաղաքացիական հասարակության բաղադրիչների զարգացմամբ: Համակարգում բարձր որակավորում ունեցող կադրերի պակաս է զգացվում: Կադրերի պահուստը, որն ամենից առաջ կոչված է ժամանակավոր թափուր պաշտոնների համալրման խնդրի լուծմանը, այս համակարգում դեռևս իր գործառույթն ամբողջությամբ չի կարողանում կատարել: 2016 թվականի ընթացքում համայնքային ծառայության ոլորտում որևէ օրենսդրական փոփոխություն կամ լրացում չի կատարվել:

Համայնքային ծառայողների թվի վերաբերյալ առավել շոշափելի պատկերացում կազմելու համար դրա բացարձակ մեծությունից զատ անհրաժեշտ է պարզել նաև հարաբերական մեծությունը՝ կախված բնակչության թվաքանակից: Որոշ մարզերի համար ստացված համայնքային ծառայողների թվի հարաբերական մեծությունը գերազանցում է Երևան քաղաքի համանման ցուցանիշը շուրջ 2.5 անգամ: Այս հանգամանքը կարող է հուշել համապատասխան մարզերում համայնքապետարանների աշխատակազմերի անհարկի ուռճացման և ավելորդ հաստիքների առկայության մասին:

«Հ գործող օրենսդրության համաձայն՝ յուրաքանչյուր համայնքային ծառայող առնվազն երեք տարին մեկ ենթակա է պարտադիր վերապատրաստման: Համայնքային ծառայության համակարգում 2016թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ վերապատրաստվել է 692 համայնքային ծառայող: Վերլուծությունները ցույց են տալիս, որ համայնքային ծառայողների վերապատրաստման համակարգում բավարար ուշադրություն չի դարձվում գործնական հարցերի, տարբեր հավանական իրավիճակների հետազոտմանը և քննարկմանը: «Հ-ում հանրային ծառայողների վերապատրաստման թերություններից է դասընթացների շրջանակներում ուսումնական նյութի գլխավորապես դասախոսությունների միջոցով մատուցումը, ինչը նշանակալիորեն սահմանափակում է գործնական հմտությունների ստացման, կայուն կարողությունների ձևավորման հնարավորությունները, բացի դրանից հաշվի չեն առնվում համայնքային ծառայողների ընկալունակության առանձնահատկությունները:

Համայնքային ծառայողների վերապատրաստման՝ «Հ ներկայիս համակարգի ուսումնասիրության արդյունքում ակնհայտ են դառնում նաև հետևյալ թերությունները՝

վերապատրաստումների հատվածականությունը, համայնքային ծառայողի որակավորման բարձրացման իրական կարիքների հետ վերապատրաստման ծրագրերի թույլ կապը, վերապատրաստման գործընթացում դասավանդման արդի մեթոդների և եղանակների կիրառման պակասը և այլն: Համայնքային ծառայողների վերապատրաստման ներկայիս համակարգի բացթողումներից մեկն էլ այն է, որ ծրագրերը հիմնականում կազմվում են կրթական հաստատությունների կողմից և չեն համապատասխանում մասնակիցների նախապատվություններին ու կարիքներին: Պետական լիազոր մարմինը հաստատում է միայն կրթական ծրագրի թեման՝ առանց հստակեցնելու դրա բովանդակությունը, ինչի հետևանքով ծրագիրը լիովին չի համապատասխանում կատարելագործման պահանջներին:

2016 թվականի ընթացքում միջազգային կազմակերպությունները շարունակել են իրենց կողմից իրականացվող ծրագրերը ՀՀ ՏԻ համակարգում: ՀՀ ՏԻ համակարգի զարգացման փորձը ցույց է տալիս, որ համակարգի կատարելագործմանն ուղղված իրական գործնական քայլերի նախաձեռնող կողմը ոչ այնքան պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմիններն են, որքան միջազգային կազմակերպությունները կամ տեղական հասարակական կազմակերպությունները, որոնք ֆինանսավորվում են միջազգային աղբյուրներից: Իրենց առաքելություններն իրականացնելիս նրանք համագործակցում են ՀՀ կառավարության, ՏԻՄ-երի, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, հաճախ նաև՝ միմյանց հետ: Սակայն, միայն միջազգային կազմակերպությունների նախաձեռնության, ջանքերի և նրանց կողմից իրականացվող ծրագրերի արդյունքում ՏԻ համակարգի իրական զարգացումը գրեթե անհնար է:

Ներկայացված ծրագրերը, իրենց ամբողջ արդյունավետությամբ հանդերձ, որոշ դեպքերում կտրված են լինում համայնքների կառավարման մարմինների փաստացի գործունեությունից, և, ըստ էության, չեն ենթադրում վերջիններիս շահագրգիռ ներգրավվածությունը ՏԻ զարգացման գործում: Բացի դրանից, նմանօրինակ ծրագրերին համայնքների ղեկավարները հաճախ խիստ թերահավատորեն են մոտենում, իսկ ծրագրի ավարտից հետո պարզապես վերադառնում են իրենց բնականոն պահպանողական գործունեությանը:

2016 թվականին համայնքի կողմից հանրային ծառայությունների մատուցման ոլորտում հսկայածավալ աշխատանքներ են կատարվել մայրաքաղաքում: Հանրային բնույթի ծառայությունների մատուցման ընդհանուր ծախսերի մեջ մայրաքաղաքի տեսակարար կշիռը ավելի քան 56 տոկոս է: Մնացած համայնքներում ֆինանսական սուղ միջոցները չեն ներում, որպեսզի համայնքները օրենքով սահմանված բոլոր ծառայությունները մատուցեն:

Համայնքային ծառայությունների մատուցման բնագավառում 2016 թվականի կարևորագույն փոփոխություններից կարելի է համարել «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքը՝ նոր խմբագրությամբ շարադրելու փաստը, որը կարող է տալ հնարավորություն ինչ-որ չափով ավելացնել համայնքի ֆինանսական կարողությունները, սակայն չի կարող բավարար լինել հանրային բնույթի ծառայություններն ամբողջօսկան ծավալում մատուցման համար:

Համայնքներում բավական ցածր է հանրային բնույթի բոլոր ծառայությունների ծախսերի և ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերի հարաբերակցությունը, այսինքն մեկ միավոր վարչական ծախսերի հաշվով ավելի քիչ ծառայություն է մատուցվում բնակիչներին:

Առաջարկություններ

Անկախ 2016թ-ին ՏԻ համակարգում կատարված բարեփոխումներից, շատ ու շատ հարցեր մնում են չլուծված, որի արդյունքում համակարգի հետագա զարգացումը շատ դանդաղ է ընթանում: Մասնավորապես, **օրենսդրական մակարդակում առաջարկվում է՝**

- Օրենքով ՏԻՄ-երին վերապահված նոր լիազորություններին համապատասխան ֆինանսական նոր գործիքակազմերի և հնարավորությունների ստեղծում.
- ՏԻ զարգացման և ապակենտրոնացման ռազմավարական ծրագրի և ճանապարհային քարտեզի մշակում և ընդունում՝ հիմնված 2012թ-ին ՏԻ բնագավառում գործող հասարակական կազմակերպությունների կողմից մշակված և ՀՀ ՏԿՁՆ-ի կողմից ընդունված «ՏԻ զարգացման և ապակենտրոնացման ռազմավարության» վրա.
- Լիազորությունների ապակենտրոնացման գործընթացի ավելի արագ տեմպերով իրականացում.
- «Միջհամայնքային միավորումների մասին» ՀՀ օրենքի ընդունում և կիրարկման ապահովում.
- Տեղական հարկերի վերաբերյալ ՀՀ օրենսդրությունում առկա բացերի և հակասությունների շտկում, ինչպես նաև նոր հարկատեսակների սահմանման, հավաքագրման և տնօրինման իրավունքով ՏԻՄ-երին օժտելը.
- Համայնքների խոշորացման գործընթացներն իրականացնելիս, հանրային կարծիքը լսելու օրենսդրական մեխանիզմների ստեղծում և գործընթացի իրականացման՝ թափանցիկ գործիքակազմերով ապահովում:

Վարչատարածքային բարեփոխումների բնագավառում առաջարկվում է՝

- Անհրաժեշտ է շարունակել և ավարտին հասցնել համայնքների խոշորացման բարեփոխումները՝ խթանելով ՀՀ ՏԻ համակարգի հետագա զարգացմանը.
- Համայնքների խոշորացման նոր փնջերը նախագծելիս անհրաժեշտ ենք համարում դրանց ընտրության տրամաբանության և որոշակի տնտեսական հաշվարկի վերաբերյալ հանրությանը սպառիչ տեղեկատվության տրամադրումը և հանրային կարծիքի պարզումը.
- Անհրաժեշտ է ընդունել «Միջհամայնքային միավորումների մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ նպաստելով դրանց կազմավորմանը, լիազորությունների ապակենտրոնացմանը՝ կենտրոնական իշխանությունից դեպի ՏԻՄ-եր.
- Անհրաժեշտ է օգտագործել Հայաստանում մինչև հիմա կուտակված փորձը միջ-

համայնքային համագործակցության բնագավառում՝ տարիներ ի վեր փաստացի գործող և կայացած համագործակցությունն ուղղելով համայնքային ծառայությունների մատուցման ոլորտներ:

ՏԻՄ-երի ձևավորման, իրավասությունների և ՏԻ-անը բնակիչների մասնակցության բնագավառում առաջարկվում է՝

- Ցուցաբերել հետևողականություն՝ ՏԻ-անը բնակիչների մասնակցությունն ընդլայնելու և օրենքով նախատեսվող բոլոր հնարավորությունների և գործիքների կիրառման ուղղությամբ:
- Է՛լ ավելի մեծացնել համայնքի ավագանու նիստերը և համայնքային նշանակության այլ միջոցառումները առցանց հեռարձակման հնարավորությամբ ապահովված համայնքների թիվը:

Համայնքների ֆինանսական անկախության և ֆինանսական կառավարման արդյունավետության մակարդակները բարձրացնելու համար առաջարկվում է՝

- ՏԻՄ-երին օրենքով վերապահված լիազորություններն ամբողջական ծավալով և լիարժեքորեն իրականացնելու համար օրենքով համայնքներին ապահովել ֆինանսավորման նոր աղբյուրներով և միջոցներով:
- ՀՀ պետական բյուջե մուտքագրվող հարկերից մասհանումների չափերն օրենսդրորեն ամրագրել ոչ թե յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքով, այլ «Տեղական ինքնակառավարման մասին» կամ «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքներով:
- Համայնքներին ներգրավել փոխատվական կապիտալի շուկա՝ օրենսդրորեն կարգավորելով համայնքների կողմից առևտրային բանկերից և ֆինանսական կազմակերպություններից փոխառու միջոցներ վերցնելու, համայնքային պարտատոմսեր թողարկելու հարցերը, ինչպես նաև մշակել և կիրառության մեջ դնել համայնքների վարկունակության գնահատման համակարգեր և գործիքներ:
- Հիմնվելով ՀՀ-ում ընթացող համայնքների խոշորացման բարեփոխումների փուլային արդյունքների և միջազգային փորձի վրա՝ ՏԻՄ-երի գործունեության մի շարք բնագավառներում ծրագրել և աստիճանաբար իրականացնել պետական (այդ թվում՝ տարածքային) կառավարման մարմինների լիազորությունների ապակենտրոնացում դեպի համայնքներ՝ բարձրացնելով ՀՀ-ում իշխանության ապակենտրոնացման աստիճանը:
- Հաշվի առնելով ՏԻՄ-երի լիազորությունների և համայնքների ֆինանսական միջոցների համապատասխանության բնագավառում նախորդ և սույն զեկույցներում ֆինանսական ցուցանիշների գնահատման արդյունքները՝ ինստիտուցիոնալ հիմքերի վրա դնել համայնքի ֆինանսական ցուցանիշների սահմանման և տարեկան գնահատման գործը: Այդ նպատակով, մշակել և ներդնել համայնքի ֆինանսական ցուցանիշների սահմանման, վերլուծության և գնահատման միասնական համակարգ՝ ապահովելով պահանջվող տեղեկատվության հասանելիությունը և պարբերական (օրինակ, տարեկան) թարմացումը, ֆինանսական ցուցանիշների տարեկան կտրվածքով վերլուծումը, գնահատումը և ստացված արդյունքների հրապարակումը:

- Միջոցներ ձեռնարկել՝ օպտիմալացնելու համայնքային աշխատողների թվաքանակը և դրա հաշվին նաև բարձրացնելու նրանց աշխատավարձերի չափերը:
- Հետևողական աշխատանքներ տանել՝ բարձրացնելու համայնքների բյուջեների սեփական եկամուտների գանձման մակարդակներն ու ծախսերի կատարման արդյունավետությունը:
- Կարևորելով տնտեսության դերը համայնքների զարգացման գործում՝ ՏԻՄ-երին հատուկ ուշադրություն դարձնել փոքր և միջին բիզնեսի, գյուղատնտեսության և զբոսաշրջության ոլորտների աջակցությանը՝ ՀՀԶԾ-ում պլանավորելով և տարեկան բյուջեից միջոցներ հատկացնելով այդ նպատակի համար, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, մասնավորի հետ համատեղ ստեղծելով առևտրային ձեռնարկություններ (այդ թվում՝ ՀՀ կառավարության աջակցությամբ և (կամ) մասնակցությամբ):

Համայնքի խնդիրներին վարչական կառուցվածքների, մարդկային և տեղեկատվական ռեսուրսների համապատասխանության և համայնքներին միջազգային աջակցության բնագավառում առաջարկվում է՝

- Հարկավոր է համայնքների աշխատակազմերի կառուցվածքները ավելի ճկուն դարձնել, որոնք առավել մեծ հաջողությամբ կարող են արձագանքել արտաքին միջավայրի փոփոխություններին և կբարձրացնեն կառավարման արդյունավետությունը:
- Անհրաժեշտ է բարեփոխել ժամանակավոր թափուր պաշտոնների համալրման համակարգը: Կադրերի պահուստը խնդիրը չի լուծում, որովհետև հաստիքների կրճատման հիմքով ազատված համայնքային ծառայողները հիմնականում արտամրցությային կարգով զբաղեցնում են այլ պաշտոններ, իսկ մրցույթներում հաղթող ճանաչված, սակայն պաշտոնի չնշանակված անձանցից քչերն են ցանկանում գրանցվել կադրերի պահուստում:
- ՀՀ համայնքները միմյանցից տարբերվում են բնակչության թվի, կենսամակարդակի, սահմանամերձ կամ հեռավոր, բարձր լեռնային գոտում գտնվելու առումներով: Այս և այլ տարաբնույթ առանձնահատկությունների պատճառով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթների լիարժեք և ամբողջական իրականացումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է մշակել և ներդնել տարբերակված մոտեցումներ՝ իրարից էականորեն տարբերվող համայնքներում համայնքային ծառայության համակարգը կայացնելու համար:
- Համայնքային ծառայության համակարգի կատարելագործման խնդիրներից մեկը պետք է լինի համայնքային ծառայողների վերապատրաստման գործընթացի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների մշակումը և դրանց հետևողական իրագործումը: Մասնավորապես, պետք է հստակորեն սահմանվեն վերապատրաստման վերջնարդյունքները՝ գիտելիքը, հմտությունները և կարողությունները, որոնք ծրագրի ավարտին ձեռք են բերվելու վերապատրաստվողների կողմից:
- Համայնքային ծառայողների վերապատրաստման համակարգում անհրաժեշտ է մշակել և ներդնել կառուցակարգեր, որոնց գործարկմամբ հնարավոր կլինի

կրթական ծրագրերի կազմման մեկնարկային փուլում պատշաճ տեղեկատվություն ստանալ հստակ պահանջների և կարիքների մասին: Սակայն, ծրագրերի մշակումից բացի, համայնքային ծառայողների վերապատրաստման գործընթացի որակի բարձրացումն էականորեն կախված է նաև արդեն իսկ մշակված ծրագրերի մատուցման արդյունավետ եղանակների ընտրությունից և կիրառումից, ինչը ևս անհրաժեշտ է կատարելագործել:

Համայնքային ծառայությունների մատուցման բնագավառում առաջարկվում է՝

- Բարելավել համայնքների ենթակառուցվածքները և ավելի շատ միջոցներ հատկացնել համայնքային ծառայությունների մատուցմանը:
- Համայնքի բյուջեի եկամուտների աղբյուրների ընդլայնումը հնարավորություն կտա լուծելու համայնքների կողմից ծառայությունների՝ ամբողջական ծավալով մատուցման խնդիրը:
- Համայնքային ծառայությունների բարելավմանը կարող է նպաստել նաև համայնքների խոշորացման գործընթացը, որի արդյունքում տնտեսված միջոցները հիմնականում կուղղվեն համայնքների կողմից ծառայությունների մատուցմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. ՀՀ Սահմանադրություն (2015թ. փոփոխություններով)
2. Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիա
3. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, ընդունված 2016թ. դեկտեմբերի 16-ին նոր խմբագրությամբ
4. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը
5. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը
6. «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենք, 2016թ. դեկտեմբերի 16-ի փոփոխություններով
7. «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, ընդունված 2016թ. հունիսի 17-ին
8. «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենք, ընդունված 2016թ. հոկտեմբերի 20-ին
9. ՀՀ հարկային օրենսգիրք, ընդունված 2016թ. հոկտեմբերի 14-ին
10. ՀՀ ընտրական օրենսգիրք, 2016թ. մայիսի 25-ի փոփոխություններով
11. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 37 (840), Երևան, 2011
12. «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք, ընդունված 2016թ. դեկտեմբերի 16-ին
13. «Աշխատանքի պետական տեսչության մասին» ՀՀ օրենքը
14. ՀՀ կառավարության ծրագիր, 2016թ.
15. ՀՀ կառավարության 2016թ. գործունեության միջոցառումների ծրագիր և գերակա խնդիրներ
16. ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր
17. ՀՀ կառավարության 17 մարտի 2016 թվականի N 321-Ն որոշում, «Մասնավոր գերեզմանատների շահագործման գործունեության իրականացման թույլտվություն ստանալու կարգը սահմանելու մասին», <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=104615>
18. ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի հրաման N11, 17 օգոստոսի 2016 թվական, «Գերեզմանների հաշվառման և հուղարկավորությունների գրանցման մատյանի տիպային ձևը հաստատելու մասին», <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=108134>
19. ՀՀ Տարածքային կառավարման նախարարի N 169-Ա հրամանը «Համայնքային գնումների կազմակերպման և իրականացման բնագավառում համայնքային ծառայողների վերապատրաստման ծրագիրը հաստատելու մասին», 2013թ.
20. ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից 2016թ. կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն
21. ՀՀ ՏԿՁՆ Վարչական վերահսկողության և համայնքային ծառայության հարցերի վարչության 2016թ-ի հաշվետվություն
22. ՀՀ ՏԿՁՆ ամփոփ տեղեկանք՝ համայնքների ղեկավարների կրթության վերաբերյալ՝ 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
23. ՀՀ ՏԿՁՆ ամփոփ տեղեկանք՝ համայնքների աշխատակազմերի գեներային բաշխվածության վերաբերյալ՝ 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
24. Երևան քաղաքի ավագանու որոշում N 680-Ն, «Երևան քաղաքի 2016 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին», 17 մարտ 2017 թվական, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=112368>
25. Արարատի մարզի 2016 թվականի սոցիալ-տնտեսական վիճակի մասին հաշվետվություն, <http://ararat.mtad.am>,
26. ՀՀ Արմավիրի մարզպետի 2016 թվականի գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին, <http://armavir.mtad.am>
27. ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2016 թվականի տարեկան աշխատանքային հաշվետվություն, <http://geggharkunik.mtad.am>
28. ՀՀ Լոռու մարզպետի 2016 թվականի աշխատանքային գործունեության հաշվետվություն, <http://lori.mtad.am>
29. ՀՀ Կոտայքի մարզպետի հաշվետվությունը 2016 թվականի գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին, <http://kotayk.mtad.am>
30. ՀՀ Շիրակի մարզպետի կողմից 2016 թվականին կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն <http://shirak.mtad.am>

31. ՀՀ Սյունիքի մարզպետի 2016 թվականի գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին հաշվետվություն, <http://syunik.mtad.am>
32. ՀՀ Տավուշի մագուլ 2016թ. կատարած արդյունքների և սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին հաշվետվություն, <http://tavush.mtad.am>
33. Երևանի քաղաքապետարանի 2016թ. տարեկան հաշվետվություն, «Մենք հաշվետու ենք մեր համաքաղաքացիներին», Երևան 2016
34. Եվրոպայի խորհրդի՝ Հայաստանի համար իրականացվող 2015-2018թթ. գործողությունների ծրագիր
35. «Հետմոնիթորինգային Հայաստանի ճանապարհային քարտեզ» գործողությունների ծրագիր, ընդունված է ԵՄ Տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի կողմից 2015թ. դեկտեմբերի 11-ին
36. Տարեկան հաղորդում 2016թ. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին, Երևան, 2017
37. Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում (2004-2006թթ.), գիրք 2, Դ. Թումանյանի խմբագրությամբ, Երևան, Նոյյան տապան, 2008
38. Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում (2007 և 2008թթ.), գիրք 3, Դ. Թումանյանի խմբագրությամբ, Երևան, Նոյյան տապան, 2009
39. Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում (2009 և 2010թթ.), գիրք 4, Դ. Թումանյանի խմբագրությամբ, Երևան, Նոյյան տապան, 2011
40. Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2011թ.), գիրք 5, Դ. Թումանյանի խմբագրությամբ, Երևան, Նոյյան տապան, 2012
41. Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2012թ. և 2013թ.), գիրք 6, Դ. Թումանյանի խմբագրությամբ, Երևան, Վան Արյան, 2015
42. Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2014թ.), գիրք 7, Դ. Թումանյանի խմբագրությամբ, Երևան, Վան Արյան, 2015
43. Տեղական ինքնակառավարումը Հայաստանում (2015թ.), գիրք 8, Դ. Թումանյանի խմբագրությամբ, Երևան, Վան Արյան, 2016
44. Subnational public finance in the European Union, Dexia, January, 2013
45. Nations in Transit 2016
46. Եվրամիության հանձնաժողովի վիճակագրական տվյալներ, www.appsso.eurostat.ec.europa.eu
47. Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, www.arlis.am
48. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, www.armstat.am
49. ՀՀ էլեկտրոնային կառավարում, www.e-gov.am
50. ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, www.mtad.am
51. ՀՀ ֆինանսների նախարարություն, www.minfin.am
52. Երևանի քաղաքապետարան, www.yerevan.am
53. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով, www.elections.am
54. ՀՀ վարչատարածքային բաժանման տեղեկատու, Երևան 2012, «Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ
55. Google Maps, www.google.com/maps
56. The Council of European Municipalities and Regions (CEMR), www.ccre.org
57. www.bbva-research.com
58. eaptc.eu/en/program/view-armenia-georgia.html
59. www.ombuds.am
60. www.freedomhouse.org
61. www.foi.am
62. www.cfoa.am
63. <http://www.aravot.am>
64. <http://newsarmenia.am>
65. <http://orer.eu/hy/>
66. <http://syunikonline.am>
67. www.atdf.am

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1

ՀՀ բնակչությունը 2000-2017թթ. (ըստ քաղաքային և գյուղական բնակչության) (հազ. մարդ)**



¹ Ըստ մարդահամարի

* Ցուցանիշները վերահաշվարկված են ՀՀ մարդահամարի արդյունքների հիման վրա

** Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների

Հավելված 2

2016 թվականի ընթացքում խոշորացված համայնքներ (17.06.2016)*

№	Մարզ	Համայնքը, /կենտրոնը/ և (ՏԻՄ-երի ընտրության օրը)	Ընդհանուր վարչական տարածքը (կմ ²)	Բնակավայրերը	Նախկին համայնքները	Վարչական տարածքը (կմ ²)*	Մշտական բնակչությունը առ 01.01.2016 (մարդ)*
1	Արարատ	Ուրցածոր, /Ուրցածոր/, (18.09.2016)	450.19	1 Ուրցածոր	1 Ուրցածոր	289.85	3287
				2 Լանջանիստ	2 Լանջանիստ	55.00	220
				3 Շաղափ	3 Շաղափ	105.34	1025
Ընդամենը				3	3	450.19	4,532
2	Շիրակ	Ամասիա, /Ամասիա/, (02.10.2016)	204.68	1 Ամասիա	1 Ամասիա	49.66	2157
				2 Արեգևադեմ	2 Արեգևադեմ	31.43	567
				3 Բանդիվան	3 Բանդիվան	10.77	286
				4 Բյուրակն	4 Բյուրակն	24.03	624
				5 Գտաշեն	5 Գտաշեն	36.41	485
				6 Կամիտուտ			
				7 Դովտուն	6 Դովտուն	12.39	191
				8 Մեղրաշատ	7 Մեղրաշատ	11.48	532
				9 Ողջի	8 Ողջի	16.99	551
				10 Ջրածոր	9 Ջրածոր	11.52	322
Ընդամենը				10	9	204.68	5,715
3	Շիրակ	Աշոցք, /Աշոցք/, (02.10.2016)	283.98	1 Աշոցք	1 Աշոցք	32.99	2827
				2 Բավրա	2 Բավրա	21.06	653
				3 Չուպգաղբյուր	3 Չուպգաղբյուր	33.96	565
				4 Թավշուտ	4 Թավշուտ	12.37	389
				5 Կարմրավան	5 Կարմրավան	11.30	255
				6 Կրասար	6 Կրասար	20.27	551
				7 Ղազանչի	7 Ղազանչի	32.11	637
				8 Մեծ Սեպասար	8 Մեծ Սեպասար	27.07	945
				9 Սարազյուղ	9 Սարազյուղ	34.99	215
				10 Սիզավետ	10 Սիզավետ	48.84	392
				11 Փոքր Սեպասար	11 Փոքր Սեպասար	9.02	238
Ընդամենը				11	11	283.98	7,667
4	Շիրակ	Արփի, /Բերդաշեն/, (02.10.2016)		1 Բերդաշեն	1 Բերդաշեն	34.99	299
				2 Պաղակն			
				3 Ավկար	2 Ավկար	33.48	243
				4 Արավետ			
				5 Աղվորիկ	3 Աղվորիկ	19.97	134
				6 Արդենիս	4 Արդենիս	17.37	213
				7 Գառնառիճ	5 Գառնառիճ	75.00	235
				8 Եղևաջուղ			
				9 Չարիշատ	6 Չարիշատ	61.24	94
				10 Երիզակ			
				11 Չորակերտ	7 Չորակերտ	31.74	176
				12 Դարիկ			
				13 Ծաղկուտ	8 Ծաղկուտ	55.31	213
				14 Լորասար			
				15 Շաղիկ	9 Շաղիկ	54.61	145
Ընդամենը				15	9	383.71	1,752

5	Շիրակ	Սարապատ, /Թորոսգյուղ/, (02.10.2016)		1	Թորոսգյուղ	1	Թորոսգյուղ	12.26	303
				2	Արփենի	2	Արփենի	19.80	402
				3	Բաշցյուղ	3	Բաշցյուղ	15.77	63
				4	Գոգհովիտ	4	Գոգհովիտ	10.72	402
				5	Լեռնագյուղ	5	Լեռնագյուղ	22.36	34
				6	Կաքավասար	6	Կաքավասար	14.64	120
				7	Հարթաշեն	7	Հարթաշեն	29.50	139
				8	Հողիկ	8	Հողիկ	13.96	509
				9	Զորաշեն	9	Զորաշեն	31.87	152
				10	Մուսայեյան	10	Մուսայեյան	37.48	384
				11	Սալուտ	11	Սալուտ	5.45	118
				12	Սարապատ	12	Սարապատ	20.04	114
				13	Վարդաղբյուր	13	Վարդաղբյուր	8.76	120
				14	Ցողամարզ	14	Ցողամարզ	18.23	585
				15	Փոքր Սարիար	15	Փոքր Սարիար	13.76	266
Ընդամենը				15		15	274.60	3,711	
6	Սյունիք	Գորիս, /Գորիս/, (18.09.2016)	319.69	1	Գորիս	1	Գորիս	50.39	20342
				2	Ալկներ	2	Ալկներ	39.52	1247
				3	Բարձրավան	3	Բարձրավան	27.95	134
				4	Խնձորեսկ	4	Խնձորեսկ	69.91	2026
				5	Հարթաշեն	5	Հարթաշեն	31.67	676
				6	Ներքին Խնձորեսկ	6	Ներքին Խնձորեսկ	6.24	266
				7	Շուռնուխ	7	Շուռնուխ	23.44	142
				8	Աղբյուր				
				9	Զորակ				
				10	Վանանդ				
				11	Որոտան	8	Որոտան	3.26	301
				12	Վերիշեն	9	Վերիշեն	47.62	2126
				13	Քարահունջ	10	Քարահունջ	19.69	1351
Ընդամենը				13		10	319.69	28,611	
7	Սյունիք	Մեղրի, /Մեղրի/, (18.09.2016)	660.66	1	Մեղրի	1	Մեղրի	32.01	4542
				2	Ագարակ	2	Ագարակ	3.26	4284
				3	Ավանք	3	Ավանք	85.99	293
				4	Գուղեմևիս	4	Գուղեմևիս	14.07	35
				5	Լեվիհազ	5	Լեվիհազ	33.85	644
				6	Լիճք	6	Լիճք	84.11	114
				7	Կարճևան	7	Կարճևան	41.80	226
				8	Կուրիս	8	Կուրիս	20.13	46
				9	Նռնածոր	9	Նռնածոր	117.73	144
				10	Շվանիծոր	10	Շվանիծոր	51.84	278
				11	Վահրավար	11	Վահրավար	32.49	35
				12	Վարդանիծոր	12	Վարդանիծոր	93.12	296
				13	Այգեծոր				
				14	Թխկուտ				
				15	Տաշտուն	13	Տաշտուն	50.26	100
Ընդամենը				15		13	660.66	11,037	
8	Սյունիք	Գորայք, /Գորայք/, (18.09.2016)	490.95	1	Գորայք	1	Գորայք	216.84	493
				2	Շղուկ	2	Շղուկ	104.15	373
				3	Սառնակունք	3	Սառնակունք	120.51	504
				4	Սպանդարյան	4	Սպանդարյան	49.45	452
Ընդամենը				4		4	490.95	1,822	
9	Սյունիք	Տեղ, /Տեղ/, (18.09.2016)	157.30	1	Տեղ	1	Տեղ	38.67	2287
				2	Արավուս	2	Արավուս	4.43	186
				3	Խնածախ	3	Խնածախ	32.37	854
				4	Խոզնավար	4	Խոզնավար	21.21	400
				5	Կոռնիծոր	5	Կոռնիծոր	24.17	1040
				6	Վարդատուր	6	Վարդատուր	22.75	398
				7	Քարաշեն	7	Քարաշեն	13.70	494
Ընդամենը				7		7	157.30	5,659	

10	Վայոց ձոր	Վայք, /Վայք/, (02.10.2016)	183.99	1	Վայք	1	Վայք	9.26	5702
				2	Ազատեկ	2	Ազատեկ	66.86	582
				3	Հորադիս				328
				4	Արին	3	Արին	60.56	166
				5	Չեղեա	4	Չեղեա	28.02	
				6	Փոռ	5	Փոռ	19.29	112
Ընդամենը				6		5	183.99	6,890	
11	Վայոց ձոր	Զերմուկ, /Զերմուկ/, (02.10.2016)		1	Զերմուկ	1	Զերմուկ	137.37	5350
				2	Կեչուտ	2	Ղոնեվազ	61.52	776
				3	Ղոնեվազ				
				4	Կարմրաշեն	3	Կարմրաշեն	142.34	255
				5	Հերիեր	4	Հերիեր	155.49	772
				Ընդամենը				5	
12	Վայոց ձոր	Չառիթափ, /Չառիթափ/, (02.10.2016)	468.74	1	Չառիթափ	1	Չառիթափ	53.30	1515
				2	Արտավան	2	Արտավան	72.78	256
				3	Սարավան	3	Սարավան	77.86	308
				4	Ուղեծոր				
				5	Խնձորուտ	4	Խնձորուտ	66.48	520
				6	Նոր Ազնաբերդ	5	Նոր Ազնաբերդ	15.44	148
				7	Բարձրուկ	6	Բարձրուկ	29.82	392
				8	Սերս	7	Սերս	36.29	192
				9	Մարտիրոս	8	Մարտիրոս	57.08	599
				10	Գոմբ	9	Գոմբ	59.69	241
				11	Ախտա				
				12	Կապույտ				
Ընդամենը				12		9	468.74	4,171	
13	Տավուշ	Նոյեմբերյան, /Նոյեմբերյան/, (18.09.2016)	338.03	1	Նոյեմբերյան	1	Նոյեմբերյան	26.88	4930
				2	Բաղանիս	2	Բաղանիս	23.85	856
				3	Բարեկամավան	3	Բարեկամավան	19.77	232
				4	Դուվեղ	4	Դուվեղ	19.38	538
				5	Կոթի	5	Կոթի	50.12	2020
				6	Ոսկեպար	6	Ոսկեպար	63.95	836
				7	Ոսկեվան	7	Ոսկեվան	27.91	1398
				8	Զուլջևան	8	Զուլջևան	66.48	554
				9	Բերդավան	9	Բերդավան	39.69	3265
Ընդամենը				9		9	338.03	14,629	
14	Տավուշ	Այրում, /Այրում/, (18.09.2016)	94.20	1	Այրում	1	Այրում	1.63	1957
				2	Արճիս	2	Արճիս	19.04	1128
				3	Բագրատաշեն	3	Բագրատաշեն	22.91	2775
				4	Դեբեդավան	4	Դեբեդավան	7.87	599
				5	Դեղձավան	5	Դեղձավան	6.26	293
				6	Լճկածոր	6	Լճկածոր	14.18	432
				7	Հաղթանակ	7	Հաղթանակ	16.60	1301
				8	Պտղավան	8	Պտղավան	5.71	841
Ընդամենը				8		8	94.20	9,326	
15	Տավուշ	Կողբ, /Կողբ/, (18.09.2016)	135.09	Կողբ	Կողբ	Կողբ	111.94	4554	
				Չորական	Չորական	Չորական	23.15	916	
Ընդամենը				2		2	135.09	5,470	
ԸՆԴԱՄԵՆԸ				135		118	4,942.53	118,145	

* Համաձայն «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի

** Աղբյուրը՝ ՀՀ վարչատարածքային բաժանման տեղեկատու, Երևան 2012, «Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ

*** Աղբյուրը՝ ՀՀ մարզերի և Երևան քաղաքը թվերով, 2016, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն

Հավելված 4

Եվրոպական երկրների տարածք, բնակչությունը և տեղական ինքնակառավարման միավորները

(2016 թվականի դրությամբ)

Երկիրը	Ընդհանուր տարածքը /կմ ² /	Ընդհանուր բնակչությունը /մարդ/	Տեղական ինքնակառավարման միավորների քանակը	Մեկ տեղական ինքնակառավարման միավորին բաժին ընկնող տարածքը /կմ ² /	Մեկ տեղական ինքնակառավարման միավորին բաժին ընկնող բնակչությունը /մարդ/
0 Հայաստան	29,743	2,986,100	793	38	3,766
1 Ալբանիա	28,748	3,185,000	61	471	52,213
2 Ավստրիա	83,879	8,507,786	2,100	40	4,051
3 Բելգիա	30,528	11,203,992	589	52	19,022
4 Բոսնիա և Հերցեգովինա	51,209	3,825,000	145	353	26,379
5 Բուլղարիա	111,002	7,245,677	265	419	27,342
6 Գերմանիա	357,340	80,780,000	11,313	32	7,140
7 Դանիա	42,921	5,627,235	98	438	57,421
8 Էստոնիա	45,227	1,315,819	213	212	6,178
9 Թուրքիա	783,562	75,837,000	19,695	40	3,851
10 Իռլանդիա	69,797	4,604,029	126	554	36,540
11 Իսպանիա	103,000	333,000	74	1,392	4,500
12 Իսպանիա	505,970	46,507,760	8,176	62	5,688
13 Իսրայել	22,072	7,822,000	260	85	30,085
14 Իտալիա	302,073	60,782,668	8,006	38	7,592
15 Լատվիա	64,573	2,001,468	119	543	16,819
16 Լեհաստան	312,679	38,495,659	2,479	126	15,529
17 Լիտվա	65,300	2,943,472	60	1,088	49,058
18 Լյուքսեմբուրգ	2,586	549,680	105	25	5,235
19 Խորվաթիա	56,594	4,246,700	555	102	7,652
20 Կիպրոս	9,251	858,000	380	24	2,258
21 Կոսովո	10,908	1,859,203	1,323	8	1,405
22 Հունաստան	131,957	10,992,589	325	406	33,823
23 Հունգարիա	93,024	9,873,000	3,201	29	3,084
24 Մալտա	316	425,384	68	5	6,256
25 Մակեդոնիա	25,713	2,108,000	82	314	25,707
27 Մոլդովա	33,846	3,461,000	1,679	20	2,061
28 Մոնտենեգրո	13,812	622,000	23	601	27,043
29 Նիդերլանդներ	41,540	16,829,289	390	107	43,152
30 Նորվեգիա	32,387	5,092,000	428	76	11,897
31 Շվեդիա	438,574	9,644,864	290	1,512	33,258
32 Շվեյցարիա	41,285	8,211,700	2,324	18	3,533
33 Ուկրաինա	603,500	44,941,000	10,885	55	4,129
34 Չեխիա	78,867	10,512,419	6,258	13	1,680
35 Պորտուգալիա	92,225	10,427,301	3,400	27	3,067
36 Ռուսիա	238,391	19,942,642	3,181	75	6,269
37 Սերբիա	88,361	9,468,000	174	508	54,414
38 Սլովակիա	49,035	5,415,949	2,930	17	1,848
39 Սլովենիա	20,273	2,061,085	212	96	9,722
40 Վրաստան	69,700	4,323,000	72	968	60,042
41 Ֆինլանդիա	338,435	5,451,270	313	1,081	17,416
42 Ֆրանսիա	632,834	65,856,609	36,658	17	1,797

* Աղբյուրը՝ The Council of European Municipalities and Regions (CEMR)

Հասցեի է՝ http://www.ccre.org/img/uploads/piecesjointe/filename/CEMR_structures_and_competences_2016_EN.pdf

Հավելված 5

«Համայնքների միություններ» և «միջհամայնքային միավորումներ» իրավաբանական անձանց միությունները և դրանց հիմնադիր համայնքները (2017թ հունվարի 1-ի դրությամբ)

Մարզերը	«Համայնքների միություններ» և «միջհամայնքային միավորումներ» իրավաբանական անձանց միությունների անունները, գրանցման տարեթվերը	Հիմնադիր համայնքները	
1	Արագածոտն	1.«ՍՈՒՇ» միջհամայնքային միավորում» համայնքների միություն ԻԱՄ -գր.օր՝ 21.10.2004թ.	Արագած, Ծաղկաշեն, Արայի, Ակնա, Եղիաատրուշ
2		2.«ՊՐԱՐԱՆ միջհամայնքային միավորում» համայնքների միություն ԻԱՄ-գր.օր՝ 24.09.2004թ.	Ապարան, Սարալանջ, Մուլքի,Նիգալան, Լուսազյուղ
3	Արարատ	«ԱՐԱՐԱՏ միջհամայնքային միավորում» համայնքների միություն ԻԱՄ -գր.օր՝ 13.09.2004թ.	Արարատ քաղաքային, Երասխ, Արմաշ, Պարույր Սևակ
4		«ՎԵՂԻ միջհամայնքային միավորում» համայնքների միություն ԻԱՄ -գր.օր՝ 07.07.2004թ.	Վեդի, Այգավան, Արալեզ, Գոռավան, Դաշտաքար, Եղեգնաձոր, Լուսառատ, Նոյակերտ, Նոր Կյանք, Նոր ուղի, Ոսկետափ, Սիսավան, Սուրենավան, Բանավան, Փոքր Վեդի, Շաղափ
5		«ԱՐԱՐԱՏԻ համայնքների միություն» ԻԱՄ-գր.օր՝ 17.03.2003թ.	Վեդի, Դաշտաքար, Ուրցածոր, Ավշար, Տափերավան, Նոր ուղի, Նոյակերտ, Եղեգնավան
6		«ՎԵՂԻ» համայնքների միություն ԻԱՄ-գր.օր՝ 05.10.2001թ.	Վեդի, Այգևան, Արալեզ, Գոռավան, Դաշտաքար, Եղեգնավան, Լուսառատ, Նոր-Կյանք, Նոր-Ուղի, Ոսկեփանի, Սիսավան, Վեդու գ/գ բանավան, Տափերավան, Ուրցածոր, Փոքր Վեդի Շաղափ
7		«ՀԱՅԱՆԻՍ միջհամայնքային միավորում» համայնքների միություն ԻԱՄ-05.10.2001թ.	Հայանիստ, Հովնաշատ, Դուկասավան, Արգավան, Դարակերտ, Նորաբաց, Դաշտավան, Սիփանիկ, Ջորակ, Դարբնիկ,Արբաթ, Խաչիար, Ազատաշեն, Գեղանիստ, Գետափյա
	Արմավիր	-	-
8	Գեղարքունիք	«ՎԱՐԴԵՆԻՍԻ տարածաշրջանի միջհամայնքային միավորում» համայնքների միություն ԻԱՄ -գր.օր՝ 09.0702010թ.	Վարդենիս, Ակունք, Ծովակ, Խաչաղյուր, Լուսակունք, Նորաբակ, Տրետուք, Ջաղացածոր, Ագատ« Շառվան, Մ.Մարտիրի, Ավգան, Գեղամասար, Արեգունի, Փամբակ, Արիունք, Սոթք, Շատրոնք, Գեղաքար, Մաջենիս, Կախակ, Կուտական, Ախարածոր, Վերին Շորժա, Տորֆավան, Ծափաթաղ
9		«ՍԵՎԱՆ միջհամայնքային միավորում» համայնքների միություն ԻԱՄ-գր.օր՝ 28-09-2009թ.	Դոմաշեն, Ծաղկունք, Վարսեր, Լճաշեն, Ծովագյուղ, Չկալովկա, Նորաշեն, Սեմյոնովկա
10		«ԳԵՂԱՄԱՏ» միջհամայնքային միավորում համայնքների միություն ԻԱՄ - գր.օր՝ 20.12.2005թ.	Սարուխան, Նորատուս, Գանձակ, Կանախ, Ծովագար, Լճափ, Բերդկունք, Գեղարքունիք, Ծաղկաշեն
11		«ՄԱՐՏՈՒՆԻ միջհամայնքային միավորում» համայնքների միություն ԻԱՄ - գր.օր՝ 13.12.2004թ.	Մարտունի, Երանոս, Վարդանոր, Ջորագյուղ, Ծակքար, Թագազյուղ, Լիճք, Ներքին Գետաշեն, Վերին Գետաշեն, Մաղիան, Գեղիովիտ, Վաղաշեն, Աստղածոր, Չոլաքար, Վարդենիկ, Ծովիկար, Արծալախատ
12	Լոռի	«ԳՈՒԳԱՐՔ միջհամայնքային միավորում» համայնքների միություն ԻԱՄ -գր.օր՝ 10-09-2004թ.	Ազնվածոր, Անտառաշեն, Արջուտ, Բազուն, Գուգարք, Եղեգնուտ, Լեռնոտուկ, Վախանգի, Փամբակ, Զարաբերդ
13		«ԹՈՒՄԱՆՅԱՆ միջհամայնքային միավորում» համայնքների միություն ԻԱՄ-գր.օր՝ 08-09-2004թ.	Ախթալա, Հազվի,Ճոճկան, Արվի, Դսեղ, Թեղուտ, Զարկուփ, Կաճաճկուտ, Մեծ Այրում, Զարինք, Այգեհատ, Շամլուղ, Մարց, Մղաթք, Օձուն, Շնոր, Արևածագ, Այրի
14		«ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ միջհամայնքային միավորում» համայնքների միություն ԻԱՄ-գր.օր՝ 09-09-2004թ.	Հոբարձու, Ուրասար, Յարդան, Լեջան, Գյուլագարակ, Ավերդով, Դուշկինո, Բովածոր, Կուրթան, Գարգառ, Լոռի-Բերդ, Ուռուտ, Ամրակիթ, Վարդաբլուր
15	Կոտայք	«Հայաստանի համայնքների միություն» ԻԱՄ-գր.օր՝ 07.09.2009թ.	Կապան, Գորիս, Քաջարան, Հարազդան, Եղվարդ , Կարենիս, Առինք, Ապարան, Աշտարակ, Թալին, Արագած, Մասիս, Արուշատ, Միսյան, Գավառ, Սևան, Վարդենիս, Էջմիածին, Արմավիր, Փարաքար, Գյումրի, Արթիկ, Մարալիկ, Ախուրյան, Նոր Կյանք, Սերդաշեն, Եղեգնաձոր, Վաթք, Ջերմուկ, Իջևան, Դիլիջան, Նոյեմբերյան, Կոթի, Վանածոր, Սափուակ, Տաշիր, Ավաերդի, Թումանյան, Լեռնապատ, Չարենցավան

16	Շիրակ	«ԱՆՈՒՐՅԱՆՆԻ միջհամայնքային միավորում» ԻԱՄ գր.օր՝ 13.04.2012	Ախուրյան, Կառնուտ, Ջրառատ, Արևիկ, Բասեն, Կամո, Հովիտ, Ջաջուռ
17	Սյունիք	«ԿԱՊԱՆԻ համայնքների միություն» ԻԱՄ-գր.օր՝ 18.12.2000թ.	թվով 29 համայնք
18		«ՍԻՍԻԱՆԻ համայնքների միություն» ԻԱՄ-գր.օր՝ 23.11.2000թ.	Ախլաթյան, Աղիտու, Անգեղակոթ, Աշոտական, Արևիս, Բալաք, Բնունիս, Գետաթաղ, Գորայք, Դարբաս, Թանահատ, Թասիկ, Լճեն, Լոր, Հագավան, Իշխանասար, Լորավան, Շաղաթ, Շաքի, Շենաթաղ, Որոտան, Սավվարդ, Նժդեհ, Վաղատին, Տորոս, Տորունիք, Ույծ
19		«ՄԵՂՐՈՒԲ համայնքների միություն» ԻԱՄ-գր.օր.16.11.2000թ.	Մեղրի, Ագարակ, Ավանք, Գուրեմնիս, Լեվիազ, Լիճք, Կարճևան, Կուրիս, Նռնածոր, Շվանիձոր, Վահրավար, Վարդանիձոր, Տաշտուն
20		«ԳՈՐԻՍԻ համայնքների միություն» ԻԱՄ-գր.օր՝ 29.11.2000թ.	Գորիս, Ալմեր, Ն.Խնձորենկ, Զարաշեն, Հարժիս, Կոռնիձոր, Խնձորենկ, Խոտ, Զարահունջ, Արավուս, Տեղ, Խոզկավար, Հարթաշեն, Վերիշեն, Շինուհայր, Հալիձոր
Վայոց Ձոր		-	-
21	Տավուշ	«ՆՈՅՆԵՄԲԵՐՅԱՆԻ համայնքների միություն» ԻԱՄ-գր.օր՝ 02.07.2002թ.	Նոյեմբերյան, Ջուջևան, Դովեղ, Դեղձական, Դեբեդավան, Դտղավան, Ոսկեպար, Ոսկևան, Բարեկամական, Արճիս, Լճկաձոր, Բաղանիս, Չորական, Այրում, Կոթի, Կողք, Հաղթանակ
22		«ԴԻԼԻՋԱՆԻ համայնքների միություն» ԻԱՄ- գր.օր՝ 22.04.2003թ	Դիլիջան, Հաղարծին, Թեղուտ, Գոշ, Աղավնականք, Հովք, Խաչարձան
23		«ԲԵՐԴԻ համայնքների միություն» ԻԱՄ-գր.օր-04.02.2003թ.	Բերդ, Չինչին, Թովուզ, Ն.Կարմիրաղբյուր, Վ.Կարմիրաղբյուր, Մովսես, Նորաշեն, Չորաթան, Արծվաբերդ, Այգեձոր, Չինար, Նավուր, Իծաքար, Վ.Ծաղկական, Վարազական, Դառավաքար, Այգեպա
24		«ԻՋԵՎԱՆԻ տարածաշրջանի համայնքների միություն» ԻԱՄ-գր.օր- 26.03.2003թ.	Ազատամուտ, Կիրանցի, Ալևաղբյուր, Աճարկուտի, Բերքբեր,Դիտական, Սևքար, Սարիգյուղ, Ն.Ծաղկական, Այգեհովիտ, Խաչթառակ, Լուսահովիտ, Ենոքական, Գանձաքար, Հովք, Լուսածոր, Գեղահովիտ, Վազաշեն

Հավելված 6

2014-2016թթ. ՀՀ համախմբված բյուջեների բաղկացուցիչ մասերի փաստացի կատարողականները և նրանց տեսակարար կշիռները համախմբված բյուջեներում*

Հ /հ	Բյուջեի տեսակը	2014թ. փաստացի, մլրդ դրամ	Տեսակարար կշիռը 2014թ. Համախմբված բյուջեում, %	2015թ. փաստացի, մլրդ դրամ	Տեսակարար կշիռը 2015թ. Համախմբված բյուջեում, %	2016թ. փաստացի, մլրդ դրամ	Տեսակարար կշիռը 2016թ. Համախմբված բյուջեում, %
	Համախմբված բյուջե (1)						
	Եկամուտներ	1,178.2	100.0	1,201.7	100.0	1,205.8	100.0
	Ծախսեր	1,268.8	100.0	1,444.0	100.0	1,485.3	100.0
	Դեֆիցիտ (-) այդ թվում՝	-90.6	100.0	-242.3	100.0	-279.5	100.0
1.	Պետական բյուջե						
	Եկամուտներ	1,144.7	97.2	1,167.7	97.2	1,171.1	97.1
	Ծախսեր	1,235.1	97.3	1,409.0	97.6	1,449.0	97.6
	Դեֆիցիտ (-)	-90.3	99.7	-241.3	99.6	-278.0	99.5
2.	Համայնքային բյուջեներ						
	Եկամուտներ	114.3	9.7	128.2	10.7	128.6	10.7
	Ծախսեր	114.6	9.0	129.2	8.9	130.2	8.8
	Պրոֆիցիտ (+) / դեֆիցիտ (-)	-0.3	0.3	-1.0	0.4	-1.5	0.5

*) Աղբյուրը՝ <http://www.minfin.am/index.php?cat=76&lang=1>

1. Համախմբված բյուջեի եկամուտներում, ծախսերում և պրոֆիցիտում / դեֆիցիտում ներառված չեն միջբյուջետային փոխանցումներից ստացվող մուտքերը և ելքերը:

Հավելված 7

Տեղական ինքնակառավարման տարեկան ինդեքսի (ՏԻՏԻ) գնահատման արդյունքները (2015թ. և 2016թ.)

Հh	ՏԻ բնագավառը, գործառույթը, ցուցիչը	2015թ. գնահատականը	2016թ. գնահատականը
1.	Տեղական ինքնակառավարման բարեփոխումներ		
1.1	Բարեփոխումների իրավական և ծրագրային գնահատում		
1	ՏԻ բնագավառի օրենսդրության համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը (սահմանադրական դրույթների իրավակիրառության աստիճանը ՀՀ օրենսդրությունում), %	7	6
2	ՏԻ բնագավառի օրենսդրության համապատասխանությունը ՏԻ եվրոպական խարտիային (ՏԻԵՄ-ի դրույթների իրավակիրառության աստիճանը ՀՀ օրենսդրությունում), %	6	7
3	ՏԻ բնագավառում ՀՀ կառավարության հեռանկարային և միջնաժամկետ ծրագրերով նախատեսված պարտավորությունների իրականացման մակարդակը, %	7	8
4	ՏԻ բնագավառի պետական լիազոր մարմնի՝ ՀՀ ՏԿԶՆ տարեկան ծրագրերով նախատեսված ծրագրերի, միջոցառումների իրականացման մակարդակը, %	8	8
1.2	Արտաքին պարտավորությունների կատարում		
5	ՏԻ բնագավառում Եվրոպայի խորհրդի, ԵԽ Տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի առջև Հայաստանի ստանձնած պարտավորությունների իրականացման մակարդակը, %	6	7
1.3	Վարչատարածքային բարեփոխումներ		
6	ՀՀ մեկ համայնքի (ստանց Երևանի) բնակչության միջին թիվը, մարդ	4	4
7	ՀՀ մեկ համայնքի վարչական տարածքի միջին չափը, կմ ²	4	4
1.4	Միջհամայնքային համագործակցություն		
8	Միջհամայնքային համագործակցության կառույցներում ընդգրկված համայնքների տեսակարար կշիռը ՀՀ համայնքների ընդհանուր թվի մեջ, %	5	5
9	Կամավոր հիմունքներով ձևավորված միջհամայնքային միավորումների կազմում ընդգրկված համայնքների միջին թիվը, համայնք	0	0
10	Օրենքով ձևավորված միջհամայնքային միավորումների կազմում ընդգրկված համայնքների միջին թիվը, համայնք	0	0
	1-ին բնագավառի ցուցիչների գնահատականների միջինը	4.7	4.9
2.	Համայնքի սեփականություն, զարգացման ծրագրեր և ֆինանսներ		
2.1	Համայնքի սեփականության գույք		
11	ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում, %	3	2

12	«Համայնքների (առանց Երևանի) բյուջեների ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում, %	3	3
2.2	Համայնքի զարգացման ծրագրեր և բյուջե (պլանավորում և բյուջետավորում)		
	-		
2.3	Համայնքի բյուջետային եկամուտներ		
13	«Համայնքների բյուջեների եկամուտների հանրագումարի տեսակարար կշիռը ՀՀ համախմբված բյուջեի ընդհանուր եկամուտներում, %	4	4
14	«Համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների եկամուտների հանրագումարի փաստացի կատարումը հաստատված պլանի նկատմամբ, %	10	9
15	«Համայնքների (առանց Երևանի) բյուջեների եկամուտների հանրագումարի փաստացի կատարումը հաստատված պլանի նկատմամբ, %	10	10
16	«Համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով, ԱՄՆ դոլար	2	2
17	«Համայնքների (առանց Երևանի) բյուջեների փաստացի եկամուտը մեկ շնչի հաշվով, ԱՄՆ դոլար	2	2
18	«Համայնքների բյուջեների սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ (համայնքների ֆինանսական անկախությունը կամ ինքնուրույնությունը), %	3	3
2.4	Փոխառու միջոցներ (պարտքի կառավարում)		
19	«Համայնքների բյուջեների փոխառվածությունների տեսակարար կշիռն ընդհանուր մուտքերում, %	0	0
20	«Համայնքների բյուջեների վարկերի տեսակարար կշիռն ընդհանուր մուտքերում, %	0	0
2.5	ՏԻՄ-երի լիազորությունների և ֆինանսների համապատասխանություն		
21	«Համայնքների բյուջեների ծախսերի հանրագումարի տեսակարար կշիռը ՀՀ համախմբված բյուջեի ընդհանուր ծախսերում, %	3	3
22	Համայնքների բյուջեների ծախսերի հանրագումարի տեսակարար կշիռը երկրի ՀՆԱ-ում, %	3	3
23	«Համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների ծախսերի հանրագումարի փաստացի կատարումը հաստատված պլանի նկատմամբ, %	10	8
24	«Համայնքների (առանց Երևանի) բյուջեների ծախսերի հանրագումարի փաստացի կատարումը հաստատված պլանի նկատմամբ, %	7	7
25	«Համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով, ԱՄՆ դոլար	3	3
26	«Համայնքների (առանց Երևանի) բյուջեների փաստացի ծախսը մեկ շնչի հաշվով, ԱՄՆ դոլար	2	2
27	Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերի տեսակարար կշիռը ՀՀ համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեների ընդհանուր ծախսերում, %	6	6
28	Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների ծախսերի տեսակարար կշիռը ՀՀ համայնքների (առանց Երևանի) բյուջեների ընդհանուր ծախսերում, %	2	2
	2-րդ բնագավառի ցուցիչների գնահատականների միջինը	4.1	3.8

3. Տեղական ժողովրդավարություն			
3.1 Ընտրական գործընթացի ժողովրդավարացում			
29	«Համայնքների ընդհանուր թվի մեջ այն համայնքների տեսակարար կշիռը, որտեղ համայնքի ավագանու ընտրություններն անց են կացվում համամասնական ընտրակարգով, %»	1	1
30	«Հրակցության ընդհանուր թվում այն համայնքների բնակիչների ընդհանուր թվի տեսակարար կշիռը, որտեղ համայնքի ավագանու ընտրություններն անց են կացվում համամասնական ընտրակարգով, %»	4	5
31	Տվյալ տարվա ընթացքում ուղղակի ընտրակարգով կայացած համայնքի ղեկավարի ընտրությունների ժամանակ 2-ից ավելի թեկնածուներ առաջադրած համայնքների տեսակարար կշիռն այդ համայնքների ընդհանուր թվի մեջ, %»	6	6
32	Տվյալ տարվա ընթացքում կայացած ՏԻՄ-երի ընտրությունների ժամանակ բնակիչների մասնակցության միջին մակարդակը, %»	6	6
3.2 Հանրային մասնակցություն			
33	Համայնքի բյուջեի նախագծի հանրային քննարկումներ/լուծումներ կազմակերպած և անցկացրած համայնքների տեսակարար կշիռը «Համայնքների ընդհանուր թվի մեջ, %»	6	6
34	Պաշտոնական համացանցային կայք ունեցող համայնքների տեսակարար կշիռը «Համայնքների ընդհանուր թվի մեջ, %»	2	2
35	Համայնքի ղեկավարին կից գործող ԽՄ-ներ ձևավորած՝ առնվազն 5000 բնակիչ ունեցող համայնքների տեսակարար կշիռը «Համայնքների ընդհանուր թվի մեջ, %»	5	5
3.3 Ֆինանսական հաշվետվողականություն			
36	Համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության նախագծի հանրային քննարկումներ/լուծումներ կազմակերպած և անցկացրած՝ առնվազն 5000 բնակիչ ունեցող համայնքների տեսակարար կշիռը «Համայնքների ընդհանուր թվի մեջ, %»	1	1
3-րդ բնագավառի ցուցիչների գնահատականների միջինը		3.9	4.0
4. Համայնքի կառավարում			
4.1 Մարդկային ռեսուրսների կառավարում և կարողությունների զարգացում			
37	Բարձրագույն կրթությամբ համայնքների ղեկավարների տեսակարար կշիռն՝ ընդհանուրի մեջ, %»	6	6
38	ՀԿՏ ունեցող համայնքների տեսակարար կշիռն՝ ընդհանուրի մեջ, %»	6	6
4.2 Համայնքային ծառայություն			
39	Համայնքների (առանց Երևանի) աշխատակազմերում համայնքային ծառայության հաստատված պաշտոնների թվի տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվի մեջ, %»	5	4
40	Վերջին տարվա ընթացքում վերապատրաստված համայնքային ծառայողների տեսակարար կշիռը նրանց ընդհանուր թվի մեջ, %»	6	3
4.3 Միջազգային աջակցություն			
-			
4-րդ բնագավառի ցուցիչների գնահատականների միջինը		5.8	4.8

5.	Համայնքային (հանրային բնույթի) ծառայությունների մատուցում		
5.1	Սոցիալական ուղղվածություն ունեցող ծառայություններ (կրթություն, մշակույթ, առողջապահություն, սպորտ, սոցիալական պաշտպանություն և այլն)		
41	Նախադպրոցական կրթության ծառայություն մատուցող համայնքների տեսակարար կշիռը համայնքների ընդհանուր թվի մեջ, %	4	4
42	Նախադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների տեսակարար կշիռը ՀՀ նախադպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվի մեջ, %	3	3
43	Համայնքների արտադպրոցական դաստիարակության ծառայություն մատուցող համայնքների տեսակարար կշիռը համայնքների ընդհանուր թվի մեջ, %	3	3
44	Համայնքների բյուջեներում Հանգիստ, մշակույթ և կրոն բնագավառի ընդհանուր ծախսերը՝ բնակչության մեկ շնչի հաշվով, ԱՄՆ դոլար	3	3
5.2	Քաղաքաշինական-կոմունալ ծառայություններ (քաղաքաշինություն, աղբահանություն, մաքրում, կանաչապատում, բարեկարգում, ներհամայնքային փողոցների և ճանապարհների պահպանում և շահագործում, ջրամատակարարում և ջրահեռացում, բնակելի և ոչ բնակելի տարածքների պահպանում, գերեզմանատների պահպանում և այլն)		
45	Համայնքի գլխավոր հատակագիծ ունեցող համայնքների տեսակարար կշիռը համայնքների ընդհանուր թվի մեջ, %	1	2
46	Աղբահանության ծառայություն մատուցող համայնքների տեսակարար կշիռը համայնքների ընդհանուր թվի մեջ, %	6	6
47	ՏԻՄ-երի կողմից ջրամատակարարման ծառայություն ստացող բնակավայրերի տեսակարար կշիռը ՀՀ բնակավայրերի ընդհանուր թվի մեջ, %	6	6
48	Ներհամայնքային փողոցային լուսավորության ծառայություն մատուցող համայնքների տեսակարար կշիռը համայնքների ընդհանուր թվի մեջ, %	7	8
49	Համայնքների (ներառյալ Երևանի) բյուջեներում Շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառի ընդհանուր ծախսերը՝ բնակչության մեկ շնչի հաշվով, ԱՄՆ դոլար	4	4
50	Համայնքների (առանց Երևանի) բյուջեներում Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայության բնագավառի ընդհանուր ծախսերը՝ բնակչության մեկ շնչի հաշվով, ԱՄՆ դոլար	2	2
5.3	Տնտեսական ուղղվածություն ունեցող ծառայություններ (ներհամայնքային հասարակական տրանսպորտ, առևտուր, ոռոգում, գյուղատնտեսական, այդ թվում անասնաբուժական և բուժասանիտարիայի ծառայություններ և այլն)		
51	Ներհամայնքային հասարակական տրանսպորտի ծառայություն մատուցող համայնքների տեսակարար կշիռը համայնքների ընդհանուր թվի մեջ, %	1	1
52	Համայնքների բյուջեներում Տնտեսական հարաբերությունների բնագավառի ընդհանուր ծախսերը՝ բնակչության մեկ շնչի հաշվով, ԱՄՆ դոլար	2	2
5.4	Համայնքային այլ ծառայություններ (քաղաքացիական կացության ակտերի գրանցում, բնապահպանական ծառայություններ և այլն)		
-			
	5-րդ բնագավառի ցուցիչների գնահատականների միջինը	3.5	3.7
	Տեղական ինքնակառավարման տարեկան ինդեքսը	4.40	4.24

**ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
(2016թ.)**

Գիրք 9

**LOCAL SELF-GOVERNMENT IN ARMENIA
(2016)**

Book 9

Խմբագրությամբ՝ տեխն. գիտ. թեկնածու
Վահրամ Շահբազյանի

Edited by **Vahram Shahbazyan**,
Ph.D. in Technical Sciences

Համակարգչային ձևավորումը՝
Լորա ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ

Չափսը՝ 70x100 1/16: Ծավալը՝ 15 տ. մամուլ:
Թուղթը և տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 500 օրինակ:

Տպագրվել է «ՎԱՆ ԱՐՅԱՆ» հրատարակչատան տպարանում